Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների

Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան

# Զեկույց

# Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և ընթացիկ գործունեության ուսումնասիրություն

Երևան, 2023

Սույն հետազոտությունն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի ֆինանսավորմամբ:
Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի տեսակետների հետ:

Զեկույցի հեղինակներն են Անահիտ Մկրտչյանը, Աննա Մելիքյանը:

Հետազոտությունն իրականացրել է Անահիտ Մկրտչյանը: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության գործընթացի մշտադիտարկումն իրականացրել է Աննա Մելիքյանը, տեղեկությունների հավաքագրմանը մասնակցել է Նինա Հակոբյանը: Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

# Բովանդակություն


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....8

ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ .....10

1. 1 Օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունումը .....10

ԳԼՈՒԽ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՆ ՈՐՊԵՍ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ .....13

2. 1 Հակակոռուպցիոն մարմնի մոդելները .....13

2. 2 Ինստիտուցիոնալ դիրքավորում և օրենսդրական հիմքեր .....15

2. 3 Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը .....18

2. 4 Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակը .....21

ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ .....22

3. 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ..22

3. 1. 1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհրդի ձևավորում .....23

3. 1. 2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջներ և մրցույթի ընթացակարգային հարցեր .....25

3. 1. 3 Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցույթի փուլեր և մշտադիտարկման արդյունքներ .....27

3. 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ .....32

3. 2. 1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորում .....33

3. 2. 2. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնի թեկնածուին ներկայացվող պահանջներ և մրցույթի ընթացակարգային հարցեր .....35

3. 2. 3 Մրցույթի փուլեր .....36

3. 2. 4 Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթի մշտադիտարկման արդյունքների ամփոփում .....38

3. 2. 5 Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համալրման մրցույթներն ու նշանակումները .....50

3. 3 ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ .....54

ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ/ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ .....56

4. 1 Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական պատրաստումը. .....56

4. 2 Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումները .....58

4. 3 Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց վերապատրաստումները .....62

ԳԼՈՒԽ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....64

5. 1 Ծառայողական քննություն/կարգապահական վարույթ իրականացնող և տույժ նշանակող մարմինը ..... 64
5. 2 Կարգապահական վարույթներին առնչվող օրենսդրական նախագծերը ..... 66
ԳԼՈՒԽ 6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՁԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ..... 71
ԳԼՈՒԽ 7. ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 73
ԳԼՈՒԽ 8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 78
ԳԼՈՒԽ 9. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ..... 81
9. 1 Պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին ֆինանսավորում ..... 81
9. 2 Հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիրը և տարածքային ստորաբաժանումները ..... 85
9. 3 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարձատրությունը ..... 87
9. 4 Հակակոռուպցիոն կոմիտեի դեպոզիտ հաշիվը ..... 92
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 93

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ԱԺ | Ազգային ժողով |
| ՊԵԿ | Պետական եկամուտների կոմիտե |
| ԱԱԾ | Ազգային անվտանգության ծառայություն |
| ՀԿԿ | Հակակոռուպցիոն կոմիտե |
| ՆԱՎ | Ներքին անվտանգության վարչություն |
| ՔԿ | Քննչական կոմիտե |
| ՀՔԾ | Հատուկ քննչական ծառայություն |
| ՄԻՊ | Մարդու իրավունքների պաշտպան |
| ԲԴԽ | Բարձրագույն դատական խորհուրդ |
| ՀՀ ԱՆ | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն |
| ՀՀ ԱԻՆ | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| ՏՀԶԿ (OECD) | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| ՄԻԵԴ | Մարդու իրավունքների եվրոպական դատարան |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կառույց |
| ԻՊԱՍ | «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն |
| ԹԻՀԿ | «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ |
| ՁԼՄ | Ձանգվածային լրատվության միջոցներ |
| ՄԺԾԾ | Միջնաժամկետ ծախսերի ծրագիր |
| ԵԱՀԿ | Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԵԽ | Եվրոպայի խորհուրդ |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում Կոռուպցիայի դեմ պայքարը՝ քաղաքականությունների և ռազմավարությունների մակարդակով տարվել է սկսած 2001թ. -ից: ՀՀ-ն ընդհանուր առմամբ ունեցել է հակակոռուպցիոն չորս ռազմավարություն՝ համապատասխան միջոցառումների ծրագրերով, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով նախատեսել են հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականացում, կատարելագործում, ինչպես նաև նոր մարմինների ստեղծում՝ խորհուրդ, հանձնաժողով, կոմիտե, դատարան և այլն: Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ նաև Կոմիտե) ստեղծումը կարելի է համարել 2018թ. -ին Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխության կարևոր արդյունքներից մեկը: Հակակոռուպցիոն Կոմիտեի, ինչպես նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մյուս մարմինների՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի[1], Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության և Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի վերաբերյալ դրույթներն ամրագրվել են ՀՀ հակակոռուպցիոն 2019-2022թթ. -ի ռազմավարությամբ[2]: Այս ռազմավարությամբ որպես խնդիր նախատեսվել է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը: Կոմիտեի վերաբերյալ դրույթներ են նախատեսվել նաև ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ-ի, ինչպես նաև 2022-2026թթ. -ի ռազմավարություններով՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումների, Կոմիտեի շենքային պայմանների բարելավման գործընթացի մասով:

Կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում նշենք, որ միջազգային ասպարեզում, որոշ պետություններում նախաձեռնվել է առանձին հակակոռուպցիոն համակարգի ստեղծումը: Այնուամենայնիվ, ընտրված համակարգերը տարբերվել են, և միշտ չէ, որ եղել են պատշաճ մշակված քաղաքականության արդյունք. հապճեպ ստեղծվել են առանձին մարմիններ, որոնց գործունեությունը չի համարվել արդյունավետ: Ընդհանուր առմամբ՝ ՏՀԶԿ/OECD երկրներից առանձնացնում են Սինգապուրի և Հոնգ Կոնգի փորձը՝ որպես առավել արդյունավետ արդյունք տվող համակարգեր: Այնուամենայնիվ, հակակոռուպցիոն համակարգի մեկ մոդել, որն ընդունելի կլինի բոլոր պետությունների համար, առկա չէ: Փորձագետների կարծիքները տարբերվում են առ այն, թե արդյոք առավել արդյունավետ է ստեղծել նոր մարմիններ և օժտել կոռուպցիայի դեմ պայքար իրականացնելու իրավասությամբ, թե ավելի ճիշտ է ուժեղացնել արդեն իսկ գործող մարմինները: Փորձագետներից ոմանք էլ կարծում են, որ հանրային կառավարման և/կամ դատական համակարգի ընդարձակ բարեփոխումները կարող են ավելի արդյունավետ լինել կոռուպցիայի դեմ պայքարի հարցում, քան որևէ մեկ հաստատություն հիմնադրելը[3]:

---

1 2019թ. -ի հունիսի 24-ին ՀՀ վարչապետի թիվ 808-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 2015թ. -ի փետրվարի 19-ին ՀՀ կառավարության թիվ 165-Ն որոշումը՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի մասին և ստեղծվել է նոր Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որի նպատակն ու լիազորությունները նույնն են, ինչ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդինը: Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որոնց ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում և հակակոռուպցիոն մոնիթորինգի anti-corruption.gov.am պլատֆորմում: Տե՛ս հետևյալ հղումները՝ https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/voroshumNrv098-new.pdf, https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/voroshum-971-N.pdf https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140927

2 Տե՛ս ՀՀ 2019-2022թթ.-ի հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168051

3 Տե՛ս Դատախազների միջազգային ասոցացիայի կողմից հրապարակված կոռուպցիայի դեմ պայքարի մոդելները՝ https://www.iap-association.org/NACP/Anti-Corruption-Models

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կարևոր է նաև ինստիտուտների տեսակներով պայմանավորված այլ պետությունների փորձը: Մասնավորապես, միջազգային փորձի շրջանակներում կարելի է առանձնացնել երեք մոտեցում.

**1. Բազմանպատակ հակակոռուպցիոն գործակալություններ.** նշված համակարգում մեկտեղված են կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող երեք խումբ գործառույթներ՝ կանխարգելում, քննություն և հանրային իրազեկում և կրթություն: Սույն մոտեցումը որդեգրել են Հոնգ Կոնգը, Սինգապուրը, Լիտվան, Լատվիան, Լեհաստանը և այլն:

**2. Իրավապահ մարմիններ.** նշված համակարգում ստեղծվում են մասնագիտացված իրավապահ մարմիններ, այդ թվում՝ մեկ մարմինը կարող է ունենալ հանցագործությունների բացահայտման, քննության և մեղադրանք ներկայացնելու գործառույթներ: Սույն մոդելը գործում է Նորվեգիայում, Բելգիայում, Ռումինիայում և այլ եվրոպական երկրներում:

**3. Կանխարգելման մարմիններ.** որոշ պետությունները ստեղծել են կոռուպցիայի կանխարգելման համակարգող խորհուրդներ, որոնք մշտապես գործող մարմին չեն և սովորաբար կազմված են իշխանության բոլոր ճյուղերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, օրինակ, Վրաստանում, Ալբանիայում և այլն; մշտապես գործող կոռուպցիայի կանխարգելման մարմիններ, օրինակ՝ Սլովենիայում, Սերբիայում և այլն[4]:

Մոդելի ընտրությունը պետք է հիմնված լինի իրավիճակի վերլուծության, գործող ինստիտուտների գնահատման և բացահայտված կարիքների և բացերի վրա: Այս համատեքստում կարևոր է համապարփակ ռազմավարության մշակումը և կատարումը, որը չպետք է ձևական բնույթ կրի՝ գոհացնելու դոնորներին կամ ընտրազանգվածին, այլ արդյունավետ շրջանակ ստեղծի բացահայտված խնդիրները լուծելու համար:

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետությունում՝ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոռուպցիայի կանխարգելումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և հակակոռուպցիոն կրթությունն ու իրազեկումը վերապահվել են 3 առանձին կառույցների: **Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը վերապահվել է մասնագիտացված դատահիրավական համակարգի մասը կազմող Հակակոռուպցիոն կոմիտեին՝** որպես կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթով և անկախության երաշխիքներով օժտված մասնագիտացված քննչական մարմին: 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվել են Կոմիտեին առնչվող միջոցառումներ համապատասխան ժամանակացույցով, ըստ որի՝




4 https://www.iap-association.org/NACP/Anti-Corruption-Models

Այսպես, սույն հետազոտությամբ անդրադարձ կկատարենք Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման անհրաժեշտության հիմնավորումներին և Կոմիտեին առնչվող ռազմավարական գործողությունների կատարման ընթացքին, ներառյալ՝ Կոմիտեի ստեղծման և Հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ ՀՔԾ) գործունեության դադարեցման հետ կապված օրենսդրական նախագծերի ընդունման խնդիրներին, Կոմիտեի կառուցվածքին և հաստիքացուցակին, քրեադատավարական նորմերի հաճախակի փոփոխություններին և քննչական ենթակայությանը վերաբերող խնդիրներին, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին և նրանց գործունեության երաշխիքներին, մասնավորապես զենք կրելու իրավունքին, Կոմիտեի նոր շենքային համալիրի կառուցման և տարածքային ստորաբաժանումների ստեղծման խնդիրներին, Կոմիտեի անկախության, հաշվետվողականության և թափանցիկության երաշխիքներին, Կոմիտեի ծառայողների, այդ թվում՝ Կոմիտեի նախագահի, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների մրցույթներին և նշանակումներին, մասնագիտական պատրաստմանը և վերապատրաստումներին, ինչպես նաև Կոմիտեի բյուջեին և Կոմիտեի ծառայողների վարձատրությանն առնչվող հարցերին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել նորաստեղծ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և գործունեության անկախության երաշխիքները, կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև վերաբերելի ռազմավարական փաստաթղթերի գործողությունների կատարման ընթացքը, արդյունքները՝ վեր հանելով առկա օրենսդրական և պրակտիկ խնդիրները և ներկայացնելով դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտությունը ներառում է մինչև 2022թ. -ի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում առկա տեղեկատվությունը, միաժամանակ որպես ի գիտություն հղումներ կատարելով ավելի ուշ երևան եկած հանգամանքներին:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է՝

- **Կոռուպցիոն ոլորտի ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն.** ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել ոլորտային կոնվենցիաները, արձանագրությունները, օրենսգրքերը, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, օրենքներում փոփոխություն կամ լրացում նախատեսող օրինագծերը, ռազմավարությունները, հայեցակարգերը, այդ թվում՝ Եվրոպայի Խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան[5], Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Կոռուպցիայի դեմ կոնվենցիան[6], Կոլոմբոյի մեկնաբանությունները՝ Ձակարտայի սկզբունքների արձանագրություն հակակոռուպցիոն մարմինների համար[7], Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային որոշումները[8], Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ)

5 Ընդունվել է 27.01.1999թ. , վավերացվել է ՀՀ կողմից՝ 09. 01. 2006թ. , ուժի մեջ է մտել 01.05.2006թ. , հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=29959

6 Ընդունվել է 31.10.2003թ. , վավերացվել է 08. 03. 2007թ. , ուժի մեջ է մտել 07.04.2007թ. , հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021

7 Տե՛ս Կոլոմբոյի մեկնաբանությունները՝ Ձակարտայի սկզբունքների արձանագրություն հակակոռուպցիոն մարմինների համար՝ https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/20-00107_Colombo_Commentary_Ebook.pdf

8 Տե՛ս օրինակ՝ Երեմիասովան և Պեչովան ընդդեմ Չեխիայի (Eremiasova and Pechova v. The Czech Republic) գործով ՄԻԵԴ վճիռը, no. 23944/04 (16 փետրվարի 2012), §§ 58, 154: Կումմերն ընդդեմ Չեխիայի (Kummer v. The Czech Republic), no. 32133/11 (25 հուլիս 2013), §§ 85-87: Նունես Դլասն ընդդեմ Պորտուգալիայի 69829/01 2672/03 գործով 10.04.2003թ. վճիռը, NUNES DIAS v. PORTUGAL, 69829/01 2672/03, 10.04.2003: Ձվոլսկին և Ձվոլսկան ընդդեմ Չեխիայի հանրապետության, թիվ 46129/99 գործով, 12.11.2002թ. վճիռը CASE OF ZVOLSKÝ AND ZVOLSKÁ v. THE CZECH REPUBLIC, 46129/99, 12.11.2002 և այլն:

Սահմանադրությունը[9], ՀՀ քրեական հին[10] և նոր[11] օրենսգրքերը, ՀՀ քրեական դատավարության հին[12] և նոր[13] օրենսգրքերը, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը[14], «Զենքի շրջանառության կարգավորման մասին ՀՀ օրենքը»15, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը[16], «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքը[17], «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը[18], «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքը[19], ՀՀ կառավարության որոշումները, այդ թվում՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ. -ի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին[20], ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. -ի[21] և 2022-2026թթ. -ի ռազմավարությունները[22] և դրանց իրականացման միջոցառումների ծրագրերը, ՀՀ կառավարության 2014-2025թթ. -ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը[23] և այլ իրավական փաստաթղթեր:

- **Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն.** ուսումնասիրվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ (OECD)) երկրների, այդ թվում՝ Սինգապուրի, Հոնգ Կոնգի, Լիտվայի, Լատվիայի, Լեհաստանի, Նորվեգիայի, Բելգիայի, Ռումինիայի, Չեխիայի, Սերբիայի, Վրաստանի, Ալբանիայի և այլ երկրների փորձը՝ հակակոռուպցիոն համակարգերի, հակակոռուպցիոն գործակալությունների, իրավապահ, ինչպես նաև կանխարգելման մարմինների գործունեության և այլ հարցերի համատեքստում:
- **Պետական կառույցների պաշտոնական և զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) կայքերի ուսումնասիրություն.** ուսումնասիրվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի[24], ՀՀ արդարադատության նախարարության[25], ՀՀ ֆինանսների նախարարության[26], ՀՀ ազգային ժողովի[27], ՀՀ կառավարության[28] պաշտոնական կայքերը,

---

9 Ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723
10 Ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ., ուժը կորցրել է 01.07.2022թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=155365
11 Ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ. ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080
12 Ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=166121
13 Ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ. ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176081
14 Ընդունվել է 24.03.2021թ., ուժի մեջ է մտել 23.10.2021թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172258
15 Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=169842
16 Ընդունվել է 21.03.2018թ., ուժի մեջ է մտել 07.04.2018թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=152139
17 Ընդունվել է 24.03.2021թ., ուժի մեջ է մտել 23.10.2021թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=151812
18 Ընդունվել է 23.03.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=170564
19 Ընդունվել է 02.05.2013թ., ուժի մեջ է մտել 01.09.2013 թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172511
20 Ընդունվել է 03.10.2019թ., ուժի մեջ է մտել 10.10.2019թ. ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168051
21 Ընդունվել է 10.10.2019թ., ուժի մեջ է մտել 26.10.2019թ. ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135487
22 Ընդունվել է 21.07.2022թ., ուժի մեջ է մտել 29.07.2022թ. ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582
23 Ընդունվել է 27.03.2014թ., ուժի մեջ է մտել 08.05.2014թ. ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=89968, https://www.gov.am/files/docs/1322.pdf
24 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքը՝ https://anticorruption.am/hy
25 Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքը՝ https://www.moj.am/page/583
26 Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuj/
27 Տե՛ս ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայքը՝ http://www.parliament.am/
28 Տե՛ս ՀՀ կառավարության պաշտոնական կայքը՝ https://www.gov.am/am/, https://www.e-gov.am/

իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը[29], Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքը[30] և այլն:

- **Մրցույթների մշտադիտարկում.** մշտադիտարկման են ենթարկվել 2021թ. -ի սեպտեմբերի 10-ին ՀՀ կառավարության շենքում անցկացված Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլը, ինչպես նաև Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2022թ. -ի օգոստոսի 18-ին անցկացված մրցույթի թեստավորման փուլը և 2022թ.-ի հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 3-ին անցկացված հարցազրույցների փուլերը:
- **Հարցումներ.** հարցումներ են ուղարկվել Հակակոռուպցիոն կոմիտեին՝ Կոմիտեի նախագահի հրամաններով հաստատված մի շարք իրավական ակտերի[31] ձեռքբերման, ինչպես նաև Կոմիտեի ծառայողներին կարգապահական պատասխանատվության և տույժի ենթարկելու, Կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութների, դրանց շրջանակներում դիտորդների ներգրավման կարգի վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով, ՀՀ արդարադատության ակադեմիային՝ Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումների, լրացուցիչ վերապատրաստումների և հատուկ ուսուցման ծրագրերի մասին տեղեկատվության ստացման նպատակով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ ԿԿՀ)՝ թեկնածուների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով, ինչպես նաև ՀՀ կառավարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը՝ կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմի վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

## ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

### 1. 1 Օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունումը

**«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում[32] փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը** օրենսդրական նախաձեռնության կարգով, Կառավարության կողմից Ազգային ժողով

29Տե՛ս իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը՝ https://www.e-draft.am/projects?q=%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6+%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5&in=all&start_date=&end_date=

30 Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքը՝ https://www.arlis.am/

31 Կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 01-Լ հրամանը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը, հաստիքացուցակը և անվանացանկը հաստատելու մասին, Կոմիտեի նախագահի 2022թ. -ի փետրվարի 4-ի N 02-Լ հրամանը՝ Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին, Կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 02-Լ հրամանը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին, Կոմիտեի նախագահի՝ 2021թ. -ի նոյեմբերի 16-ի թիվ 20-Լ հրամանը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին և այլն

32 «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ձենքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

(այսուհետ՝ ԱԺ) են ներկայացվել 2020թ. -ի դեկտեմբերի 4-ին[33]: Նշենք, որ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթում՝ դրա ԱԺ նստաշրջանի[34] և հերթական նիստերի օրակարգ[35] ընդգրկվելու, ինչպես նաև առաջին ընթերցմամբ ընդունվելու[36] փուլում չի եղել որևէ դրույթ ՀՔԾ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ[37]: Սակայն, 2021թ. -ի մարտի 19-ին՝ նախագծերի փաթեթի երկրորդ ընթերցումից ընդամենը 5 օր առաջ նախագծերի փաթեթը ենթարկվել է փոփոխության. Կառավարության կողմից՝ առանց նախապես հանրային քննարկման կազմակերպման և գրավոր հիմնավորման ներկայացման, օրենսդրական նախաձեռնության կարգով փաթեթի ներքո ԱԺ են ներկայացվել նաև **«Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» և հարակից օրենքներում[38] փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը**:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը կատարված լրացումներից և փոփոխություններից հետո չի ներկայացվել հանրային քննարկման: Մինչդեռ գործող իրավակարգավորումների համաձայն՝ **լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագծերը նույնպես հրապարակվում են և ներկայացվում հանրային քննարկման[39], իսկ հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է**[40]: Տվյալ դեպքում նախագծերի փաթեթը ոչ միայն չի ներկայացվել հանրային քննարկման սահմանված կարգով[41], այլև ԱԺ է ներկայացվել երկրորդ ընթերցումից ընդամենը 5 օր առաջ: Նշենք, որ մինչ 2021թ. -ը ՀՀ կառավարությունն առաջնորդվում էր իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներով[42], որոնք նախատեսում էին **կառավարության կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկում բոլոր այն դեպքերում, երբ 1) դեռևս առկա է միայն գաղափար իրավական ակտի նախագծի մշակման վերաբերյալ** (նախնական հանրային քննարկումներ), 2) **իրավական ակտը մշակման փուլում է** (միջանկյալ հանրային քննարկումներ) և 3) **առկա է իրավական ակտի մշակված նախագիծ** (ամփոփիչ հանրային քննարկումներ): Սակայն, այս որոշումը, ինչպես նաև մինչև 2022թ. -ի հունվարի 1-ը ՀՀ կառավարության կողմից ընդունված բոլոր արձանագրային որոշումները անվավեր են

33 Նախագծերի փաթեթը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից՝ իր 2020թ. -ի դեկտեմբերի 3-ին կայացած նիստի օրակարգում՝ չզեկուցվող նախագծերի շրջանակներում՝ https://www.e-gov.am/sessions/archive/2020/12/03/

34 Տե՛ս հետևյալ հղումը՝ http://parliament.am/register.php?do=lracum&ID=598

35 Տե՛ս հետևյալ հղումը՝ http://parliament.am/agenda.php?ID=598

36 Տե՛ս հետևյալ հղումը՝ http://parliament.am/register.php?ID=598#r9226

37 ՀՀ ԱԺ յոթերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի 2021թ. -ի հունվարի 18-ի և 19-ի հերթական նիստերի տեսաձայնագրությունները տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.youtube.com/watch?v=w-tbLYMSrc4, https://www.youtube.com/watch?v=dqFsQh_I6PU

38 «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը:

39 «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս, տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139&fbclid=IwAR0FsRRMVbP5WywaTZqlkpe2I0FoHsq8d0isU3QlCse4KCvep-GNsvQjByk

40 ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2018թ. -ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2010թ. -ի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշման 9-ից 11-րդ կետեր, տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=126002

41 Հանրային քննարկումներ իրականացվում են քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում

42 ՀՀ կառավարության 2012թ. -ի ապրիլի 5-ի N13 արձանագրային որոշում, տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-gov.am/protocols/item/159/

ճանաչվել ՀՀ կառավարության 2021թ. -ի հոկտեմբերի 21-ի N 1728-Ն որոշման 1-ին կետով: 2022թ. -ի հունվարի 1-ից կառավարության 2012թ. -ի ապրիլի 5-ի N 13 արձանագրային որոշումն այլևս չի գործել, իսկ նոր որոշում՝ նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին առնչվող չի ընդունվել և միակ իրավական հիմքը հանդիսացել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: Այսինքն, նախագծերի փաթեթի ներկայացման պահին կառավարության նշված արձանագրային որոշումը դեռևս գործողության մեջ է եղել և ենթակա է եղել կիրառման՝ մյուս բոլոր իրավական ակտերի հետ միաժամանակ:

Նշենք, որ ՀՔԾ գործունեությունը դադարեցնելու նախագիծ էր ներկայացվել ԱԺ-ին այն պայմաններում և այն ժամանակահատվածում, երբ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության 73-րդ կետով ուղղակիորեն նախատեսվել էր, որ ՀՔԾ կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչությունը պետք է վերակազմակերպվեր՝ կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները և գործիքակազմը տրամադրելով Կոմիտեին, ՀՔԾ-ն պետք է պահպաներ ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների (բացառությամբ կոռուպցիոն հանցագործությունների) նախաքննության իրականացման գործառույթը, ինչպես նաև Հակակառուպցիոն կոմիտեի ստեղծմանը հաջորդող 3 տարվա՝ անցումային շրջանի ընթացքում պետք է պահպաներ կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնելու հնարավորությունը, որպեսզի հնարավոր լինի անցումային շրջանում սահուն կերպով ապահովել Կոմիտեի կողմից գործերի քննության արդյունավետությունը: Մինչդեռ, ընդունված նախագծերի փաթեթը ոչ միայն չի բխել գործող հակակոռուպցիոն ռազմավարությունից, այլև խարխլել է քննչական մարմինների միջև փոխօգնության և համագործակցության տրամաբանությունը՝ նոր ստեղծված Հակակոռուպցիոն կոմիտեին զրկելով ՀՔԾ սպասվող աջակցությունից առաջիկա 3 տարիների ընթացքում, ինչպես նաև ստեղծելով մի շարք խնդիրներ օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում՝ կապված քննչական ենթակայության և այլ հարցերի հետ: Այս համատեքստում նշենք, որ ռազմավարությամբ նախատեսվել էր նաև Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) և Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից նախաքննություն կատարելու լիազորությունները դադարեցնել՝ ԱԱԾ քննչական մարմնի հաստիքները և գործիքակազմը համամասնորեն փոխանցելով ՀՔԾ-ին, Քննչական կոմիտեին և Հակակոռուպցիոն կոմիտեին, իսկ ՊԵԿ հանցագործությունների քննության համար նախատեսված քննիչների հաստիքները և գործիքակազմը՝ Քննչական կոմիտեին: Մինչդեռ, ՀՔԾ-ի լուծարման պայմաններում, 2024թ. -ի հունվարի 1-ից[43]՝ ԱԱԾ քննչական դեպարտամենտի և ՊԵԿ հարկային և մաքսային մարմիններում նախաքննություն իրականացնող ստորաբաժանումների գործունեությունը դադարեցնելուց հետո, գործերի ողջ ծավալն ու ծանրաբեռնվածությունը փաստացի բաշխվելու է միայն քննչական երկու մարմինների՝ Քննչական կոմիտեի և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև՝ Հակակոռուպցիոն կոմիտեի առանց այն էլ անբավարար ռեսուրսների պայմաններում:

Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտե ստեղծելու մասին օրենսդրական նախագծերի փաթեթը[44]՝ չնայած վերը նշված խնդիրներին, այնուամենայնիվ, ընդունվել է ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ 2021թ. -ի մարտի 24-ին և ստորագրվել ՀՀ նախագահի կողմից՝ 2021թ. -ի ապրիլի 17-ին[45]: Հատկանշական է, որ ԱԺ-ում օրենքի ընդունմանը կողմ են քվեարկել միայն մեծամասնություն կազմող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները՝ 80 կողմ ձայնով, իսկ ընդդիմությունը

43Տե՛ս նախագծի ընդունման պատմությունը՝ http://parliament.am/draft_history.php?id=13311, http://parliament.am/drafts.php?sel=approved&lang=arm

44 Տե՛ս ամբողջությամբ ընդունված նախագծերի ցանկը՝ http://parliament.am/drafts.php?show_session=7&seasonal_session=&AuthorType=-1&sel=approved

45 Տե՛ս նախագծի ընդունման պատմությունը՝ http://parliament.am/draft_history.php?id=12067

քվեարկել է դեմ՝ 37 ձայնով և ձեռնպահ՝ 3 ձայնով[46]: Արդյունքում, **«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021թ. -ի հոկտեմբերի 23-ին և նույն օրը մեկնարկել է Կոմիտեի գործունեությունը, իսկ ՀՔԾ-ն դադարել է գործել:**

Վերը նշվածը ցույց է տալիս, որ Հակակոռուպցիոն կոմիտե ստեղծելու նախաձեռնությունը ռազմավարության մշակման փուլում պատշաճ գնահատման չի արժանացել, չեն քննարկվել և գնահատվել այլընտրանքային տարբերակները՝ հիմնավորելու ընտրված տարբերակը: Արդյունքում, ինչպես կներկայացվի ստորև, Կառավարությունը ստիպված է եղել հետագայում մի քանի անգամ փոփոխել քննչական ենթակայության կանոնները, որի արդյունքում Հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայությանն են վերապահվել ոչ միայն կոռուպցիոն բնույթի, այլև ՀՔԾ-ից փոխանցված ոչ կոռուպցիոն բնույթի, օրինակ՝ բռնության գործադրմամբ պաշտոնեական լիազորությունների չարաշահման կամ անցման գործերի քննությունը: Միաժամանակ Կոմիտեի քննությունից դուրս է թողնվել «մասնավոր» կոռուպցիոն հանցագործությունների քննությունը: Այս և այլ զարգացումներն ուղղակիորեն շեղվել են ռազմավարությամբ ուրվագծված հիմնական նպատակներից և միջոցառումներից, ինչը վկայում է պատշաճ ռազմավարական պլանավորում չիրականացնելու մասին:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՆ ՈՐՊԵՍ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

### 2. 1 Հակակոռուպցիոն մարմնի մոդելները

Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, որի 36-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթները առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով»[47]: ՀՀ-ն վավերացրել է նաև ԵԽ կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի կոնվենցիան, որի 20-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան անհրաժեշտ անկախություն, այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնել արդյունավետորեն և առանց որևէ անհիմն ճնշման: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ»[48]:

ԵԽ կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ 20 սկզբունքներից մեկով նույնպես նշվում է, որ պետությունները պետք է խրախուսեն կոռուպցիայի դեմ պայքարող

46 Տե՛ս ՀՀ ԱԺ 23.03.2021թ. -ի, 24.03.2021թ. -ի և 25.03.2021թ. -ի նիստերի արձանագրությունը՝ http://www.parliament.am/register.php?AgendaID=604&day=24&month=03&year=2021&lang=#24.03.2021

47 Ընդունվել է 31.10.2003թ. , վավերացվել է 08. 03. 2007թ. , ուժի մեջ է մտել 07.04.2007թ. , հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021

48 Ընդունվել է 27.01.1999թ. , վավերացվել է ՀՀ կողմից՝ 09. 01. 2006թ. , ուժի մեջ է մտել 01.05.2006թ. , հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=29959

մարմինների և պաշտոնատար անձանց մասնագիտացումը և ապահովի պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ միջոցներով և վերապատրաստում անցնելու հնարավորությամբ[49]:

Պետք է ընդգծել, որ նշված պարտավորություններով ոչ թե պարտադիր է առանձնացված մասնագիտական մարմինների ստեղծումը, այլ բավարար է, եթե պետությունն այդպիսի մոտեցում է որդեգրում, արդեն իսկ գործող մարմինների կառուցվածքում բավարար քանակի մասնագիտացված պաշտոնատար անձանց առկայությամբ: Այսինքն՝ պետությունը ինքն է որոշում, թե ինչպիսի համակարգ ունենա՝ հաշվի առնելով դատաիրավական համակարգը, օրենսդրությունը, առկա իրավիճակը և ռեսուրսները: Կարևոր է նշված մարմիններին/ստորաբաժանումներին ապահովել բավարար ռեսուրսներով և գործունեության անկախության պատշաճ երաշխիքներով:

ՀՀ-ում նախապատվությունը տրվել է մասնագիտացված առանձին քննչական մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը, երաշխավորելու համար կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը մեկ մարմնի կողմից: Կոմիտեն արդեն իսկ ստեղծված ԿԿՀ-ի, ինչպես նաև իր հետ նույն ժամանակահատվածում ձևավորված Հակակոռուպցիոն դատարանի և ՀՀ գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության հետ միասին ամբողջացնելու էր հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը:

2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ՝ Կոմիտեի ձևավորումը և նրան գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմի տրամադրումը նախատեսված էր իրականացնել 2021թ. -ին: Ընդ որում, նշենք, որ ռազմավարությամբ Կոմիտեի ստեղծման անհրաժեշտությունը որևէ կերպ չէր հիմնավորվել, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ նախորդ տարիների վիճակագրական տվյալներով, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ գլխավոր դատախազությունը սկսած 2017թ. -ից, յուրաքանչյուր տարի իր պաշտոնական կայքում հրապարակում է կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ վիճակագրություն[50], ըստ որի՝ 2017թ. -ի համեմատ 2018թ. -ից մինչև 2020թ. -ը կտրուկ աճել էր կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի քանակը:

**Գծապատկեր 1. ՀՀ իրավասու մարմինների կողմից կոռուպցիոն բնույթի գործերով տարեկան հարուցված քրեական գործերի քանակը.**




49 Principle 7, Resolution (97) 24, adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 6 November 1997.

50 Տե՛ս ՀՀ դատախազության կողմից հրապարակվող՝ Կոռուպցիոն հանցագործությունների քննության տեղեկանքները՝ https://www.prosecutor.am/am/Տեղեկանք-կոռուպցիոն-հանցագործությունների-քննության-վերաբերյալ/

## 2. 2 Ինստիտուցիոնալ դիրքավորում և օրենսդրական հիմքեր

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան սահմանում է, որ մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթներն առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և ռեսուրսներով[51]: Իսկ ԵԽ Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի կոնվենցիան սահմանում է, որ նշված մարմինները պետք է ունենան անհրաժեշտ անկախություն այդ Կողմի իրավական համակարգի հիմնական կոռուպցիոն սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնել արդյունավետորեն և առանց որևէ անհիմն ճնշման: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ[52]: Համանման գործոններ առանձնացվում են նաև ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարի 20 սկզբունքներում: Մասնավորապես՝ պետությունները պետք է ապահովեն, որ կոռուպցիայի կանխարգելման, քննության և պատասխանատվության ենթարկելու մարմինները ունենան իրենց իրավասություններին համապատասխան անկախություն և ինքնավարություն, ազատ լինեն ոչ պատշաճ ազդեցությունից և ունենան ապացույց հավաքելու արդյունավետ միջոցներ, պաշտպանելու այն անձանց, որոնք համագործակցել են իշխանությունների հետ և պահպանելու քննության գաղտնիությունը[53]: Ինչպես տեսնում ենք, ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերով սահմանվում է ինչպես արտաքին անկախության, այնպես էլ բավարար ֆինանսական անկախության երաշխիքներ ապահովելու անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, նշված երաշխիքները կարող են լինել արդյունավետ, երբ գործնականում՝ քաղաքական կամքի առկայության պայմաններում, գործող համակարգը լինի իսկապես անկախ, զերծ լինի ոչ իրավաչափ միջամտությունից:

ՏՀՁԿ-ի մեկնաբանության համաձայն՝ մասնագիտացված մարմինների համար ավելի կարևոր է ոչ թե լիարժեք անկախությունը, այլ կառուցվածքային և գործառնական ինքնավարության պատշաճ աստիճանը, որն ապահովվում է ինստիտուցիոնալ և իրավական մեխանիզմներով, որոնք բացառում են ոչ իրավաչափ քաղաքական միջամտությունը կամ «կանխատեսող ենթարկվելը» (preemptive obedience)[54], այսինքն՝ կանխատեսել իշխող ուժի հնարավոր հրահանգները և դրանց արձակվելուց շուտ կատարելը: Անկախության առաջին երաշխիքն է այդ մարմնի ապաքաղաքանացումը: Առանձնացված մարմին ստեղծելու դեպքում ավելի դյուրին է վերջինիս ապահովել գործունեության անկախության երաշխիքներով՝ արդեն գործող մարմնի կառուցվածքում ստորաբաժանում ստեղծելու համեմատ: ՏՀՁԿ-ն առանձնացրել է մի շարք գործոններ, որոնցով որոշվում է հակակոռուպցիոն մարմնի անկախությունը, դրանք են՝

- ինստիտուցիոնալ դիրքավորումը,
- օրենսդրական հիմքերը,
- ղեկավարի և անձնակազմի ընտրությունը և նշանակումը,
- հաշվետվողականությունը և թափանցիկությունը,
- բյուջեն և ֆինանսական անկախությունը:

---

[51] Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա, Միացյալ ազգերիկ կազմակերպություն, ընդունվել է 31.10.2003թ. , ուժի մեջ է մտել 07.04.2007թ. , հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021

[52] Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի կոնվենցիա, Եվրոպայի Խորհուրդ, ընդունվել է 27.01.1999, ուժի մեջ է մտել 01.05.2006, հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=29959

[53] Տե՛ս Նախարարների կոմիտեի 1997թ. նոյեմբերի 6-ի 101-րդ նստաշրջանի կողմից ընդունված՝ Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին հմ. (97) 24 բանաձևը՝ սկզբունք 3

[54] Specialised Anti-Corruption Institutions. Review of models, OECD 2008, https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf, էջ 24

ՏՀԶԿ-ի կողմից սահմանված ինստիտուցիոնալ դիրքավորման գործոնի շրջանակներում՝ առանձնացված կառույցի ստորաբաժանում ստեղծելը թույլ կտա ավելի տեսանելի և անկախ դարձնել մասնագիտացված մարմնի գործունեությունը: Գործադիրից արդեն իսկ բավարար ինքնավարություն վայելող կառույցի, օրինակ՝ դատախազության, կազմում ներառելը նույնպես կարող է նպաստել համանման ինքնավարությունից օգտվելուն:

Այսպես, ՀՀ-ում քննչական մարմինները քրեական արդարադատության համակարգում իրականացնում են կիսադատական գործառույթ, ինչը ենթադրում է անկախության և դատավարական ինքնուրույնության ու ինքնավարության բարձր աստիճան[55]: Ինքնավարությունն ընդհանուր առմամբ ենթադրում է համապատասխան մարմնի՝ կազմակերպական, քաղաքականության իրացման կամ որոշման հարցերում ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություն և հայեցողություն՝ առանց այլ մարմինների կողմից հաստատման անհրաժեշտության, իսկ անկախությունը ենթադրում է այլ սուբյեկտների կողմից վերահսկողության կամ ազդեցության բացակայություն[56]: Այս առումով՝ քննչական մարմինները կամ քննչական ստորաբաժանումները չպետք է ենթակա լինեն ՀՀ կառավարությանը, վարչապետին կամ նախարարություններին: Համաձայն ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածի՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով: Այս նորմից բխում է, որ պետական կառավարման համակարգի այլ մարմինները ենթակա են ՀՀ կառավարությանը, վարչապետին կամ նախարարություններին: Օրինակ՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ենթակա է ՀՀ կառավարությանը, Ազգային անվտանգության ծառայությունը ենթակա է Վարչապետին և ենթակայության հարաբերությունների բնույթը տարածվում է այդ մարմնի բոլոր ստորաբաժանումների, այդ թվում՝ նախաքննություն կատարող ստորաբաժանման գործունեության վրա, որի պայմաններում էապես սահմանափակվում է քննչական մարմնի անկախությունը և ինքնուրույնությունը:**

Այսպես, 2015թ.-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ պետական մարմինների համակարգում կատարված մի շարք փոփոխությունների արդյունքում **քննչական մարմինները ավելացվել են սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմինների համակարգում:** ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվել է «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ ինքնուրույն գլուխ, որն առանձնացված է ինչպես գործադիր իշխանության, այնպես էլ դատական իշխանության մարմինների վերաբերյալ գլուխներից: Այս մոտեցումը համապատասխանում է 2012թ. -ին ընդունված Ջակարտայի հայտարարությունում նշված սկզբունքներին, ըստ որոնց՝ Հակակոռուպցիոն գործակալությունները պետք է այդ երկրների հիմնարար իրավական սկզբունքների համաձայն հաստատվեն պատշաճ և կայուն իրավական շրջանակներում, ինչպիսին է Սահմանադրությունը կամ հակակոռուպցիոն գործակալությունների շարունակական գործունեությունն ապահովող որևէ հատուկ օրենքը[57]: Այսպես, ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածով սահմանվում է, որ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը, և քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

---

[55] Տե՛ս՝ Քննչական մարմինների սահմանադրական կարգավիճակը և քննիչի կարգավիճակի միասնականությունը, հեղ. ՝ Արթուր Ղամբարյան, 2016թ՝ http://ghambaryan.am/wp-content/uploads/2016/03/Qnnchakan-marminneri-sahmanadrakan-kargavichak@-ev-qnnichi-kargavichaki-miasnakanutyun@.pdf

[56] Տե՛ս Ինքնավարության իրավական բովանդակությունը և ինքնավար մարմինների առանձնահատկությունները հայաստանի հանրապետությունում, Անահիտ Մանասյան, Տիգրան Մարկոսյան, 2020թ. ՝ http://ysu.am/files/Anahit_Manassyan_Tigran_Markosyan.pdf

[57] Տե՛ս Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությունը՝ https://armla.am/wp-content/uploads/2019/01/Jakarta-statement-2012.pdf

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնում է նաև օրենքով սահմանված այլ լիազորություններ և նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին:

Նշենք նաև, որ ՏՀԶԿ-ի կողմից սահմանված օրենսդրական հիմքերի գործոնի շրջանակներում՝ օրենսդրությամբ հստակ պետք է սահմանված լինեն հակակոռուպցիոն մարմնի իրավասությունը, գործառույթները, ինստիտուցիոնալ դիրքավորումը, ղեկավարի նշանակման և պաշտոնից ազատման հիմքերը, ներքին կառուցվածքը, լիազորությունները, բյուջեն, անձնակազմի ընտրության, նշանակման հիմքերը, այլ մարմինների հետ փոխհարաբերությունները, հաշվետողականությունը և այլն: Բոլոր հնարավոր դեպքերում նշված հարցերը պետք է սահմանվեն օրենքով, այլ ոչ թե ենթաօրենսդրական ակտերով: Ներքին կանոնակարգերը, վարքագծի կանոնները և այլն կարող են սահմանվել ենթաօրենսդրական ակտերով: Հակակոռուպցիոն կոմիտեի կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը անմիջականորեն ամրագրված չեն ՀՀ Սահմանադրությամբ, այլ նախատեսված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերով: Չնայած այդ հանգամանքին, միևնույնն է, դրանց անհրաժեշտությունը թելադրված է այդ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակով և բխում է հենց սահմանադրական լիազորությունների երաշխավորման բնականոն պահանջներից[58]: Տվյալ դեպքում, որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե նրա կազմավորման հիմքերը, լիազորությունները ինչպիսի իրավական ակտով են կարգավորված, քանի որ բոլոր դեպքերում այն «դիտարկվում է որպես ինքնուրույն ու սահմանադրաիրավական գործառույթներ ունեցող առանձին սահմանադրական ինստիտուտ»[59]:

Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունները և գործունեության սկզբունքները, համակարգը, ծառայողների պաշտոնները, ծառայողների նշանակման և ազատման, դասային աստիճաններ շնորհելու կարգն ու պայմանները, ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ատեստավորումը, վերապատրաստումը, ծառայողին գործուղելու, ավելի ցածր պաշտոնի փոխադրելու և լիազորությունները կասեցնելու կարգը, պատասխանատվությունը, ծառայողի գործունեության նյութական, սոցիալական և այլ երաշխիքները սահմանված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, իսկ Կոմիտեի խնդիրները, կառուցվածքը, ստորաբաժանումների և ծառայողների գործառույթներն առավել համապարփակ սահմանված են Կոմիտեի կանոնադրությամբ: Կոմիտեի կառուցվածքն ու հաստիքացուցակը, Կոմիտեի ծառայողների ընտրության համար հանձնաժողովի/խորհրդի կազմավորման և գործունեության կարգը, Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու մրցույթի անցկացման կարգը և պայմանները, Կոմիտեի ծառայողի ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը, Կոմիտեի ծառայողի առաքինության ստուգման կարգը և պայմանները, Կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները, Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները սահմանվում են Կոմիտեի նախագահի հրամաններով, ՀՀ

---

[58] Տե՛ս Վարչարարության սահմանների վերանայման հայեցակարգային հարցադրումները, Գևորգ Դանիելյան, 2015թ. ՝ http://www.ysu.am/files/98-122_Gevorg_Danielyan.pdf

[59] Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն), գլուխ 9, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, 2015թ. ՝ http://www.ysu.am/files/Book-Konst.pdf

կառավարության որոշումներով, հարակից օրենքներով և այլն: Այս առումով կարող ենք նշել, որ ընդհանուր առմամբ Կոմիտեին առնչվող հարաբերությունները կարգավորվում են օրենքով, սակայն միջազգային չափանիշներին համապատասխան, դրանում պետք է կատարվեն լրացումներ՝ օրենքի մակարդակով ամրագրելով նաև Կոմիտեի ներքին կառուցվածքը, Կոմիտեի ծառայողների լիազորությունները, անձնակազմի, մասնավորապես՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ընտրության և նշանակման կարգը և պայմանները և այլն:

## 2. 3 Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը

ՀՀ կառավարության 2021թ. -ի սեպտեմբերի 16-ի թիվ 1479-Ա որոշմամբ նշանակվել էր Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, որի կողմից մեկամսյա ժամկետում ընդունվել էին մի շարք որոշումներ, այդ թվում՝ Կոմիտեի կառուցվածքը հաստատելու մասին: Այսպես, համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 01-Լ հրամանի հավելված 1-ի՝ Կոմիտեի կառուցվածքի մեջ են մտնում՝

1. Կոմիտեի նախագահը,
2. Կոմիտեի նախագահի տեղակալները,
3. Կոմիտեի հիմնական մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումները,
4. Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները,
5. Կոմիտեի հայեցողական պաշտոնները, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք:

Կոմիտեի կառուցվածքի մեջ մտնող ստորաբաժանումների և ծառայողների գործառույթները սահմանված են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ, որը հաստատվել է Կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 02-Լ հրամանով[60]:

Ըստ կանոնադրության՝ **Կոմիտեի նախագահը** պատասխանատու է Կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար: Վերջինս ղեկավարում և վերահսկում է Կոմիտեի գործունեությունը, իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական, ներքին և անհատական իրավական ակտեր, տալիս է հանձնարարականներ, հաստատում է Կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը, պաշտոնների անվանացանկը և հաստիքացուցակը, օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում կամ ազատում Կոմիտեի այլ աշխատակիցների, նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, նշանակում և փոփոխում է ծառայողական քննություն կատարողին, խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում Կոմիտեի ծառայողներին, պարգևատրում է Կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց, սահմանում է ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը, սահմանում է Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները և այլն: Կոմիտեի նախագահը վերադաս է Կոմիտեի բոլոր ծառայողների նկատմամբ:

**Կոմիտեի նախագահի տեղակալները** երեքն են, ովքեր համակարգում են Կոմիտեի նախագահի կողմից իրենց հանձնարարված ոլորտի աշխատանքները, ընդունում ներքին և անհատական իրավական ակտեր, տալիս հանձնարարականներ, միջնորդություններ ներկայացնում Կոմիտեի ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ և այլն:

**Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են.**

**Կոմիտեի քննչական առաջին, երկրորդ և երրորդ վարչությունները** իրենց իրավասության սահմաններում՝ կազմակերպում և իրականացնում են առերևույթ

60 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը՝ https://anticorruption.am/hy/pages/show/Statute

կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով նախնական քննություն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ, քննարկում են դիմում-բողոքները, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված միջնորդությունները, հաղորդումները, ինչպես նաև իրականացնում այլ գործառույթներ:

**Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունն** իր իրավասության սահմանում՝ կանխարգելում, հայտնաբերում, խափանում և բացահայտում է Կոմիտեի ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտման դեպքերը, Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ կատարում է նախնական ուսումնասիրություն և եզրակացություն տալիս կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ, մշակում է Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգին և պայմաններին վերաբերելի համապատասխան իրավական ակտերը, իրականացնում է Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, ինչպես նաև իրականացնում է այլ գործառույթներ:

Բացի այդ, ներքին անվտանգության վարչությունը կազմակերպում և իրականացնում է իրեն հանձնարարված հատկապես կարևորություն ներկայացնող, ինչպես նաև քննության առանձնահատկություններ ունեցող առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով նախնական քննություն և այլն: Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթի հարցազրույցի փուլի ընթացքում, ԻՊԱՍ դիտորդն արձանագրել է, որ <u>Կոմիտեի ներքին անվտանգության վարչության քննիչների պաշտոնակատարները փաստացի առավելապես զբաղվել են կոռուպցիոն բնույթի քրեական վարույթների քննությամբ՝ ծառայողական քննությունների և առաքինության ստուգումների փոխարեն. պատճառն, ըստ Կոմիտեի հիմնավորման, Կոմիտեի ծանրաբեռնվածությունն է:</u>

<u>Առաքինության ստուգման գործառույթի</u> հետ կապված նշենք, որ այն կարող է իրականացվել տարբեր եղանակներով, այդ թվում՝ պրովոկացիայի և դրա բացասական արդյունքները կարող են հիմք հանդիսանալ Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Առաքինության ստուգման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա չէ հանրայնացման[61], հետևաբար դրա ընթացքին և արդյունքներին հետևել հնարավոր չէ: Նշենք նաև, որ Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները պետք է սահմանվեին Կոմիտեի նախագահի կողմից, սակայն դրանք դեռևս չեն մշակվել[62]:

**Կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչությունն** իր իրավասության սահմաններում և իր կառուցվածքում գտնվող **առաջին, երկրորդ և երրորդ բաժինների միջոցով՝** «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, կանխման և խափանման, առերևույթ կոռուպցիոն հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելու, քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզելու և հայտնաբերելու, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում վկաներ, հանցագործության հետքեր, առարկաներ, իրեղեն ապացույցներ և այլ իրեր, փաստաթղթեր հայտնաբերելու, ապօրինի ծագում ունեցող գույքի մասին տեղեկություններ և տվյալներ հայտնաբերելու, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող կամ համագործակցած անձանց (և նրանց ընտանիքի անդամների) անվտանգությունն ապահովելու համար տեղեկություններ հավաքելու և օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով, ինչպես նաև իրականացնում է այլ գործառույթներ:

---

61 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/136

62 Համաձայն ԻՊԱՍ 12. 10. 2022 թիվ Ե74 գրության պատասխանի՝ տրված Կոմիտեի կողմից 17. 10. 2022թ. -ին

Նշենք, որ օպերատիվ-հետախուզական գործառույթը Կոմիտեին տրվել էր այն հիմնավորմամբ[63], որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձնահատկություններով պայմանավորված՝ հետաքննության և նախաքննության գործառույթները, կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործողությունները իրականացվում էին տարբեր մարմինների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում էր կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածության: Այդ պատճառով, **Կոմիտեն՝ իրեն տրված այժմյան լիազորություններով կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների հետաքննությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունը և նախաքննությունը:** Այնուամենայնիվ, չարաշահումներից խուսափելու, արագ և արդյունավետ քննություն ապահովելու համար դրանք իրականացվում են տարբեր ստորաբաժանումների կողմից: Հիշեցնենք, որ, կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ներկայումս օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու և քրեական վարույթի շրջանակներում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննություն կատարելու իրավունք ունեն՝ ՀՀ ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, հարկային մարմինները, մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով, քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում և հակակոռուպցիոն կոմիտեն[64]:

Ի դեպ, 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության չփոփոխված և նախնական տարբերակում[65] նախատեսվել էր Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը վերակազմակերպել՝ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար նախատեսված հաստիքների և գործիքակազմի մի մասը փոխանցելով Հակակոռուպցիոն կոմիտեին և ՀՔԾ-ին: Սակայն, ռազմավարության փոփոխված տարբերակում[66] նշված դրույթը հեռացվել է: Փաստացի, անցկացված մրցույթների արդյունքում, Հակակոռուպցիոն կոմիտեում ոստիկանության նշված վարչությունից որևէ ծառայող չի ընտրվել և պաշտոնի չի նշանակվել[67]:

**4. Կոմիտեի թվով 11 աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝** իրավական ապահովման վարչությունը, անձնակազմի կառավարման վարչությունը, ֆինանսաբյուջետային և հաշվապահական հաշվառման բաժինը, ներքին աուդիտի բաժինը, արտաքին կապերի և արարողակարգի բաժին, փաստաթղթաշրջանառության ապահովման բաժինը, վիճակագրության բաժինը, գնումների բաժինը, առաջին բաժինը, քաղաքացիների ընդունելության բաժինը, նյութատեխնիկական ապահովման, շահագործման և արխիվի բաժինը: Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները քաղաքացիական ծառայողներ, տեխնիկական սպասարկում իրականացնող և քաղաքացիական աշխատանք կատարողներ են, որոնց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը և ՀՀ աշխատանքային օրենսգիրքը: Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը ղեկավարում է գլխավոր քարտուղարը[68]:

63 Տե՛ս նախագծի հիմնավորումը՝ https://www.e-draft.am/projects/2256/justification

64 Տե՛ս Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=165027

65 Տե՛ս ՀՀ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876

66 Տե՛ս ՀՀ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության փոփոխված տարբերակը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168051

67 Համաձայն ԻՊԱՍ 07. 12. 2022 թիվ Ե92 գրության պատասխանի՝ տրված Կոմիտեի կողմից 12. 12. 2022թ. -ին

68 Գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է նաև Կոմիտեի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական

**5. Կոմիտեի հայեցողական պաշտոններն են՝** Կոմիտեի նախագահի խորհրդականները (թվով 2), Կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարը (թվով 1), Կոմիտեի նախագահի օգնականները (թվով 2), Կոմիտեի նախագահի տեղակալի օգնականները (թվով 3):

## 2. 4 Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակը

**Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատողների առավելագույն թիվն ի սկզբանե սահմանվել էր 170 հաստիքային միավոր**[69], միաժամանակ նախատեսելով[70], որ հետագայում՝ քննչական ենթակայության հարցերով պայմանավորված՝ ընդհանուր հաստիքների քանակը կավելացվի: Նշվածի հիման վրա, 2022թ. -ի դեկտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի N 1450- Ա որոշմամբ[71] **Կոմիտեի հաստիքների թիվը ավելացվել է ևս 100 հաստիքով, ընդհանուր կազմելով՝ 270 միավոր**[72], սակայն այս հաստիքները համալրվելու են փուլային կարգով՝ 2023թ. -ի ընթացքում:

Մինչ համալրումը, Կոմիտեի ծառայողների հաստիքացուցակը սահմանվել էր Կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 01-Լ հրամանի հավելված 2-ով, ըստ որի՝ Կոմիտեի 170 հաստիքից 100-ը նախատեսված էր Կոմիտեի ծառայողների, իսկ 70-ը՝ Կոմիտեի քաղաքացիական, հայեցողական ծառայության պաշտոնների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց համար:

Կոմիտեի ծառայողների 100 հաստիքները բաշխված են հետևյալ կերպ.

- 4 հաստիք՝ Կոմիտեի ղեկավար կազմի համար (1 Կոմիտեի նախագահ և նրա 3 տեղակալներ).
- 36 հաստիք՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար, որից միայն <u>29-ն են հանդիսանում «քննիչներ»</u> (4 վարչության պետ, 3 վարչության պետի տեղակալ, 17 հատկապես կարևոր գործերով (այսուհետ՝ ՀԿԳ) ավագ քննիչ, 6 ՀԿԳ քննիչ, 3 ավագ քննիչ և 3 քննիչ).
- 60 հաստիք՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համար, որոնցից <u>միայն 50-ն են հանդիսանում «օպերլիազորներ»</u> (1 վարչության պետ, 1 վարչության պետի տեղակալ, 4 բաժնի պետ, 4 բաժնի պետի տեղակալ, 29 ավագ օպերլիազոր և 21 օպերլիազոր):

Ստացվում է, քննչական մարմին հանդիսացող Հակակոռուպցիոն կոմիտեի 170 հաստիքից միայն 29-ն են նախատեսված քննիչների համար, ինչը Կոմիտեի ենթակայությանը վերապահված և նրա կողմից փաստացի քննվող վարույթների ծավալի ստորև քննարկվող պայմաններում անհամաչափ թիվ է: Հաշվի առնելով, որ Կոմիտեի հաստիքացուցակը ավելացվել է ևս 100 հաստիքով, որոնք պետք է համալրվեն 2023թ. -ի ընթացքում, ուստի գտնում ենք, որ այդ հաստիքները պետք է համամասնորեն բաժանվեն քննիչների և օպերլիազորների միջև այնպես, որ 1 քննիչի հաստիքին համապատասխան նախատեսվի առնվազն 2 օպերլիազորի հաստիք՝ գործերի օպերատիվ և արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով:

---

գործառույթների իրականացման, քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցության և Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ գործունեության կազմակերպման համար:

69 Տե՛ս ՀՀ վարչապետի 14.10.2021թ. N 1159-Ա որոշումը՝ https://www.e-gov.am/decrees/item/23959/, https://www.arlis.am/documentview.aspx?docid=168233

70 Տե՛ս 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության 2022թ. -ի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրագործման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը՝ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5779573371991__2019-2022_2022_.pdf

71 Տե՛ս ՀՀ վարչապետի 2022թ. -ի դեկտեմբերի 6-ի N 1450- Ա որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=171313

72 Տե՛ս ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թ. -ի N 706-Ա որոշումը՝ . - https://www.arlis.am/documentview.aspx?docid=173380

## ԳԼՈՒԽ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

### 3. 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՏՀՁԿ-ի կողմից սահմանված ղեկավարի ընտրության և նշանակման գործոնի շրջանակներում՝ ղեկավարի ընտրությունը և նշանակումը պետք է լինի թափանցիկ և իշխանության ճյուղերի կոնսենսուսի արդյունք՝ ընտրելու բարձր բարեվարքություն ունեցող պաշտոնատար անձին: Դա կարող է լինել գործադիր և օրենսդիր իշխանության համատեղ ընթացակարգի կամ հանձնաժողովի միջոցով՝ գործադիրի կամ օրենսդիրի առաջարկության հիման վրա ընտրության արդյունք: Մեկ քաղաքական պաշտոնատար անձի կողմից նշանակումը չի հանդիսանում լավ պրակտիկա:

Իրավապահ մարմինների ղեկավար կազմի ընտրության համար համընդհանուր ճանաչում ստացած մեկ մոդել առկա չէ, և միանշանակ մոտեցում չկա առ այն, թե իշխանության որ ճյուղի կողմից պետք է կատարվի նշանակումը՝ օրենսդրի, թե գործադիրի[73]: Կառավարության կողմից իրավապահ մարմնի ղեկավարի նշանակումը ինքնին չի վկայում դրա անկախության վրա ազդեցության մասին, եթե առկա են անկախության այլ երաշխիքներ[74]: Ավելին, թեև հնարավոր է, որ ղեկավարի նշանակումը լինի քաղաքական նշանակում, սակայն եթե տվյալ իրավապահ մարմնի ղեկավարի նշանակումը կախված է գործադիր մարմնից, ապա կարևոր է, որ ընտրման ձևը լինի այնպիսին, որ արժանանա հանրության, ինչպես նաև դատական համակարգի, իրավապահ մարմինների համակարգի կողմից վստահության[75]: Քննչական մարմնի ղեկավար կազմի ձևավորման կարգավորումն ամեն դեպքում պետք է ուղղված լինի ընտրելու/նշանակելու այնպիսի անձանց, որոնք բավարարում են անկախության երաշխիք հանդիսացող մի շարք չափանիշների: Այդ չափանիշների թվում կարևորվում են ապաքաղաքականացվածությունը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և ձեռնհասությունը[76]: Մի շարք համակարգերում նշված չափանիշները բավարարելու նպատակով նշանակումներ կատարում են բաց, թափանցիկ, մրցակցային և մասնակցության լայն հնարավորություն ապահովող ընթացակարգերի միջոցով: Ավելին, որպես երաշխիք առ այն, որ ղեկավար անձը իր պաշտոնավարման ողջ ընթացքում կցուցաբերի անկողմնակալություն, բարեվարքություն և չեզոքություն, նախընտրելի է նշանակման և ընտրության այնպիսի համակարգ, որը պահանջում է քաղաքական լայն շրջանակի կողմից աջակցություն, իսկ տվյալ անձի թեկնածությունը պետք է առաջարկվի և/կամ հաստատվի իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից[77]: Ընդդիմադիր ուժերի ներգրավվածությունը ղեկավարի ընտրությանը ուժեղացնում է գործընթացի օբյեկտիվությունը և անկողմնակալությունը՝ նվազեցնելով ընտրվող անձի՝ իշխող մեծամասնության օգտին կողմնակալություն դրսևորելու հավանականությունը[78]: Այսպիսի ներգրավվածություն ապահովելու համար ողջամիտ

---

[73] Վրաստանի Սահմանադրության վերանայված նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիք (CDL-AD(2017)013), § 83 (https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)013-e):

[74] Օրինակ՝ դատարանների դեպքում, կարևոր է, որ նշանակումը վայելի հանրային վստահություն և հարգանք դատական համակարգի կողմից, ինչը երաշխավորելու նպատակով ընտրության/նշանակման գործընթացը պետք է ունենա մասնագիտական, ոչ քաղաքականացված ուղղվածություն, և ապահովվի նաև հատուկ հանձնաժողովների ձևավորման միջոցով74: Այս նույն մոտեցումը անալոգիայով կիրառելի է նաև կիսադատական՝ քննչական մարմինների ընտրությունների և նշանակումների գործընթացում

[75] ԵԽ Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի կարծիք No 9 (2014), կետ 56 (https://rm.coe.int/168074738b):

[76] ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, Կոլոմբոյի մեկնաբանությունները Ձակարտայի սկզբունքների արձանագրություն հակակոռուպցիոն մարմինների համար (2012) (այսուհետ՝ Կոլոմբոյի մեկնաբանություններ), էջեր 23-30 (https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/20-00107_Colombo_Commentary_Ebook.pdf):

[77] Կոլոմբոյի մեկնաբանություններ, էջ 29 (https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/20-00107_Colombo_Commentary_Ebook.pdf):

[78] Նույն տեղում:

մոտեցում է այդ մարմինների ղեկավարների վերջնական նշանակումը խորհրդարանի, այլ ոչ թե այլ մարմնի կողմից[79]՝ հաշվի առնելով, որ խորհրդարանում հնարավոր կլինի հրապարակային ձևաչափով տարբեր ուժերի միջև անցկացնել քննարկումներ և նշանակման վերաբերյալ վերջնական որոշման կայացմանը մասնակից դարձնել այդ տարբեր ուժերին՝ նվազեցնելով քաղաքական մեկ ուժի կողմից նշանակման հնարավորությունը, և դրանով պայմանավորված՝ կախվածությունը այդ ուժից: Օրինակ՝ Լատվիայում Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրոյի տնօրեններն ընտրվում են բաց նշանակման համակարգի միջոցով. թեկնածուները պետք է դիմում ներկայացնեն, որը գնահատվում է սահմանված չափանիշների համատեքստում: Այնուհետև հարցաքննվում են մի խումբ փորձագետների կողմից: Այնուհետև Նախարարների կոմիտեի կողմից թեկնածուների հետ իրականացվում են հարցազրույցներ, որն էլ վերջնական եզրակացություն է ուղարկում խորհրդարանին: Սերբիայում Հակակոռուպցիոն գործակալությունը ղեկավարվում է Խորհրդի և տնօրենի կողմից: Ընդ որում, Խորհրդի անդամները առաջադրվում են ինը տարբեր մարմինների կողմից և ընտրվում են խորհրդարանի կողմից: Այնուհետև Խորհուրդն ընտրում է տնօրենին՝ բաց մրցույթի արդյունքում, որի պայմանները երաշխավորում են, որ թեկնածուները գնահատվեն մասնագիտական արժանիքները գնահատող չափանիշների հիման վրա՝ երաշխավորելու, որ կընտրվի ապաքաղաքական, պրոֆեսիոնալ անձ[80]:

### 3. 1. 1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհրդի ձևավորում

ՀՀ-ում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության նպատակով ձևավորվում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած մեկական թեկնածուներից և ՔՀԿ երկու ներկայացուցչից[81] (ընդհանուր՝ 7 անդամ): Խորհրդի անդամ, բացառությամբ ՔՀԿ ներկայացուցչի, կարող է նշանակվել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան ունեցող, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող, կուսակցական պատկանելիություն չունեցող յուրաքանչյուր ոք, որն ունի քրեական մասնագիտացման դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերլիազորի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ: Բացի նշված անդամներից, Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև երեք միջազգային փորձագետներ[82]:

Այսպես, Կոմիտեի նախագահի ընտրության նպատակով, 2021թ. -ի հունիսի 4-ին Վարչապետի աշխատակազմի ղեկավարը դիմել է Ազգային ժողով, Կառավարություն, Բարձրագույն դատական խորհուրդ, Մարդու իրավունքների պաշտպանին, Գլխավոր

79 Վենետիկի հանձնաժողով, կարծիք թիվ Opinion No. 937 / 2018, § 19 (https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2018)029-e):

80 Ավելի մանրամասն տե՛ս ՏՀՁԿ «Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ» ձեռնարկ, էջ 28, Կոլոմբոյի մեկնաբանություններ: - սկզբանղբյուրը եթե անգլերենը, արի անգլրժեեն գնենք

81 Երկուսից ավելի ՔՀԿ-ների դիմելու դեպքում նախապատվությունը տրվում է հակակոռուպցիոն ոլորտի առավել երկար փորձառություն ունեցող ՔՀԿ ներկայացուցչին: Խորհրդում ՔՀԿ-ների ներգրավման առանձին կարգ սահմանված չէ: Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=172258

82 ՀՀ կառավարության 2021թ. -ի հունիսի 3-ի «Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը սահմանելու մասին» N 896-Ն որոշում՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=153226

դատախազություն՝ տասնօրյա ժամկետում Խորհրդի կազմում մեկական անդամ նշանակելու համար: Միաժամանակ, մրցութային խորհրդի կազմում ՔՀԿ երկու ներկայացուցիչների ներգրավման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից հայտարարվել է մրցույթ: Արդյունքում Խորհուրդը ձևավորվել է օրենքով նախատեսված թույլատրելի նվազագույն կազմով՝ 4 անդամով: Խորհրդում ներգրավված անդամներն են եղել Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանը, Գլխավոր դատախազի կողմից՝ Գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանը, Կառավարության կողմից՝ ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Մարիամ Գալստյանը, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը և միջազգային կազմակերպություններից՝ Զարգացման իրավունքի միջազգային կազմակերպության (IDLO) փորձագետ Վիտալի Կասկոն (խորհրդակցական ձայնի իրավունքով): Հատկանշական է, որ միջազգային փորձագետների ներգրավման նպատակով հրապարակված հայտարարության արդյունքում դիմել է միայն Զարգացման իրավունքի միջազգային կազմակերպության (IDLO) փորձագետ Վիտալի Կասկոն[83]:

**Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Խորհրդում որևէ թեկնածու չի նշանակվել՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով պահանջվող պարտադիր պայմաններին համապատասխանող աշխատակից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում չլինելու պատճառով[84]:** Նշվածը վկայում է Խորհրդի անդամներին ներկայացվող պարտադիր պայմանների վերանայման և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների անցկացման անհրաժեշտության մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգամ ՄԻՊ գրասենյակը չի կարողացել Խորհրդի կազմում ապահովել օրենքի պահանջներին համապատասխանող ներկայացուցչի նշանակումը: **Բացի այդ, ԱԺ-ի կողմից Խորհրդի անդամ էր նշանակվել ԱԺ յոթերորդ գումարման իշխող «Իմ քայլ» խմբակցության պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը[85], մինչդեռ, վերջինս հանդիսացել է կուսակցական անձ[86]:** Ինչպես նշվեց, Խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներից մեկը կուսակցական պատկանելիություն չունենալն է, և, առհասարակ, քաղաքական չեզոքությունը Կոմիտեի գործունեության սկզբունքներից մեկն է[87], սակայն այս պահանջը անտեսվել է ԱԺ խորհրդի կողմից նշանակում կատարելիս: Հետագայում՝ 2021թ. -ի հուլիսի 6-ին տեղի ունեցած ԱԺ խորհրդի արտահերթ նիստի ընթացքում այս որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: Նշենք, որ Մրցութային խորհրդի անդամին ԱԺ խորհուրդը նշանակում է ԱԺ խմբակցությունների առաջադրած թեկնածուների կազմից[88]: Սակայն, հրապարակային տեղեկությունների համաձայն, ընդդիմադիր խմբակցությունները նշված գործընթացից տեղյակ չեն եղել[89]: Ավելին, ԱԺ խորհրդի[90] 16 անդամներից 13-ը հանդիսանում են իշխող՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ, ինչպիսի պայմաններում ԱԺ խորհրդի որոշումներում այլ խմբակցությունների անդամների և անկուսակցական պատգամավորի ձայները որոշիչ լինել չեն կարող:

---

[83] Տեղեկատվությունը ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրվել է 19. 12. 22թ. -ին՝ ԻՊԱՍ 07. 12. 22թ. -ի հարցմանն ի պատասխան:
[84] Տե՛ս ՁԼՄ լուսաբանումը՝ https://iravaban.net/351621.html
[85] ԱԺ խորհրդի 2021թ. -ի հունիսի 29-ի «Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձեւավորվող մրցութային խորհրդի անդամ նշանակելու մասին» ԱԺԽՈ-041-Ա որոշում՝ http://www.parliament.am/council_7/AJXV_041_29062021.pdf
[86] Տե՛ս Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը՝ https://www.elections.am/Elections/Parliamentary
[87] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172258
[88] Տե՛ս Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքը՝ http://www.parliament.am/parliament.php?id=bylaw#g8
[89] Տե՛ս ՁԼՄ լուսաբանումը՝ https://iravaban.net/340046.html
[90] Տե՛ս ՀՀ ԱԺ խորհրդի կազմը՝ http://www.parliament.am/Council.php?lang=arm

Նշենք, որ **Խորհրդի կազմի հաստատումից հետո[91], Խորհրդին անդամակցությունը դադարեցրել է նաև «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչը՝ Կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության, մասնագիտական և անձնային հատկանիշների ստուգման և այլ հարցերի վերաբերյալ իր առաջարկությունները՝ Խորհրդի կողմից չընդունվելու պատճառաբանությամբ**[92]:

Այսպես, Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության նպատակով ձևավորված մրցութային խորհրդի կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործընթացում ընդգրկված չեն եղել Ազգային ժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները, ինչպես նաև որևէ կերպ մասնակից չի դարձվել ընդդիմությունը՝ անգամ ԱԺ խորհրդում իր թեկնածուին առաջադրելու մակարդակով: Այլ կերպ՝ Խորհրդի ձևավորման գործընթացը չի ստացել աջակցություն քաղաքական լայն շրջանակի կողմից, չի ապահովվել իշխանության ճյուղերի կոնսենսուս, մինչդեռ, միջազգային չափանիշների համաձայն, ընդդիմադիր ուժերի ներգրավվածությունը ղեկավարի ընտրությանը կուժեղացներ գործընթացի օբյեկտիվությունը և անկողմնակալությունը՝ նվազեցնելով ընտրվող անձի՝ իշխող մեծամասնության օգտին կողմնակալություն դրսևորելու հավանականությունը:

### 3. 1. 2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջներ և մրցույթի ընթացակարգային հարցեր

Խորհուրդը կազմավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատել է իր գործունեության աշխատակարգը, հարցազրույցի փուլի անցկացման նպատակով նախատեսված հարցարանը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը: Այնուհետև, նշված ակտերի հաստատումից հետո՝ հնգօրյա ժամկետում, Խորհուրդը՝ վարչապետի աշխատակազմի միջոցով հայտարարել է Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար մրցույթ՝ հրապարակելով թեկնածուներին ներկայացվող պահանջները, մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը[93], այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը, հարցարանը[94] և այլն:

**Խորհրդի կողմից Կոմիտեի նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները ներառում են՝** ՀՀ քաղաքացիությունը, ՀՀ-ում մշտապես բնակությունը, ՀՀ-ում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճանը կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճանը, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, հայերենին տիրապետելը, պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով ազատված լինելը, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուների առնվազն մեկի՝ Կառավարության սահմանած մակարդակի իմացությունը (սույն դեպքում թեկնածուն կհամարվի պահանջին համապատասխանող, եթե պաշտոնի նշանակվելուց հետո երեք տարվա ընթացքում ներկայացնի պահանջվող օտար լեզուների

---

[91] Տե՛ս ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից 01. 07. 2021թ. N 1055-Ա հրամանը

[92] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհրդում անդամությունը դադարեցնելու վերաբերյալ հայտարարությունը՝ https://transparency.am/hy/media/news/article/3150

[93] Տե՛ս ՀՀ Կառավարության 2021թ. -ի հունիսի 3- N 895-Ն որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=153222

[94] Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի փուլի հարցարանը բաղկացած 35 հարցից, հաստատվել է Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի 2021թ. -ի հուլիսի 29-ի թիվ 3 որոշմամբ, տե՛ս https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/Voroshum-03_08_2-.pdf

իմացության մակարդակը հավաստող փաստաթուղթ, հակառակ դեպքում նրա լիազորությունները կդադարեցվեն), քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցրած լինելը կամ դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ ունենալը:

**Կոմիտեի նախագահի թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորն** ուղղակիորեն պայմանավորված է Խորհրդի անդամների թվով: **Խորհրդի անդամներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 100 է**[95]: Ինչպես նշվեց, Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության նպատակով ձևավորված մրցութային խորհուրդը կազմված է եղել 4 անդամից, հետևաբար, նշված մրցույթում թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը եղել է 400-ը: Խորհրդի 1 անդամի կողմից տրված 100 միավորն ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների բաշխվում է հետևյալ համամասնությամբ՝

1. **անձնական որակներ՝ 30 միավոր,**
2. **բարեվարքություն՝ 40 միավոր,**
3. **պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձ և հմտություններ՝ 30 միավոր:**

Թեկնածուի անձնական որակների գնահատման չափանիշներն են Կոմիտեի նախագահ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը[96], ղեկավարման և կառավարչական հմտությունները[97], հաղորդակցման հմտությունները պաշտոնական և արտապաշտոնական հարաբերություններում[98], պատասխանատվության զգացումը[99]:

Թեկնածուի բարեվարքության գնահատման չափանիշներն են[100] թեկնածուի գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին, նախկինում քրեական կամ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված չլինելը, շահերի բախման առաջացման ռիսկը և շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողությունը, էթիկայի կանոններին տիրապետելը, վերաբերմունքը քրեական ենթամշակույթի ու դրա բաղադրիչների նկատմամբ և անօրինականության մասին ազդարարելու պատրաստակամությունը, զբաղեցրած պաշտոնից դուրս պաշտոնեական դիրքը չգործարկելը, հեղինակության և ազդեցության չափավոր կիրառումը, քաղաքական չեզոքությունը, քաղաքական և այլ ճնշումներին դիմագրավելու կարողությունն ու ցանկությունը:

Թեկնածուի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձի և հմտությունների գնահատման չափանիշներն են[101]՝ մասնագիտական փորձառությունը, ներկայացված իրավական հարցի վերաբերյալ վերլուծության և դիրքորոշման ներկայացման շրջանակներում վերաբերելի՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի, օրենսդրության, ներպետական նախադեպային իրավունքի իմացությունը, ներկայացված իրավական հարցի վերաբերյալ վերլուծություն կատարելու և դիրքորոշում ներկայացնելու կարողությունների և հանպատրաստից կողմնորոշվելու ունակության դրսևորումը:

---

[95] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի 2021թ. -ի հուլիսի 26-ի թիվ 2 որոշումը՝ https://www.gov.am/u_files/file/Voroshum-03_08_21.pdf

[96] Այս չափանիշի գնահատման առավելագույն միավորը 6 (վեց) է

[97] Այս չափանիշի գնահատման առավելագույն միավորը 8 (ութ) է

[98] Այս չափանիշի գնահատման առավելագույն միավորը 8 (ութ) է:

[99] Այս չափանիշի գնահատման առավելագույն միավորը 8 (ութ) է:

[100] Չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 5 (հինգ) է:

[101] Չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 10 (տասը) է:

### 3. 1. 3 Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցույթի փուլեր և մշտադիտարկման արդյունքներ

Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերով:

**1) Փաստաթղթերի ուսումնասիրության փուլ**. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդ է ներկայացնում անհրաժեշտ դիմումը և կից փաստաթղթերը[102]: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կառավարությունը[103]:

**2) Բարեվարքության ուսումնասիրության փուլ**. փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, Խորհուրդը ԿԿՀ է ներկայացնում փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Տվյալ դեպքում, ներկայացվել են Կոմիտեի նախագահի թվով 3 հայտատու թեկնածուների հարցաթերթիկները: ԻՊԱՍ-ը հարցման միջոցով ձեռք է բերել նշված՝ փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից տրամադրված խորհրդատվական եզրակացությունների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն որի՝ **Կոմիտեի նախագահի թվով 3 թեկնածուների վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրել է դրական վերապահումով եզրակացություն, բոլորի համար էլ վերապահման հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:**

**3) Հարցազրույցի փուլ.** Խորհուրդը բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, անցկացնում է հարցազրույց[104]: Հարցազրույցի փուլն իր հերթին իրականացվում է հետևյալ փուլերով.

ա. հարցազրույցի փուլում Խորհուրդը հարցազրույցի միջոցով ստուգում է տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտություններին տիրապետելու, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները (ինքնատիրապետումը, վարվեցողությունը, ունկնդրելու կարողությունը, հաղորդակցման հմտությունները պաշտոնական և արտապաշտոնական հարաբերություններում, վերլուծական կարողությունները և այլն),

բ. համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումների և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար:

**Մշտադիտարկման արդյունքներ.** 2021թ. -ի սեպտեմբերի 10-ին անցկացված Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցույթի հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերի շրջանակներում մշտադիտարկում է իրականացրել ԻՊԱՍ ներկայացուցիչ Անահիտ Մկրտչյանը: Մշտադիտարկման արդյունքում, վեր են հանվել

---

[102] Տե՛ս ՀՀ Կառավարության 2021թ. -ի հունիսի 3- N 895-Ն որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=153222

[103] Նույն տեղում:

104 Հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը Խորհուրդն աշխատակազմի միջոցով հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակում է Աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝ https://www.gov.am/am/

թեկնածուների բարեվարքության և մասնագիտական գիտելիքների հետ կապված խնդիրներ: Այսպես, մրցույթին հայտ ներկայացրած թվով 3 թեկնածուներն են հանդիսացել Սասուն Խաչատրյանը[105], մասնագիտությամբ՝ իրավաբան, հիմնական աշխատանքային փորձը՝ քննչական և դատախազական մարմիններում, այդ թվում՝ ղեկավար պաշտոններում, Գառնիկ Թորոսյանը[106], մասնագիտությամբ՝ իրավաբան, փաստաբան, հիմնական աշխատանքային փորձը՝ ոստիկանության և քննչական մարմիններում, ինչպես նաև սեփական ԱՁ-ում՝ որպես փաստաբան և Դավիթ Մկրտումյանը[107], մասնագիտությամբ՝ տնտեսագետ, հիմնական աշխատանքային փորձը՝ բանկային ոլորտում և ԱԺ-ում՝ որպես աշխատակազմի ղեկավարի օգնական:

Նշված թեկնածուների բարեվարքության և մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վեր են հանվել մի շարք խնդրահարույց հարցեր: Մասնավորապես, բարեվարքության հետ կապված, թեկնածուներից մեկի աղջիկը 4,3 միլիոն ՀՀ դրամի նվիրատվություն է ստացել, որը, թեկնածուի պնդմամբ, տրվել է կնոջ հարազատ եղբոր կողմից՝ որպես հարսանեկան նվեր: Թեկնածուի կնոջ բանկային հաշվին կանխիկ մուտք է կատարվել նաև 2,8 միլիոն ՀՀ դրամի և 1600 ԱՄՆ դոլար չափով գումար, այնուհետև նույն չափով կանխիկ ելք է կատարվել, սակայն այդ տվյալները չեն ներկայացվել տարեկան հայտարարագրում: Ըստ թեկնածուի՝ նշված գումարը փոխառություն չի եղել և ինքը չի իմացել, թե ինչպես այն ներկայացնի հայտարարագրում: Մեկ այլ թեկնածուի բարեվարքության հարցաթերթիկում չեն նշվել թեկնածուի կնոջ և դստեր ստացած եկամուտները՝ վերջին 3 տարում, ինչը, ըստ թեկնածուի՝ վրիպակ է: Թեկնածուն չի հայտարարագրել նաև եկամտի մի մասը՝ 800,000 ՀՀ դրամի չափով:

Թեկնածուներն ունեցել են անշարժ գույքի հետ կապված անհամապատասխանություններ: Մասնավորապես, թեկնածուներից մեկը նշել է, որ տեղյակ չի եղել, որ կինը հայրական տան համասեփականատեր է հանդիսանում: Բացի այդ, կինը հանդիսացել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն, ինչպիսի տեղեկատվությունը, ըստ թեկնածուի՝ թյուրիմացաբար չի նշվել կնոջ հայտարարագրում, քանի որ ընտանեկան բիզնես է եղել, բայց չի աշխատել: Թեկնածուի կողմից նշվել է նաև, որ նա վերջին 3 տարվա ընթացքում օգտվել է կնոջ եղբոր ավտոմեքենայից, որի շուկայական արժեքը մոտ 10 մլն ՀՀ դրամ է: Մեկ այլ թեկնածու նշել է, որ ավտոմեքենայի արժեքի անհամապատասխանությունը հայտարարագրում՝ 400,000 ՀՀ դրամի չափով, տեխնիկական սխալ է:

Թեկնածուներից մեկն իր բարեվարքության հարցաթերթիկում չի նշել Կենտրոնական բանկում ունեցած աշխատանքային փորձը՝ վերջինիս հետ տարաձայնություններ ունենալու, ինչպես նաև դատական վիճաբանությունների մեջ լինելու պատճառով: Բանկի հետ ունեցած տարաձայնությունների հիմքում եղել է թեկնածուի քաղաքացիական ակտիվությունը՝ հեղափոխության ժամանակահատվածում:

Մասնագիտական գիտելիքների ստուգման շրջանակներում, թեկնածուներից մեկը նշել է, որ օրենսգրքերի իմացությունը միգուցե կարևոր է, բայց քանի որ պետական հաստիքների համար քիչ դիմողներ են լինում, փորձել է քայլ անել: Մեկ այլ թեկնածու նշել է, որ հակակոռուպցիոն քաղաքականություն ՀՀ-ում տարվում է վերջին 3 տարում, իսկ մինչև 2017թ. -ը հիշում է ապօրինի հարստացման հատկանիշներով հարուցված մոտ 4-ից 5 քրեական գործ: Մինչդեռ, հակակոռուպցիոն քաղաքականություն ՀՀ-ում տարվում է 2001թ. -ից, իսկ ապօրինի հարստանալը ՀՀ-ում քրեականացվել է 2016թ. -ի դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել 2017թ. -ի հուլիսի 1-ից:

Հարցազրույցի փուլի վերջնական հատվածում՝ համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի/ տոմսի վերաբերյալ թեկնածուների կողմից իրականացվող վերլուծություններն ու դիրքորոշումները նույնպես ներկայացվել են

105 Տե՛ս հայտարարագրերի ռեեստրը՝ http://cpcarmenia.am/hy/declarations-registry/user_id=4566/
106 Տե՛ս ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքի համապատասխան բաժինը՝ https://www.advocates.am/advocates/view/469.html
107 Տե՛ս հայտարարագրերի ռեեստրը՝ http://cpcarmenia.am/hy/declarations-registry/user_id=31038/

ընդհանրական եղանակով, առանց քննարկվող հանցակազմերի բոլոր տարրերի ներկայացման կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկարագրի և դրանց արդյունքների օգտագործման շրջանակի: Տոմսերով առաջադրված հարցերն առնչվել են կաշառքի պրովոկացիային, կաշառք տալու կամ ստանալու նմանակմանը, առաքինության ստուգմանը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներին՝ որպես ապացույց և հայտարարագիրը ԿԿՀ դիտավորությամբ չներկայացնելուն, հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելուն և հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելուն:

**4) Արդյունքների ամփոփման փուլ.** հարցազրույցի արդյունքներով Խորհուրդը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած առնվազն երկու և առավելագույնը երեք թեկնածուները: Տվյալ դեպքում, մրցույթի մասնակից 3 թեկնածուներն էլ հաղթահարել էին հարցազրույցի փուլի անցողիկ շեմը[108], որից հետո սահմանված ընթացակարգին համապատասխան մրցույթում հաղթողների ցուցակը Խորհուրդը 2 օրվա ընթացքում ներկայացրել էր ՀՀ կառավարություն՝ միաժամանակ հրապարակելով հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am)[109] և Վարչապետի աշխատակազմի պաշտոնական ինտերնետային կայքէջում[110]:

Խորհրդի կողմից թեկնածուներին ներկայացնելուց հետո, ՀՀ կառավարությունը Կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ հարցը քննարկել և համապատասխան որոշումը կայացրել է օրենքով սահմանված 10-օրյա ժամկետում: Ներկայացված թվով 3 թեկնածուներից Կառավարությունը Կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակել էր Սասուն Խաչատրյանին՝ վեց տարի ժամկետով[111]:

Նշենք, որ Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Կառավարության անդամների (վարչապետի, երկու փոխվարչապետի և նախարարների) ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը որոշիչ է[112]: Կառավարության որոշումները ստորագրում է վարչապետը, իսկ Կառավարության որոշման հավելվածը՝ վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը Կառավարության նիստում[113] ընդունված տարբերակն է: Այս կարգավորմամբ կարծես բացառվում է Կոմիտեի նախագահի՝ մեկ անձի՝ վարչապետի կողմից նշանակումը, սակայն, միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը որոշիչ է: Հարկ ենք համարում նշել նաև, որ ի սկզբանե, Կոմիտեի նախագահի նշանակումը նախատեսված էր վարչապետի կողմից (ինչպես այժմ Կոմիտեի նախագահի տեղակալների դեպքում է)՝ 8 տարի ժամկետով, ինչը ՔՀԿ-ների ներկայացրած առաջարկությունների[114] հիման վրա փոփոխվեց՝ Վարչապետի փոխարեն նախատեսելով

108 Սասուն Խաչատրյան – 308 միավոր, որից 115-ը՝ բարեվարքության համար, Դավիթ Մկրտումյան – 257 միավոր, որից 121-ը՝ բարեվարքության համար, Գառնիկ Թորոսյան – 202 միավոր, որից 107-ը՝ բարեվարքության համար:

109 Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը հաստատելու մասին թիվ 5 որոշումը՝ https://www.azdarar.am/announcments/org/472/00930911/

110 Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը հաստատելու մասին թիվ 5 որոշումը՝ file:///C:/Users/HP/Downloads/332223%20(1).pdf

111 Տե՛ս ՀՀ կառավարության 2021թ. -ի սեպտեմբերի 16-ի թիվ 1479-Ա որոշումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/36876/

112 Տե՛ս «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=170564

113 Կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է կոլեգիալ, նիստերի միջոցով

114 Տե՛ս ԻՊԱՍ-ի կողմից ներկայացված առաջարկները «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ https://prwb.am/2020/08/17/%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%a1%d6%80%d5%af%d5%b6%d5%a5%d6%80-%d5%b0%d5%a1%d5%af%d5%a1%d5%af%d5%b8%d5%bc%d5%b8%d6%82%d5%ba%d6%81%d5%ab%d5%b8%d5%b6-%d5%af%d5%b8%d5%b4%d5%ab%d5%bf%d5%a5%d5%ab/

Կառավարության կողմից Կոմիտեի նախագահի նշանակում: Սակայն, փոփոխված և ներկայումս գործող իրավակարգավորումներում նույնպես չեն նախատեսվում չափանիշներ, որոնց հիման վրա Կառավարությունը Խորհրդի կողմից իրեն ներկայացված Կոմիտեի նախագահի թվով 3 թեկնածուներից կատարում է կոնկրետ անձի ընտրություն՝ նշանակելով պաշտոնի: Այս ընթացակարգը չի բխում միջազգային չափորոշիչներից, ըստ որոնց մեկ քաղաքական պաշտոնատար անձի կողմից նշանակումը չի հանդիսանում լավ պրակտիկա: Ղեկավարի ընտրությունը և նշանակումը պետք է լինի իշխանության ճյուղերի կոնսենսուսի արդյունք, իրականացվելով բաց, թափանցիկ, մրցակցային և մասնակցության լայն հնարավորություն ապահովող ընթացակարգերի միջոցով, ինչպիսին է, օրինակ՝ ղեկավարի վերջնական նշանակումը խորհրդարանի կողմից՝ նշանակման վերաբերյալ վերջնական որոշման կայացմանը տարբեր ուժերին մասնակից դարձնելու միջոցով:

Գծապատկեր 4. Կոմիտեի ղեկավարի ընտրության ընթացակարգի փուլերը.







- ***Ոչ իրավաչափ ազատման երաշխիքներ***

Հակակոռուպցիոն ինստիտուտի ղեկավարի պաշտոնավարումը պետք է երաշխավորված լինի նաև ոչ իրավաչափ ազատումից[115]: Տվյալ դեպքում, ՀՀ կառավարությունն իրավասու է ինչպես պաշտոնի նշանակելու Կոմիտեի նախագահին, այնպես էլ վաղաժամկետ դադարեցնելու Կոմիտեի նախագահի լիազորությունները՝ նրա կողմից Կառավարություն հրաժարականի դիմում ներկայացնելու և Կառավարության կողմից այն հաստատվելու դեպքում:

115 Ավելի մանրամասն տե՛ս Specialised Anti-Corruption Institutions. Review of models, OECD 2008, https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf, էջ 25-26

Ընդհանուր առմամբ, Կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝ պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը, ՀՀ քաղաքացիությունը կորցնելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը, նրա մահը, նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման առկայությունը, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատվելը, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմում վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝ նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հիվանդություն կամ ֆիզիկական արատ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնեական պարտականությունների կատարումը, նա խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները, նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը, ի հայտ է եկել հետևյալ սահմանափակումներից որևէ մեկը՝ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից, դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից, նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ ռեաբիլիտացնող հիմքով, ունի Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացումը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ, լինելով դատավոր կամ նախկին դատավոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից, լինելով դատախազ, քննիչ, նախկին դատախազ կամ նախկին քննիչ, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից, լինելով հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ կամ նախկին օպերլիազոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից, լինելով փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

- ***Ղեկավարի տեղակալների նշանակումը***

Ինչ վերաբերում է ընդհանրապես քննչական մարմնի ղեկավարի տեղակալների նշանակմանը, ապա այս տեսանկյունից խնդրահարույց կարող է լինել այն, երբ նրանց նշանակումը վերապահված է բացառապես տվյալ մարմնի ղեկավարին, ինչը կարող է

հանգեցնել նրան, որ տեղակալներ նշանակվեն ոչ անկախ անձինք[116]: Հետևաբար, նշանակման գործընթացում պետք է որևէ կերպ ներգրավված լինեն նաև այլ մարմիններ, որոնց միջոցով կգնահատվի թեկնածուի՝ պահանջվող չափանիշներին համապատասխանությունը: Տվյալ դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի դեպքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտեի նախագահը վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը, որոնց արդյունքում էլ վարչապետը կատարում է նշանակում: Այս դեպքում նույնպես պարզ չէ և հայեցողական լիազորություն է վերապահված Կոմիտեի նախագահին այն գործընթացում, թե վերջինս ինչ սկզբունքով և չափորոշիչներով է ընտրում մրցույթում հաղթող ճանաչված Կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուներից կոնկրետ անձի, որի թեկնածությունն էլ առաջարկում է ՀՀ վարչապետին:

## 3. 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՏՀԶԿ-ի կողմից սահմանված աշխատակազմի ընտրության և նշանակման գործոնի շրջանակներում՝ աշխատակազմի ընտրությունն ու նշանակումը պետք է հիմնված լինի օբյեկտիվ, թափանցիկ և արժանիքահեն չափանիշների, անցյալի խորը ստուգման վրա: Միևնույն ժամանակ աշխատակազմը պետք է ունենա պատշաճ երաշխիքներ: Վարձատրությունը պետք է համապատասխանի կատարվող աշխատանքի բնույթին: Պետք է ապահովվեն նաև անվտանգային երաշխիքներ՝ սպառնալիքներից և ճնշումներից պաշտպանելու նպատակով: Իրավապահ մարմիններին առնչվող՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից համակարգված չափանիշների համաձայն՝ պետությունները պետք է սահմանեն իրավապահ մարմինների ծառայողներին ներկայացվող պահանջներ, ապահովեն սահմանված չափանիշներին համապատասխանող անձանց կողմից իրավապահ գործունեության իրականացումը[117]: Պետությունները պետք է ապահովեն, որ իրավապահ բոլոր մարմիններում ծառայության նշանակման համար առկա լինեն գնահատման և ընտրության պատշաճ ընթացակարգեր, որ այդ մարմիններում ծառայողները իրենց գործառույթներն իրականացնելու համար օժտված լինեն պատշաճ բարոյական, հոգեկան և ֆիզիկական հատկանիշներով և ստանան շարունակական և համապարփակ մասնագիտական վերապատրաստումներ[118]: Ընտրման գործընթացում պետք է առկա լինեն կանխակալությունը բացառող երաշխիքներ[119]: Ինչ վերաբերում է ծառայությանը ներգրավման ընթացակարգին, իրավապահ մարմիններում ծառայության անցնելու մասին տեղեկությունները պետք է լինեն հրապարակային[120]:

116 Մոնտենեգրոյի Սահմանադրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիք թիվ CDL-AD(2007)047, Opinion on the Constitution of Montenegro, §§108-109 (https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2007)047-e):

117 Իրավապահ մարմինների վարքագծի կանոններ (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձև թիվ 34/169) https://www.unodc.org/pdf/compendium/compendium_2006_part_04_01.pdf

118 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքներ (1990), § 18

119 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Դատախազների դերի մասին ուղեցույց, § 2 (https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/RoleOfProsecutors.aspx):

120 Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջ 80 (https://www.unodc.org/pdf/criminal_justice/Handbook_on_police_Accountability_Oversight_and_Integrity.pdf):

Ընտրությունը պետք է լինի թափանցիկ և արդար, ընտրության չափանիշները պետք է լինեն նախապես սահմանված և ուղղված լինեն ներգրավելու բարձր որակական հատկանիշներ ունեցող անձանց՝ վերջիններիս ունեցած գիտելիքների և ոչ քաղաքական կամ էթնիկ պատկանելիության հիման վրա[121]: Քննիչների ընտրության գործընթացը պետք է նպաստի քննչական համակարգում ձևավորված արժեքային համակարգի ամրապնդմանը, ինչն ապահովելու նպատակով քննիչների ընտրության, հետագայում նրանց գնահատման գործընթացը պետք է ուղղված լինի նաև պարզելու քննիչների հարգանքը օրենքի, գործող կարգավորումների նկատմամբ: Արժեքային համակարգի տարրեր կարող են համարվել հավատարմությունը, բարեվարքությունը, պատասխանատվությունը, անկողմնակալությունը, թափանցիկությունը, մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը[122]: Քննիչների նշանակման գործընթացում կարևոր տեղ պետք է զբաղեցնի բարեվարքությանն առնչվող հատկանիշների գնահատումը: Բարեվարքության գնահատումն ուղղված է վեր հանելու հնարավոր կոռուպցիոն գործողություններում ներգրավվածությունը, այդպիսի ներգրավվածության հավանականությունը,[123] տվյալ պաշտոնատար անձի կողմից կոռուպցիոն տարրեր ենթադրող իրավիճակներում կոռուպցիայի չտրվելու կարողությունը[124]:

Կարևոր են նաև հոգեբանական թեստերը ինչպես քննիչների պաշտոնի նշանակման գործընթացի ընթացքում, այնպես էլ հետագայում: Հոգեբանական թեստերը պետք է ուղղված լինեն բացահայտելու այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բռնության հակումը, անազնվությունը և այլն, իսկ արժեքային համակարգին վերաբերող թեստերն առնչվում են էթիկային, վարքագծի կանոններին[125]: Հոգեբանական թեստերը կարող են ներառել, օրինակ, լարված պայմաններում որոշում կայացնելու ունակության, ինտելեկտի, թիմում աշխատելու կարողությունների ստուգում և այլն: Հետևաբար, արդյունավետ քննչական համակարգ ձևավորելու համար պետք է գնահատվեն ոչ միայն գործող օրենսդրության իմացությունը, գործնական ունակությունները փաստաթղթային եղանակով, այլև թեկնածուի և քննիչի անձնական հատկանիշները, հոգեբանական պատրաստվածությունը, վերաբերմունքը էթիկայի հիմնարար նորմերի նկատմամբ: Նշված հարցերը կարևոր են ոչ միայն զուտ քննչական մարմինների ծառայողների ընտրության և նշանակման գործընթացի թափանցիկության և անկախության նկատառումներով, այլև, հետագայում, այդ ծառայողների կողմից կարգապահական խախտումներ թույլ չտալու հակվածության և հետագայում, նրանց անդամակցությամբ և մասնակցությամբ իրականացվող ծառայողական քննությունների և կարգապահական վարույթների անաչառ և արդյունավետ իրականացման նպատակով:

### 3. 2. 1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորում

ՀՀ-ում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: Կոմիտեի ծառայողների[126] թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային հանձնաժողով[127]՝ կազմված

---

[121] Նույն տեղում:

[122] DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջեր 66-70 (https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/DCAF_PIBP_Toolkit_ENG_2019_web.pdf):

[123] Նույն տեղում, էջ 308:

[124] ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 11-րդ հոդվածի մեկնաբանման ուղեցույց (2015), էջ 11: (https://www.unodc.org/documents/corruption/Publications/2014/Implementation_Guide_and_Evaluative_Framework_for_Article11-English.pdf)

[125] DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջ 63-70:

[126] Կոմիտեի նախագահի տեղակալ, Կոմիտեի վարչության, այդ թվում՝ տարածքային վարչության պետ և նրա տեղակալ, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, հատկապես կարևոր գործերով քննիչ, Կոմիտեի բաժնի պետ և նրա տեղակալ, ավագ քննիչ, քննիչ, ավագ օպերլիազոր, օպերլիազոր:

[127] Մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատվել է Կոմիտեի նախագահի 16. 11. 2021թ. -ի N 20-L հրամանով:

Կոմիտեի նախագահի նշանակած Կոմիտեի երեք ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից, քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցչից (ընդհանուր՝ 5 անդամ): Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԿԿ նախագահից բացի, մնացած բոլոր աշխատակիցները ժամանակավոր պաշտոնակատար էին առաջին մրցույթի անցկացման պահին, սահմանվեց, որ Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմն այլ է, դրա մեջ մտնում են հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի երկու և Գլխավոր դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության մեկական ներկայացուցիչ (ընդհանուր՝ 5 անդամ): Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև երեք միջազգային փորձագետներ: Միջազգային փորձագետի թեկնածություն կարող են առաջադրել վերջին երկու տարվա ընթացքում ՀՀ-ի հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունները[128], որոնց կողմից առաջադրված փորձագետի թեկնածուներն ունեն հակակոռուպցիոն ոլորտում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն: ՔՀԿ ներկայացուցչի թեկնածություն կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության հինգ տարվա փորձառություն, իսկ իրենց կողմից առաջադրված փորձագետն ունի առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձառություն[129]: Կոմիտեի ծառայող չհանդիսացող մյուս անձինք Հանձնաժողովում որպես անդամ կարող են ընդգրկվել, եթե ունեն առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ: Վերջիններիս ներգրավման այլ պայմաններ՝ ինչպես Կոմիտեի նախագահի ընտրության մրցութային Խորհրդի անդամի ներգրավման դեպքում է, ուղղակիորեն նախատեսված չեն (*կուսակցական պատկանելիություն չունենալը, պարտադիր քրեական մասնագիտացման դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերլիազորի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ ունենալը*):

Այսպես, Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովը ձևավորվել է 2021թ. -ի դեկտեմբերի 2-ին[130]: Հանձնաժողովի նախագահ է նշանակվել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արմեն Հովհաննիսյանը, ապա ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցը, իսկ մրցույթի գրավոր և բանավոր փուլերի միջև ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփի Սարգսյանը, պայմանավորված Երանուհի Թումանյանցի Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածու առաջադրվելու հետ: Հանձնաժողովի մյուս անդամներն են հանդիսացել՝ ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Քրիստինե Գաբուզյանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության պետ Արամ Մինասյանը, Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Էդգար Արսենյանը և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի ներկայացուցիչ Վաղարշ Աղաբեկյանը[131]: Այս մրցույթի

128 Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2021թ. -ի նոյեմբերի 16-ի «Կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 20-Լ հրամանը

129 Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 16. 11. 2021թ. -ի թիվ 22Լ հրամանը

130 Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 02. 12. 2021թ. -ի՝ «Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողով ձևավորելու մասին» № 45-Ա հրամանը

131 Կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման համար հայտարարված մրցույթում ներկայացվել է մեկ հայտ

շրջանակներում ևս միակ հայտ ներկայացրած միջազգային կազմակերպությունը եղել է Զարգացման իրավունք միջազգային կազմակերպությունը (IDLO, փորձագետ Վիտալի Կասկո):

Չնայած այն հանգամանքին, որ մինչև Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ամբողջական համալրումը, պետք է շարունակեր գործել վերը նշված կազմով հանձնաժողովը, Կոմիտեի կողմից նախաձեռնվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ[132], որով նախատեսվել է դադարեցնել առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովի գործունեությունը ոչ թե Կոմիտեի ծառայողների կազմի ամբողջական համալրման, այլ Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման և ինքնավար թափուր պաշտոնների 60 տոկոսի համալրման պահից[133]: Այս օրենքն ուժի մեջ է մտել 2022թ. -ի նոյեմբերի 24-ին, որից հետո Կոմիտեի մնացած թափուր պաշտոնների համալրման համար նոր մրցույթներն արդեն անցկացվելու են օրենքով նախատեսված հիմնական մրցութային հանձնաժողովի կողմից՝ կազմված Կոմիտեի նախագահի նշանակած Կոմիտեի երեք ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից և ՔՀԿ մեկ ներկայացուցչից: Սա պայմանավորված է նրանով, որ մրցութային հանձնաժողովին են վերապահված տարատեսակ այլ գործառույթներ (*օրինակ՝ Կոմիտեի ծառայողների հերթական և արտահերթ ատեստավորումները, առաջխաղացման ցուցակների կազմման աշխատանքները*), որոնք չեն կարող իրականացվել առաջին կազմի մրցութային հանձնաժողովի կողմից, քանի որ դրանում ընդգրկված չէ Կոմիտեի որևէ ներկայացուցիչ:

### 3. 2. 2. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնի թեկնածուին ներկայացվող պահանջներ և մրցույթի ընթացակարգային հարցեր

Այսպես, Կոմիտեի նախագահը Կոմիտեում թափուր պաշտոն առաջանալու դեպքում նշանակում է մրցույթ՝ մեկ ամսվա ընթացքում[134]՝ այդ մասին մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ հրապարակելով նաև հայտարարություն՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am[135]) և Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում[136]: Հայտարարության ձևը, որը ներառում է թեկնածուին ներկայացվող պահանջները, մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ դիմումին կից փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը, մրցույթն անցկացնելու պայմանները, թեստային առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ, թեկնածուներին ներկայացվող պահանջները գնահատելու առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատելու և միավորները հաշվարկելու կարգը և այլն, կազմում է մրցութային հանձնաժողովը և ներկայացնում Կոմիտեի նախագահի հաստատմանը: Մրցութային հանձնաժողովի կողմից է կազմվում և Կոմիտեի նախագահի կողմից հաստատվում նաև Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը, որ ներառում է թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի

---

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի (ներկայացուցիչ Վաղարշ Աղաբեկյան) կողմից, որն էլ ճանաչվել է հաղթող, տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-draft.am/projects/3686/justification

[132] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=170549

[133] Տե՛ս նախագծի հիմնավորումները՝ https://www.e-draft.am/projects/4180/about

[134] Բացառությամբ Կոմիտեի այն պաշտոններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ

[135] Տե՛ս, օրինակ՝ https://www.azdarar.am/announcments/org/117/00995313/

[136] Տե՛ս, օրինակ՝ https://www.facebook.com/photo/?fbid=130553632761327&set=pb.100074200721560.-2207520000.

ցանկը[137], թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի երեք տարբերակները[138], թեստավորման անցկացման պայմանները, թեստավորման անցողիկ միավորը և այլն:

Նշված ակտերին համապատասխան՝ **Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածուներին ներկայացվող պահանջները** ներառում են՝ ՀՀ քաղաքացիությունը, ՀՀ-ում մշտապես բնակությունը, բարձրագույն կրթությունը, հայերենին տիրապետելը, պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով ազատված լինելը, ռուսերենից, անգլերենից կամ ֆրանսերենից ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած[139] այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացությունը (պարտադիր չէ), պաշտոնին ներկայացվող օրենքով նախատեսված պահանջներին բավարարելը և պաշտոնի նշանակման համար օրենքով սահմանված սահմանափակումների բացակայությունը:

**Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն հանրագումարային միավոր սահմանվել է 100 միավոր, որից**

1) **50 միավորը՝ թեստավորման փուլում ստացվող առավելագույն միավորն է** (անցողիկ միավորը առավելագույն 50 միավորի 70%-ն է),
2) **50 միավորը՝ հարցազրույցի փուլում մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից թեկնածուին տրվող գնահատման առավելագույն միավորը** (անցողիկ միավորը առավելագույն 50 միավորի 70%-ն է, որից առնվազն 22 միավորը պետք է լինի բարեվարքության համար): Նշենք, որ հարցազրույցի փուլի համար առավելագույն 50 միավորն իր հերթին բաշխվում է ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների՝
   - **անձնական որակներ՝ 15 միավոր,**
   - **բարեվարքություն՝ 29 միավոր,**
   - **պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումներ՝ 6 միավոր:**

Նշված միավորների հաշվառմամբ, Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցաթերթիկում նշում է թեկնածուի կողմից իր գնահատման արդյունքում ստացած միավորների հանրագումարը՝ միաժամանակ նշելով գնահատման ենթակա առանձին պահանջների շրջանակներում թեկնածուի ստացած միավորների հանրագումարները:

### 3. 2. 3 Մրցույթի փուլեր

Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, թեստավորման, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերով:

---

[137] Սահմանադրությունը, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերը, վերաբերելի նախադեպային որոշումները, քրեական օրենսգիրքը (05.05.2021թ.-ին ընդունված), քրեական դատավարության օրենսգիրքը (30.06.2021թ.-ին ընդունված), քաղաքացիական օրենսգրքի գլուխ 5-ը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի գլուխ 11-ը, 12.1-ը

[138] Թեստավորման հարցարանի երեք տարբերակները հաստատելուց հետո Կոմիտեի նախագահը հաստատած տարբերակները փակ ծրարով (Կոմիտեի նախագահի կնիքով կնքված) փոխանցում է Հանձնաժողովին, որն էլ Հանձնաժողովը բացում է թեստավորման անցկացման օրը մասնակիցների ներկայությամբ

[139] Տե՛ս ՀՀ կառավարության 17 հունիսի 2021 թվականի N 989-Ն որոշումը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի թեկնածուի լեզվական գիտելիքների իմացության ստուգման կարգը և անհրաժեշտ մակարդակը սահմանելու մասին՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=153713

**1) Փաստաթղթերի ուսումնասիրության փուլ.** մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության համապատասխան աշխատակցին ներկայացնում են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը[140]: Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը կազմվում է Հանձնաժողովի կողմից և հաստատվում Կոմիտեի նախագահի կողմից:

**2) Թեստավորման փուլ.** փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, Հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների համար կազմակերպում է թեստավորման փուլը, որի ընթացքում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները: Թեստավորումն անցկացվում է հավակնորդների համար ծածկագրի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով: Թեստավորման առաջադրանքները բաղկացած են 100 հարցից: Յուրաքանչյուր հարց կարող է ունենալ միայն մեկ ճիշտ պատասխան: Թեստի կատարման համար մրցույթի մասնակցին տրամադրվում է 3 ժամ 20 րոպե ժամանակ: Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների կատարման համար հատկացված ժամանակն սպառվելուց հետո հավակնորդը ամփոփաթերթը գցում է կնքված արկղը, իսկ թեստային առաջադրանքի իր օրինակը վերադարձնում է Հանձնաժողովին: Ամփոփաթերթի երկրորդ բնօրինակը տրամադրվում է մրցույթի մասնակցին: Թեստավորման ավարտից անմիջապես հետո հանձնաժողովը հրապարակում է թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը: Թեստային առաջադրանքների կատարման ընթացքում հարցին պատասխանելիս ջնջումների, մեկից ավելի պատասխանի, մեկից ավելի նշումի առկայության դեպքում նշված ճիշտ պատասխանի համար միավոր չի տրվում: Թեստավորման անցկացման նույն օրը կազմվում և Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակվում է թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի օրը և վայրը: Ինչպես նշեցինք, թեստավորման փուլի համար առավելագույն միավորը 50-ն է, որից անցողիկ է համարվում դրա 70%-ը:

Նշենք նաև, որ թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել Կոմիտեի նախագահին թեստավորման արդյունքների մասին հրապարակելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում: Բողոքը և դրա հետ կապված անհրաժեշտ նյութերը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի նախագահը քննում է դիմումը և ընդունում թեստավորման արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում, բացառիկ դեպքերում բողոքը քննարկելու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեք օր: Եթե Կոմիտեի նախագահը մասնակցի բողոքը համարում է հիմնավոր, որոշում է բավարարել այն և սխալ է համարում թեստային որևէ առաջադրանք, ապա այդ որոշման հիման վրա տվյալ հարցի համար միավոր չստացած բոլոր մասնակիցների միավորներն ավելացվում են, և կատարվում է թեստավորման արդյունքների վերահաշվարկ: Բողոքարկման դեպքում թեստավորման արդյունքների վերահաշվարկ կատարելու դեպքում նույն օրը հրապարակվում է վերանայված ցանկը:

3) Բարեվարքության ուսումնասիրության փուլ. Հանձնաժողովը թեստավորման փուլի ավարտից հետո ԿԿՀ է ներկայացնում թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

4) Հարցազրույցի փուլ. Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը՝ հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով իր պաշտոնական կայքէջում:

---

[140] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799

Նշենք, որ օրենքը թույլ է տալիս հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով Հանձնաժողովում ներգրավելու նաև հոգեբանի: Հարցազրույցի փուլում Հարցազրույցի անցկացման սենյակում կարող են ներկա գտնվել Հանձնաժողովի անդամները, հոգեբանը, դիտորդները և միայն մեկ մասնակից:
Հարցազրույցի փուլում Հանձնաժողովի անդամները գնահատում են՝

- մասնակցի աշխատանքային ձեռքբերումները,
- վերլուծական կարողությունները,
- տարբեր իրավիճակներում վարվեցողությունը,
- պատասխանատվության զգացումը,
- հաղորդակցման հմտությունները,
- տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթը, ակնկալիքները և
- այդ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակներ և արժանիքներ:

Հարցազրույցի ընթացքում մասնակցին կարող են նաև հարցադրումներ արվել ԿԿՀ-ի ներկայացրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների վերաբերյալ: Մասնակցին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքներն ստուգելու նպատակ:

### 3. 2. 4 Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթի մշտադիտարկման արդյունքների ամփոփում

- **Թեստավորման փուլ**

ԻՊԱՍ ներկայացուցչի կողմից դիտարկման է ենթարկվել Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2022թ. -ի օգոստոսի 18-ին անցկացված մրցույթի թեստավորման փուլը, որը կազմակերպվել էր միաժամանակ Կոմիտեի բոլոր հայտարարված թափուր ինքնավար պաշտոնների համար, այդ թվում՝ Կոմիտեի նախագահի տեղակալների: Հայտարարված 39 թափուր հաստիքների համար դիմել է ընդհանուր թվով 47 հավակնորդ, որից 2-ը (4%)՝ իգական սեռի ներկայացուցիչ: Գրավոր թեստավորման փուլը հաղթահարել է 43 թեկնածու (որից 2-ը (5%)՝ իգական սեռի ներկայացուցիչ): Թեկնածուներից 4-ը (9%) ստացել են անցողիկ՝ 35 միավորից պակաս միավոր: Մրցույթը հաղթահարած թեկնածուների միջինացված միավորը՝ 46-ն էր, նվազագույնը՝ 36-ը, առավելագույնը՝ 50-ը (3 թեկնածու):

Թեստավորման փուլին ներկա են եղել Հանձնաժողովի 4 անդամները (բացակայել է ՔՀԿ ներկայացուցիչը): Հատկանշական է, որ ամփոփաթերթիկների ստուգման գործընթացին մասնակցել են նաև հանձնաժողովի անդամ չհանդիսացող ԱՆ աշխատակիցներ՝ հաշվարկն արագացնելու նպատակով:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, մրցույթը սկսվել է զգալի ուշացումով, ինչի արդյունքում Հանձնաժողովը ստիպված է եղել աշխատել 8 ժամից ավելի՝ առանց ընդմիջումների: Բացի այդ, թեստերի ամփոփաթերթերը տպվել են երկու փուլով, որոնց մի մասում առկա է եղել տպագրական վրիպակ: Մի քանի դեպքում, միևնույն համարի ամփոփաթերթիկներ ստացել են 2 հավակնորդներ, ինչը՝ թեստի անանուն լրացման պարագայում հավակնորդի, հետևաբար նաև լրացված թեստի արդյունքների նույնականացման խնդիր կարող էր ստեղծել: Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել նաև, որ թեստային առաջադրանքներն իրենց բնույթով թույլ չեն տվել ստուգել թեկնածուների վերլուծական հմտությունները, իսկ հարցազրույցի փուլում մասնագիտական գիտելիքի ստուգումը չպետք է իրականացվի:
Արդյունքների հրապարակումից հետո, թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու հիմքով մրցույթի 2 հավակնորդի կողմից ներկայացվել է բողոք Կոմիտեի նախագահին: 2 բողոքներն էլ մերժվել են և թեստավորման արդյունքները թողնվել են նույնը:

- **Բարեվարքության ուսումնասիրության փուլ**

Հանձնաժողովը թեստավորման փուլի ավարտից հետո ԿԿՀ է ներկայացրել թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

**Հարցման արդյունքներ.** ԻՊԱՍ-ը հարցման միջոցով ձեռք է բերել թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից տրամադրված խորհրդատվական եզրակացությունների վերաբերյալ տեղեկություն, ըստ որի՝ թեստավորման փուլը հաղթահարած 43 թեկնածուներից 22-ի (51%) վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 15-ի (35%) վերաբերյալ՝ դրական վերապահումով, 5-ի (12%) վերաբերյալ՝ բացասական եզրակացություն: Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում, 1 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել:[141]

**Գծապատկեր 1. Թեստավորման փուլը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից տրված եզրակացությունները**




***Աղյուսակ 1. ԿԿՀ կողմից տրված բարեվարքության եզրակացությունների ամփոփում***

| **Հարցազրույցի փուլի արդյունքում բավարար միավորներ ստացած թվով 32 թեկնածուներ** | **Հարցազրույցի փուլի արդյունքում բավարար միավորներ չստացած թվով 11 թեկնածուներ** |
|---|---|
| **19-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրել է դրական եզրակացություն** | **3-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրվել է դրական եզրակացություն** |
| **1-ի վերաբերյալ տրամադրվել է բացասական եզրակացություն**<br>*հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և կարգապահական պատասխանատվության և աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը:* | **4-ի վերաբերյալ տրամադրվել է բացասական եզրակացություն**<br>- *2-ի համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը,* |

141 Տեղեկատվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի կողմից տրամադրվել է 03. 11. 22թ. -ին՝ ԻՊԱՍ 14. 10. 22թ. -ի հարցմանն ի պատասխան:

| | |
|---|---|
| | - *1-ի համար՝ թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները,*<br>- *1-ի համար՝ թեկնածուի աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը և կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը:* |
| **11-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրվել է դրական վերապահումով եզրակացություն**<br><br>- *5-ի համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները*<br>- *4-ի համար՝ թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը,*<br>- *2-ի համար՝ թեկնածուների աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը:* | **4-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրվել է դրական վերապահումով եզրակացություն**<br><br>- *2-ի համար հիմք են հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը և ներկայացված տվյալների անարժանահավատությունը,*<br>- *1-ի համար՝ աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը և բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների անարժանահավատությունը,*<br>- *1-ի համար՝ աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը:* |
| **1 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ, վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել՝ ԿԿՀ անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում:** | |

- **Հարցազրույցի փուլ**

ԻՊԱՍ ներկայացուցչի կողմից մշտադիտարկման են ենթարկվել Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2022թ.-ի հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 3-ին անցկացված հարցազրույցների փուլերը: Հարցազրույցի փուլին մասնակցել է Հանձնաժողովի 5 անդամ՝ ՀՀ ԱՆ երկու ներկայացուցիչ, ՄԻՊ և Գլխավոր դատախազության մեկական ներկայացուցիչ, ՔՀԿ մեկ ներկայացուցիչ, ինչպես նաև՝ խորհրդատվական ձայնով՝ միջազգային փորձագետը:

Ստորև ներկայացվող տվյալներն արտացոլում են թեկնածուների անձը բնութագրող տեղեկատվություններն այնքանով, որքանով նրանց համապատասխան հարցեր է ուղղել

Մրցութային հանձնաժողովը: Նշենք, որ միջազգային չափանիշներով կարևորվում է նաև հոգեբանական թեստերի անցկացումը՝ քննիչների բռնության հակումը, անազնվությունը, լարված պայմաններում որոշում կայացնելու ունակությունը, ինտելեկտի, թիմում աշխատելու կարողությունները ստուգելու նպատակով, որոնք օբյեկտիվորեն հնարավոր են ստուգել հոգեբանի մասնակցությամբ, մինչդեռ գործնականում մրցութային հանձնաժողովում չի ներգրավվել հոգեբան, իսկ գրավոր թեստավորման փուլի հարցաշարերը չեն ներառել հոգեբանական, ինչպես նաև արժեքային[142] հարցեր, որոնք ընդհանուր առմամբ վեր են հանում թեկնածուի բռնության հակումը, անազնվությունը, վերաբերմունքը էթիկայի հիմնարար նորմերի նկատմամբ և այլն:

Հարցազրույցին մասնակցել է գրավոր փուլը հաղթահարած 43 թեկնածու, որոնցից միայն երկուսն (5%) են եղել իգական սեռի ներկայացուցիչ:

**Գծապատկեր 2. Թեստավորման փուլը հաղթահարած թեկնածուների սեռը**




Հարցազրույցի ընթացքում միշտ չէ, որ կարելի էր հասկանալ, թե թեկնածուն ո՞ր պաշտոնի համար է դիմել: Թեկնածուների զգալի մասը հարցազրույցի օրվա դրությամբ հանդիսացել են ՀԿԿ ինքնավար պաշտոնի պաշտոնակատարներ, որոնք հիմնականում դիմել են այդ պահին զբաղեցրած պաշտոնի համար: Թեկնածուներից մի մասը հարցազրույցի օրվա դրությամբ հանդիսացել են Պետական եկամուտների կոմիտեի ծառայող, Քննչական կոմիտեի քննիչ, փաստաբան, Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակից, զբաղվածություն չունեցող անձ և այլն: Դիմող չի եղել Ազգային անվտանգության ծառայությունից:

**Գծապատկեր 3. Թեկնածուների զբաղեցրած պաշտոնները**




Ինչպես նշվեց, հարցազրույցի օրվա և ժամի մասին տեղեկություններ պետք է հայտնվեն հարցազրույցից առնվազն երեք օր առաջ: Հարցազրույցի փուլի մասին հայտարարությունը

142 DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջ 63-70:

տեղադրվել է 28. 09. 2022թ. -ին, ժամը 18:57-ին՝ 01. 10. 2022թ. -ի ժ. 10:00-ի համար, և 30. 09. 2022թ. -ին, ժամը 17:55-ին՝ 03.10.2022թ. -ի ժամը 09:30-ի համար:

Կոմիտեի ինքնավար պաշտոնների հարցազրույցի փուլն անցկացվել է երկու խմբով՝ 43 թեկնածուների ցուցակի առաջին 28 թեկնածուների հարցազրույցի հրավիրվել են 2022թ.-ի հոկտեմբերի 1-ին (շաբաթ օր) ժամը 10:00-ից, մյուսներինը՝ հոկտեմբերի 3-ին (երկուշաբթի օր) ժամը 09:30-ից:

Հարցազրույցի երկու օրն էլ Հանձնաժողովն աշխատել է մինչև ժամը 23:00-ն: **Հանձնաժողովի երկարաժամյա աշխատանքը պայմանավորված է եղել մրցույթն անցկացնելու համար նախատեսված ժամկետները պահպանելու անհրաժեշտությամբ**: Այնուամենայնիվ, հոկտեմբերի 1-ին հրավիրվածներից ոչ բոլորն են հասցրել մասնակցել հարցազրույցին, քանի որ օրվա ընթացքում հանձնաժողովը հասցրել է լսել հրավիրված 28 թեկնածուից միայն 22-ին: Յուրաքանչյուր թեկնածուի հարցազրույցը տևել էլ միջինում 27 րոպե, ամենակարճը՝ 14 րոպե, ամենաերկարը՝ 50 րոպե: Հարցազրույցի տևողությունը հիմնականում պայմանավորված է եղել ԿԿՀ կողմից արձանագրված խնդիրների քանակով, բարդությունով և թեկնածուի՝ դրանց կապակցությամբ տրված բացատրություններով:

Սեղմ ժամկետում հարցացրույցներ կազմակերպելու և անցկացնելու պատճառով առաջացել է նաև մեկ այլ խնդիր. 43 թեկնածուի վերաբերյալ բարեվարքության գնահատման եզրակացությունների թարգմանությունը միջազգային փորձագետին տրամադրվել է հարցազրույցի անցկացման նախօրեին, ուստի վերջինս չի հասցրել պատշաճ պատրաստվել առաջին օրը հարցազրույցի հրավիրված բոլոր 28 (փաստացի 22) թեկնածուներին հարցեր ուղղելու համար: Բացի այդ, մի քանի անգամ արձանագրվել է թարգմանության ապահովման խնդիր՝ տեխնիկական պատճառներով, և թեկնածուն միջազգային փորձագետի հարցը լսել է ռուսերեն:

Լուրջ մտահոգության տեղիք է տվել այն հանգամանքը, որ Հարցազրույցի անցկացման օրերին Հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են լսել բոլոր թեկնածուներին, քանի որ բացակայել են սենյակից, որոշ դեպքերում՝ մի քանի ժամով: Արձանագրվել են դեպքեր, երբ թեկնածուին լսել են ընդամենը երկու անդամ /հինգից/ և միջազգային փորձագետը: Այստեղ ծագում է նաև Հանձնաժողովի իրավազորության հարցը, քանի որ ըստ Հանձնաժողովը կազմված է 5 անդամից, իսկ համաձայն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 16. 11. 2021թ. -ի N20-Լ հրամանի 36-րդ կետի՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Պետք է նշել, որ թեկնածուի գնահատման ժամանակ բացակայող անդամները գնահատական չեն դրել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անդամների գնահատման առանձնահատկությունները, որոշ անդամների չգնահատելն ազդել է վերջնական միջինացված արդյունքների վրա, ուստի թեկնածուները գտնվել են ոչ հավասար պայմաններում:

**Սահմանված կարգի համաձայն՝ հարցազրույցի փուլում Կոմիտեի նախագահի տեղակալների, վարչության պետի, վարչության պետի տեղակալի, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի, հատկապես կարևոր գործերով քննիչի, ավագ քննիչի, քննիչի թեկնածուի անձնական որակները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝**

1. **տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթն ու ակնկալիքը**, ներառյալ՝

ա. Կոմիտեի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն.

բ. վերաբերմունքը կոռուպցիայի, դրա դրսևորումների ու հանրային վտանգավորության նկատմամբ.

2. **ղեկավարման և կառավարչական հմտությունները,** ներառյալ՝

ա. թիմ ղեկավարելու փորձառություն.

բ. նախաձեռնողականություն.

գ. թիմային աշխատանքի ունակություն.

դ. սեփական զգացմունքները կառավարելու ունակություն ու ինքնատիրապետում.

ե. այլ անձանց և սեփական մասնագիտական կարողությունների ճիշտ գնահատման ու աշխատանքի և պարտականությունների արդար բաժանման կարողություն.

զ. աշխատանքում առաջնահերթությունները սահմանելու կարողություն.

է. անհրաժեշտ իրավիճակներում ինքնուրույն որոշում կայացնելու ունակություն.

**3. <u>հաղորդակցման հմտություններր պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերություններում</u>**, ներառյալ՝

ա. այլ անձանց ունկնդրելու կարողություն.

բ. նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակություն.

գ. այլ անձանց նկատմամբ հարգալիրություն.

դ. անկաշկանդ շփվելու կարողություն.

ե. միջավայրին արագ հարմարվելու ունակություն.

զ. վստահություն ներշնչելը.

է. զսպվածություն.

**4. <u>պատասխանատվության զգացումը</u>**, ներառյալ՝

ա. ճշտապահություն.

բ. կատարած արարքների հետևանքները կրելու պատրաստակամություն.

գ. սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն.

դ. սեփական սխալներն ու թերություններն ընդունելու և դրանց մասին բարձրաձայնելու ունակություն.

ե. հետևողականություն.

զ. սթրեսակայունություն:

**Թեկնածուի բարեվարքությունը գնահատվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև ԿԿՀ-ի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը՝**

1. գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին.
2. շահերի բախման առաջացման ռիսկը և շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողություն.
3. նախկինում քրեական կամ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված չլինելը.
4. Էթիկայի կանոններին տիրապետելը.
5. վերաբերմունքը քրեական ենթամշակույթի ու դրա բաղադրիչների նկատմամբ և անօրինականության մասին ազդարարելու պատրաստականություն.
6. զբաղեցրած պաշտոնից դուրս պաշտոնեական դիրքը չօգտագործելը, հեղինակություն և ազդեցություն չկիրառելը.
7. քաղաքական չեզոքություն, քաղաքական և այլ ճնշումներին դիմագրավելու կարողություն ու ցանկություն:

Թվարկված չափանիշներից յուրաքանչյուրն ունեն գնահատման տարբեր առավելագույն միավորներ՝ 3 (երեք)-ից 6 (վեց):

**Գործնականում, Հանձնաժողովը տվել է հետևյալ տեսակի հարցեր՝** պաշտոնի համար դիմելու դրդապատճառները, ընտանեկան կարգավիճակը, երեխաների առկայության և դպրոցական տարիքի լինելու դեպքում՝ դպրոցի տեսակը /վճարովի/անվճար/, ընտանիքում այլ աշխատողների առկայությունը, եկամտի չափը, բնակության վայրը և ում է այն պատկանում սեփականության իրավունքով, հայտարարագրի լրացման հետ արձանագրված խնդիրների վերաբերյալ հարցեր, անշարժ և շարժական գույքի առկայությունը ու դրա ձեռքբերման համար միջոցների ծագման աղբյուրը, ընդհանուր առմամբ դրամական միջոցների ծագման աղբյուրը, թեկնածուի վերաբերյալ հրապարակումների առկայության դեպքում՝ դրանց վերաբերյալ հարցեր, կարգապահական, վարչական տույժի ենթարկվելու

քաղաքացիական հայցեր ունենալու, քրեական գործով անցնելու դեպքում՝ դրանց վերաբերյալ հարցեր, քաղաքական հայացքների, հանցավոր ենթամշակույթին վերաբերմունքի, վերադասի կողմից կաշառք պահանջելու մասին տեղեկանալու դեպքում արձագանքի, հարազատի կամ ընկերոջ կողմից խնդրանքին արձագանքելու, Հայաստանից դուրս ընտանիքով հանգստանալու, կոռուպցիոն գործերի քննության հաջողության օրինակ պրակտիկայից, սոցիալական ցանցերում ակտիվության, իսկ վերաբերելի դեպքերում նաև թիմային աշխատանք կատարելու, թիմ ղեկավարելու ունակությունների վերաբերյալ հարցեր:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ոչ բոլոր թեկնածուներին են տրվել բոլոր նույն հարցերը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված էր նաև Հանձնաժողովի կոնկրետ անդամների ներկայությամբ կամ բացակայությամբ: Բացի այդ, Հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են հարցեր ուղղել թեկնածուներին: Ակտիվ դերակատարություն է ունեցել միջազգային փորձագետը՝ բազմաթիվ հարցեր ուղղելով ԿԿՀ եզրակացության մեջ արձանագրված խնդիրների առնչությամբ:

Օրինակ՝ քաղաքական հայացքների կամ «վերադասի կողմից կաշառք պահանջելու մասին իմանալու դեպքում ձեռնարկված քայլերի» մասին հարց տրվել է միայն թեկնածուների 35%-ին: «Հանցավոր ենթամշակույթին վերաբերմունքը, այն կրողներին առնչվելը» գնահատելը շատ ձևական բնույթ է կրել:

Թեկնածուների ճնշող մեծամասնությունը դժվարացել են բերել իրենց կողմից քննված կոռուպցիոն գործերի հաջողության օրինակ, որի արդյունքում կայացվել է մեղադրական դատավճիռ, իսկ որոշ դեպքերում բերված օրինակների վերաբերյալ միջազգային փորձագետը նշել է, որ դա չի համարվում կոռուպցիոն հանցագործություն:

Պետք է փաստել, որ թեկնածուները մինչև հարցազրույցի մասնակցելը փաստացի չէին տեղեկացվել ԿԿՀ եզրակացության բովանդակության մասին, անգամ առ այն, թե ինչ տեսակի եզրակացություն է տվել ԿԿՀ-ն՝ տեղյակ չլինելով, որ կարող են դիմել և ստանալ այն: Նման պրակտիկան պետք է վերանայվի, և անձը պետք է ստանա իր վերաբերյալ եզրակացությունը, անկախ սեփական նախաձեռնությամբ դրանք պահանջելու հանգամանքից, քանի որ, **որպես կանոն, ԿԿՀ-ն թեկնածուի պահանջով տրամադրում է վերջինիս վերաբերյալ կազմված եզրակացությունն ամբողջությամբ, սակայն գործնականում թեկնածուներն այդ իրավունքի մասին պատշաճ իրազեկված չեն և չեն օգտվում դրանից մինչև հարցազրույցի փուլը:** Հարցազրույցի երկրորդ օրը հարցազրույցին մասնակցողներն ավելի լավ են պատկերացրել հարցազրույցի հարցերը, այդ թվում՝ բարեվարքությանն առնչվող, ուստիև հնարավորություն են ունեցել խնդիրների վերաբերյալ բացատրություններ պատրաստել:

Բացի այդ, գտնում ենք, որ ԿԿՀ եզրակացության դերի բարձրացման և մրցույթ անցկացնող պետական մարմնի նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանման մեկ այլ մեխանիզմ է՝ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից տրված եզրակացությունների առնվազն եզրափակիչ մասի և վերհանված խնդիրների հրապարակումը ԿԿՀ կայքում և բաց հանրային հարթակներում:

**Արձանագրվել են նաև հայտարարագրի լրացման հետ կապված խնդիրներ:** Պետք է նշել, որ 43 թեկնածուներից միայն 2-ը (5%) թույլ չեն տվել խախտումներ հայտարարագրերի լրացման հետ կապված: Մնացած բոլոր թեկնածուները թույլ են տվել խախտումներ կամ առաջին տարին լրացնելու ժամանակ, կամ բոլոր տարիներին: Հիմնական խախտումներն արձանագրվել են եկամուտներ բաժնի լրացման հետ, երբ հայտարարատուն չի արտացոլել բոլոր եկամուտները, հատկապես այն դեպքում, երբ նշված եկամտի մասին նշում է կատարվել նույն հայտարարագրի այլ բաժնում, օրինակ՝ փոխառությունը չի նշվել նաև որպես եկամուտ: Թեկնածուներից շատերը նաև խախտում են թույլ տվել տարվա վերջում՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ և տարվա սկզբում՝ հունվարի 1-ի դրությամբ առկա միջոցների մասին տողերը լրացնելիս, որը պայմանավորված էր տարվա սկզբում հատվածի փաստացի մայիսին լրացնելու հետ, այլ ոչ թե հունվարին: Այդ դեպքում թեկնածուներից շատերը նշել են

հայտարարագիր լրացնելու պահին առկա միջոցների մասին տվյալները, այլ ոչ թե հունվարի 1-ի դրությամբ, ուստիև առաջացել է անհամապատասխանություն:

**Խնդիրներ են արձանագրվել կապված դրամական միջոցների և գույքի ձեռքբերման համար միջոցների ծագման աղբյուրի հետ:** Հանձնաժողովը, ԿԿՀ եզրակացության հիման վրա, փորձել է պարզել թեկնածուների կուտակված դրամական միջոցների և այլ գույքի համար միջոցների ծագման աղբյուրը: Որոշ թեկնածուներ նշել են, որ միջոցները ստացել են ծնողներից, ազգականներից, որոնք ձեռնարկատիրական գործունեությամբ են զբաղվում, հարսանիքին են նվեր ստացել և այլն: Թեկնածուներից մեկը նշել է, որ ազգականները նրան շատ են սիրում, ուստի պարբերաբար դրամական միջոցներ են նվիրաբերում: Այս առումով միջազգային փորձագետը նկատել է, որ միջոցների նվիրաբերումը չի կատարվել նվիրաբերության պայմանագրի հիման վրա, առկա չէ որևէ փաստաթղթային հետք, ուստի հնարավոր չէ վերահսկել և ստուգել դրանց իրական ծագման աղբյուրը: Գործնականում նվիրաբերություններն ու նվիրատվությունները չեն փաստաթղթավորվում, ինչը պարունակում է կոռուպցիոն ռիսկեր և թեկնածուի բարեվարքության շուրջ առաջացնում բացասական եզրահանգումներ: **Հատկանշական է, որ և՛ ԿԿՀ-ն, և՛ միջազգային փորձագետը մտահոգություն են հայտնել խոշոր ֆինանսական միջոցները կանխիկ ձևով պահելու վերաբերյալ, քանի որ դրանք կարող են դուրս մնալ վերահսկողությունից ծառայողի ապագայում ապօրինի ծագում ունեցող միջոցների օրինականացման համար:**

**Մյուս խումբ արձանագրված խնդիրներն առնչվում են անշարժ գույքի հետ կապված հարցերին:** Առանձին քննարկվել է բնակության վայրը և կացարանի սեփականատեր լինելու հարցը: Հարցվածներից որոշները բնակվել են իրենց և կնոջը պատկանող բնակարանում, մյուսները՝ ծնողներին կամ ծնողների հետ համատեղ սեփականությամբ պատկանող տանը, կնոջ ազգականներին պատկանող տանը, վարձված բնակարանում: Որպես անշարժ գույքի ծագման աղբյուր թեկնածուները նշել են պետության կողմից իրականացվող ծրագրերով կառուցապատողից վարկով գնում, ժառանգություն, դեռևս խորհրդային տարիներին ստացված բնակարանի սեփականաշնորհում և այլն: *Թեկնածուներից մեկը դեռևս ՀՔԾ-ում աշխատելու ժամանակ ՀՔԾ-ից ստացել է Ծաղկաձորում բնակարան՝ առանց հիմնավորման: Թեկնածուն ինքը չի կարողացել բացատրել, թե ինչպիսի արժանիքների համար են նվիրաբերել այդ բնակարանը, քանի որ չի ունեցել կացարանի խնդիր, ավելին՝ վերջինս վաճառել է այդ բնակարանը, քանի որ դրա կարիքը չի ունեցել*:

**Որպես լավ փորձ միջազգային փորձագետը հատուկ անդրադարձել է այն թեկնածուներին, ովքեր մինչև հայտարարագիր լրացնելը դիմել են Կադաստրի Կոմիտե՝ ճշտելու իրենց անունով պետական գրանցում ստացած գույքի մասին տվյալները:**

**Շարժական գույքի հետ կապված խնդիրների** մասով նշենք, որ թեկնածուների ճնշող մեծամասնությունն ունեցել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ավտոմեքենա, իսկ թեկնածուներից առնվազն հինգը վարել են իրենց ընտանիքի անդամին կամ այլ ազգականին սեփականության իրավունքով պատկանող մեքենա: Միջազգային փորձագետի դիտարկման համաձայն՝ թեկնածուներից մեծամասնությունը ձգտում է ունենալ ներկայանալի դասի ավտոմեքենա, որն օբյեկտիվ դիտորդի մոտ կարող է ստեղծել որոշակի պատկերացում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների և իրենց հավանական եկամտի մասին: Այլ անձի անունով հաշվառված մեքենա վարելը իրական շահառուի մասով մտահոգությունների տեղիք է տալիս, հատկապես այդ թվում՝ այն դեպքում, երբ փաստացի օգտագործման հանգամանքի մասին նշում առկա չէ հայտարարագրում: Հատկապես, եթե նշված անձը հայտարարատու չէ, և հնարավոր չէ հասկանալ շարժական գույքի ձեռք բերման միջոցների ծագման աղբյուրը: Բացի այդ, ավտոմեքենաների ոչ վարողի անունով ձևակերպված լինելը հանգեցրել է վարչական պատասխանատվության համատեքստում

անհատական պատասխանատվության անորոշության ինչպես խուսափելու, այնպես էլ այլ անձի փոխարեն տույժի ենթարկվելու առումով: Օրինակ, թեկնածուներից մեկն վերջին տարվա ընթացքում 12 անգամ ենթարկվել է վարչական տույժի՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար: Թեկնածուն պնդել է, որ 12-ից միայն 3 խախտումներն են իր կողմից կատարվել, իսկ մնացած ինը՝ ամուսնու կողմից, սակայն ճշգրտում չի նախաձեռնել թեկնածուն, այդպես էլ իր անվան տակ է արձանագրվել խախտումը: Մեկ այլ թեկնածուն տարվա ընթացքում ունեցել է 19 վարչական տույժ: Թեկնածուն մեկնաբանել է, որ 19 «նաև հորեղբորս տղային եմ տալիս մեքենան մեկ-մեկ»: Արձանագրվել է նաև դեպք, երբ թեկնածուն, վարելով ազգականի մեքենան, թույլ է տվել խախտում, և ինքնակամ նշել է հայտարարագրում երեք ՃԵԿ խախտման մասին, թեև ազգականի անունով է եղել վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ նշելով, որ «Իմ արարքների համար պետք է ես պատասխան տամ»:

**Կարծիքներ թեկնածուների մասին բարեվարքության եզրակացության մեջ.** Թեկնածուների մի մասի վերաբերյալ հայտնվել են մտահոգություններ քննություն վարելու անկախության և անաչառության համատեքստում: Որոշ թեկնածուների վերաբերյալ առկա են եղել բացասական ենթատեքստով հրապարակումներ կամ այլ անձանց կողմից տրված կարծիքներ: Թեկնածուները հերքել են նման հրապարակումների կամ կարծիքների հիմքում ընկած բացասական փաստերը և եզրահանգումները: Օրինակ, թեկնածուների մասին կարծիք է հայտնվել ԿԿՀ-ին, որ «անկախ քննություն չի իրականացրել, կատարում է «օրվա իշխանության հրահանգները» կամ «իշխանության կամքը կատարող քննիչների դասին է դասվում», «ենթարկվում է ճնշման, օբյեկտիվ չի վարում քննությունները», «չի պատկանում անկախ քննիչների շարքին», գործողությունների/անգործության արդյունքում խախտվել է անձի իրավունքները և այլն: Հնչել են կարծիքներ նաև մասնագիտական ունակությունների մասին, այդ թվում՝ առ այն, որ թեկնածուն «էթիկայի կանոններն է խախտում, ազատ է պահում որպես չինովնիկ», «ժամանակին աշխատանքի գալու հետ կապված աշխատանքային կարգապահության խնդիր ունի»; «մեծ փորձ ու գիտելիք ունի, կարող է լինել լավագույնը, բայց մեծամիտ է, աշխատանքից ազատվել է միջանձնային խնդիրների պատճառով»:

**Մշտադիտարկմամբ վեր են հանվել նաև թեկնածուների պատասխանատվության ենթարկված լինելու մասին տեղեկություններ.**

**Կարգապահական պատասխանատվություն.** ԿԿՀ-ն ուսումնասիրել է թեկնածուների ուսանողական տարիներից (ոստիկանության ակադեմիայում սովորելու դեպքում) մինչև ներկայիս աշխատանքի վայրում կարգապահական պատասխանատվության ենթարկվելու մասին տեղեկությունները: Թեկնածուներից 27-ը (63%) ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, նրանցից մի մասը՝ դեռևս Ոստիկանության ակադեմիայում սովորելու տարիներին, օրինակ, ուշացման համար: Այնուամենայնիվ, թեկնածուները կարգապահական պատասխանատվության են ենթարկվել նաև հենց ծառայողական պարտականությունների կատարման համատեքստում, օրինակ՝ պաշտոնական լիազորությունների ոչ պատշաճ կատարելու /տուժողին ժամանակին չհարցաքննելու, դատախազի ցուցումը ավելի ուշ ժամկետում կատարելու և նմանատիպ այլ խախտումների կատարման համար/, <u>որը թեկնածուները հիմնականում բացատրում էին ծանրաբեռնված լինելով:</u> **Ծանրաբեռնվածության պատճառով ժամկետների չպահպանումը Հանձնաժողովի մոտ մտահոգություն առաջացրեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023թ-ից նոր քրեական դատավարության օրենսգրքով ժամկետ չպահպանելը պատասխանատվության բացառող հիմք է լինելու և ՀԿԿ-ի ծանրաբեռնվածության պայմաններում այդ ժամկետների պահպանման ունակությունը կարևոր է:** Որոշ թեկնածուներին տրվել է հարց՝ արդյոք համաձայն են նշանակված տույժի հետ, եթե ոչ, ապա ինչու չեն բողոքարկել: Հնչել են նման պատասխաններ. «Աշխատանքային հարաբերությունները չլարելու համար», «Երիտասարդ

էի, անփորձ, հիմա այլ կերպ կարծագանքեի, մտածում էի, որ այդպես էլ կմնա, իմաստ չունի և այլն»: Հատկանշական է, որ մրցույթը հաղթահարած 32 թեկնածուներից 18-ը (56%) կարգապահական պատասխանատվության են ենթարկվել, որից 15-ը (83%)՝ նաև ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար:

**Վարչական պատասխանատվություն.** Թեկնածուներից 16-ը (37%) ենթարկվել են վարչական պատասխանատվության ինչպես ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ ՃԵԿ) խախտման (արագության գերազանցում, կարմիր լույսի տակ երթևեկելը, չթուլատրված վայրում կայանելը և այլն), վճարովի ավտոկայանատեղիի համար չվճարելու, այնպես էլ հայտարարագրի սխալ լրացման համար (ԿԿՀ կողմից): Վերջինիս համատեքստում միջազգային փորձագետը բարձրաձայնել է, որ Հակակոռուպցիոն կոմիտեում աշխատելիս քննիչը քննելու է նաև հայտարարագրի դիտավորությամբ սխալ լրացման դեպքեր, ուստի եթե իրենը չի կարող ճշգրիտ լրացնել, ապա ինչպե՞ս է քննելու նման դեպքեր: Հատկանշական է, որ մրցույթը հաղթահարած 32 թեկնածուներից 13-ը (41%) ունեցել են ՃԵԿ խախտումների /հիմնականում արագության գերազանցում, կարմիր լույսի տակ անցնելը կամ չնախատեսված վայրում ավտոմեքենան կայանելու համար/ կամ հայտարարագրի լրացման խախտումներ, որոնց համար ենթարկվել են վարչական պատասխանատվության:

**Քրեական պատասխանատվություն.** Թեկնածուներից 25-ը (58%) նաև քրեական գործերի համատեքստում ունեցել են մեղադրյալի, կասկածյալի կամ վկայի կարգավիճակ: Նման դեպքերը հիմնականում կախված էին թեկնածուի վարույթում քննված քրեական գործերի հետ: Նրանց մեղադրել են կեղծիք կատարելու, ցուցմունք տալուն ուղղորդելու, կաշառք պահանջելու կամ մեղադրյալին՝ ՀՀ-ից փախուստը կանխելու նպատակով միջոցներ չնախաձեռնելու մեջ: Նշված գործերով հետապնդումը հիմնականում դադարեցվել է հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ դեռևս նախաքննության փուլում: Հատկանշական է, որ նշված գործերի մի մասով կարճելուց հետո սուտ մատնության հիմքով բողոքաբերի դեմ քրեական գործ է հարուցվել, իսկ մյուս մասով՝ ոչ: Մրցույթը հաղթահարած 32 թեկնածուներից 11-ի (34%) դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցվել է քրեական գործ: Նրանցից 9-ի դեպքում հանցադեպի կամ հանցակազմի բացակայությամբ գործը կարճվել է նախաքննության փուլում, իսկ 2-ի՝ դատարանում՝ վարույթ չընդունելու մասին որոշում կայացնելիս (դեռ բողոքարկման փուլում էր հարցազրույցի պահին):

Այսպես, մրցույթը հաղթահարած 32 թեկնածուներից 3-ը (9%) ենթարկվել են և՛ ծառայությունների կատարման համատեքստում կարգապահական տույժի, և՛ ՃԵԿ խախտումներ թույլ տալու համար վարչական պատասխանատվության, և՛ անցել են իրենց դեմ բերված բողոքի հիման վրա հարուցված քրեական գործով:

**Գծապատկեր 4. Թեկնածուների պատասխանատվության ենթարկված լինելը**



**Թեկնածուների քաղաքական դիրքորոշման** հետ կապված նշենք, որ քաղաքական դիրքորոշում ունենալու վերաբերյալ հարցը տրվել է 43-ից միայն 15 թեկնածուի (35%): Որոշ դեպքերում հարցը տրվել է՝ հաշվի առնելով թեկնածուի ծագման մարզը, նախկինում մարտական գործողությունների մասնակցելու կամ ընտանիքի անդամների կողմից քաղաքականությամբ զբաղվելու հանգամանքը: Նշենք, որ հարցվածներից մեկն ակնհայտ քաղաքական դիրքորոշում է ունեցել. «Քաղաքական ուժի մասով ասեմ, որ ըստ իս՝ մեծ դեր են ունեցել, իրենց նկատմամբ համակրանք ունեմ: Համակրանքս այն գործողությունների նկատմամբ է, որոնք պետության համար են կատարվել՝ երկրի սահմանների ուժեղացում և այլն: Անձանց չեմ համակրում, այլ ուժին»: Նշված թեկնածուն չի հաղթահարել մրցույթի հարցազրույցի փուլը:

**Հանցավոր ենթամշակույթի** հետ կապված նշենք, որ բոլոր թեկնածուները ի պատասխան տրված հարցերին, նշել են, որ չեն հարում քրեական/ հանցավոր ենթամշակույթին, բացասական են վերաբերվում դրան կամ չեն առնչվել: Նշված հարցը հիմնականում ձևական բնույթ է կրել:

**Վերադասի կողմից կաշառք պահանջելու դեպքում թեկնածուի արձագանքի** և ձեռնարկված քայլերի վերաբերյալ հարց տրվել է թեկնածուներից միայն մի քանիսին. Հարց-*«Եթե լսեք, որ ձեր պետը կաշառք է վերցնում, ի՞նչ կանեք»: Պատասխան- «Եթե գրավոր է հասնում, դա դժվար եմ պատկերացնում, քանի որ իմ պետն է ինձ գործեր հանձնարարում: Բայց եթե ցուցմունքից, ապա վերադասին կզեկուցեմ»: Հարց- «Օրինակ, մի փաստաբան, ում ճանաչում եք, ասում է Ձեզ, որ Ձեր ղեկավարը իր պաշտպանյալից կաշառք է պահանջել»: Պատասխան- «Ես չեմ կարող իմ վերադասի մասին գործ քննել, կասեմ, որ ԱԱԾ գնա գրի»:*

**Վերջին հինգ տարվա ընթացքում արտերկիր արձակուրդ գնալու** մասին հարցին 13 հարցվածներից միայն 4 թեկնածուներն են դրական պատասխան տվել:

Ստուգվել է նաև թեկնածուների՝ **սոցիալական ցանցերում ակտիվությունը:** Թեկնածուներից մեկի դեպքում մտահոգություն է հայտվել պրոֆիլի նկարի ընտրության առումով՝ հանրության կողմից ընկալման տեսանկյունից:

Թեկնածուներից մի քանիսին տրվել է նաև **թիմային աշխատանքի հմտությունների** մասին հարց: Օրինակ՝ թեկնածուներից մեկին հարցրել են, թե արդյոք նա թիմային աշխատանքի պատրաստ է, ինչպե՞ս է պատկերացնում, որ եթե իրենից երիտասարդ աշխատակիցը իրեն հանձնարարություն տա: Թեկնածուն պատասխանել է, որ հիմա էլ թիմային աշխատանք անում է: Նախկին աշխատանքում էլ էր հայտնի, որպես թիմային աշխատող: Կամ թեկնածուներին հարցրել են, թե արդյոք որևէ խնդիր ունեն քննչական խմբում աշխատելու հետ կապված:

Քննարկվել է նաև թեկնածուների՝ **արդարադատության համակարգում աշխատող կամ նախկինում աշխատած մերձավոր ազգականների** մասին ինչպես աշխատանքի անցնելու և առաջխաղացում ունենալու, այնպես էլ շահերի բախման տեսանկյունից:

Նշենք նաև, որ ի պատասխան առաջադրված հարցադրումներին, թեկնածուների ճնշող մեծամասնությունը դժվարացել է բերել **իր կողմից քննված կոռուպցիոն գործերի հաջողության օրինակ**, որի արդյունքում կայացվել է մեղադրական դատավճիռ: Միաժամանակ, թեկնածուներից որոշները նշել են իրենց վարույթում եղած այդպիսի կոռուպցիոն բնույթի գործեր, որոնցով մեղադրանք է առաջադրվել նախկինում բարձրաստիճան պաշտոնատար անձանց:

**Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուներ.** Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթի արդյունքներով 43 թեկնածուից 32-ը (74%) հաղթահարել են հարցազրույցի փուլը և ստացել դրական միավորներ (ընդհանուր միավոր՝ 35 և ավելի բարձր, բարեվարքության միավոր՝ 22 և ավելի բարձր), որոնցից 29-ը (91%) մինչ մրցույթը հանդիսացել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար

պաշտոններ զբաղեցնողի պաշտոնակարար, 1-ը՝ փաստաբան, 1-ը՝ ՊԵԿ-ի աշխատակից, 1-ը՝ գործազուրկ (նախկին քննիչ): Մրցույթը հաղթահարած թեկնածուներից միայն մեկն է եղել իգական սեռի ներկայացուցիչ:

Մրցույթը հաղթահարած 32 թեկնածուների շրջանակներում, ստացված ընդհանուր միավորները եղել են 36-ից 49. 3-ը (50-ից), բարեվարքության միավորները՝ 22-ից 28,75-ը (29-ից):

Հատկանշական է, որ դրական միավոր ստացած 32 թեկնածուներից 14-ի (44%) վերաբերյալ միջազգային փորձագետը տվել է բացասական կարծիք (խորհրդատվական բնույթի):

Հատկանշանական է, որ միջազգային փորձագետի գնահատման համաձայն՝ 43 թեկնածուներից 22-ը (52%) գնահատվել են բացասական:

**Գծապատկեր 5. Բարեվարքության վերաբերյալ հանձնաժողովի և միջազգային փորձագետի կողմից թեկնածուների ստացած գնահատականը**




**32 դրական միավոր ստացած թեկնածուներից մեկը ունեցել են ԿԿՀ բացասական եզրակացություն**, *որի հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և կարգապահական պատասխանատվության և աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը:* **Նշված թեկնածուի վերաբերյալ միջազգային փորձագետը ևս տվել է բացասական կարծիք:** Նշված թեկնածուն նշանակվել է ավագ քննիչի պաշտոնին:

**Արդյունքների ամփոփման փուլ**. թեկնածուի՝ մրցույթի արդյունքում ստացած միավոր է համարվում թեստավորման արդյունքում ստացած միավորի և հարցազրույցի փուլի ընթացքում մրցութային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից տրված միավորների թվաբանական միջինի հանրագումարը: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր մասնակցին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքներով Հանձնաժողովը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած առնվազն 2 և առավելագույնը 6 թեկնածու (բացառությամբ, եթե մրցույթին մասնակցել է 1 թեկնածու): Եթե մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Մրցույթի վերջնական արդյունքները

մեկօրյա ժամկետում հրապարակվում են Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում: Նշենք, որ յուրաքանչյուր փուլի ավարտից հետո, բացառությամբ բարեվարքության ուսումնասիրության փուլի, Հանձնաժողովը կազմում է տվյալ փուլը հաղթահարած մասնակիցների վերաբերյալ արձանագրային որոշում, որը 2 ժամվա ընթացքում տվյալ փուլը չհաղթահարած մասնակիցը կարող է գրավոր բողոքարկել Կոմիտեի նախագահին: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում: Բացի այդ, մասնակիցը կարող է Կոմիտեի նախագահին գրավոր բողոքարկել նաև մրցույթի արդյունքները, դրանք հրապարակվելուց հետո՝ երկօրյա ժամկետում: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում: Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը՝ ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունների հետ միասին, ներկայացնում է Կոմիտեի նախագահին, որի կողմից կատարվում են համապատասխան նշանակումները, բացառությամբ Կոմիտեի նախագահների տեղակալների, որոնց նշանակում է ՀՀ վարչապետը:

**Ընդհանուր առմամբ՝ հանձնաժողովը, գնահատելով թեկնածուներին, ըստ էության, կարևորել է ԿԿՀ եզրակացությունը, սակայն բացասական եզրակացությամբ միայն մեկ թեկնածու նշանակվել է պաշտոնի: Կարևոր դեր է խաղացել նաև միջազգային փորձագետը, որը խորությամբ ուսումնասիրել է թեկնածուների վերաբերյալ բարեվարքության եզրակացությունը և խնդրահարույց հարցեր բարձրացրել:**

### 3. 2. 5 Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համալրման մրցույթներն ու նշանակումները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրական մակարդակով ՔՀԿ-ներին հնարավորություն չի տրվել դիտարկելու Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթի փուլերը, ուստի կանդրադառնանք հանրամատչելի տեղեկատվության և ԻՊԱՍ հարցումների արդյունքում ձեռք բերված որոշ խնդրահարույց հարցերին:

Այսպես, Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են ոչ թե «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, այլ՝ Կոմիտեի նախագահի կողմից սահմանված կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա[143]: Այդ նպատակով, Կոմիտեի նախագահի կողմից հաստատվել է «Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու համար մրցույթի անցկացման» կարգը[144], համաձայն որի՝ օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների թեկնածուների ցուցակը համալրվում է մրցութային հանձնաժողովի կողմից (նույն հանձնաժողովն է, ինչ ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց դեպքում)՝ Կոմիտեի նախագահի 16. 11. 2021թ. -ի N 20-L հրամանին համապատասխան: Ինչպես և ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց դեպքում, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներում թափուր պաշտոն առաջանալու դեպքում Կոմիտեի նախագահը նշանակում է մրցույթ՝ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում[145]: Թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հրապարակվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝

[143] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164983

[144] Տե՛ս Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների նշանակման կարգը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/113

[145] Բացառությամբ Կոմիտեի այն պաշտոններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ

հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am[146]) և Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում[147]: Մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը ապահովում է Հանձնաժողովը, որն էլ կազմում և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում հայտարարության ձևը, որը ներառում է թեկնածուին ներկայացվող պահանջները (այդ թվում՝ ֆիզիկական պատրաստականության և առողջական վիճակի վերաբերյալ), մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ դիմումին կից փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը, Կոմիտեի նախագահի հաստատած հարցարանը (նման կետ նախատեսված չէ ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց դեպքում), մրցույթն անցկացնելու պայմանները, թեկնածուներին ներկայացվող պահանջները գնահատելու առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատելու և միավորները հաշվարկելու կարգը, փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը և վայրը:

- **Մրցույթի անցկացման փուլերը.**

Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման ծառայողի պաշտոնների մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, ֆիզիկական պատրաստականության ստուգման, հարցազրույցի առաջին, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի երկրորդ և արդյունքների ամփոփման փուլերով.

- **Ֆիզիկական պատրաստականության ստուգման փուլի վերաբերյալ դիտարկումներ.**

Առանձնակի ուշադրության են արժանի Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները, որոնք սահմանվում են ՀՀ կառավարության 2021թ. -ի հոկտեմբերի14-ի N 1708-Ն որոշմամբ[148]:

Այսպես, թեկնածուների ֆիզիկական պատրաստականությունը օպերատիվ ծառայողական խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների և ֆիզիկական ծանրաբեռնվածության հաղթահարման համար որոշակի ունակությունների ամբողջությունն է, որի նպատակն ամենօրյա օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար անհրաժեշտ համապատասխան ֆիզիկական և բարոյակամային որակների ձևավորումն է: Կառավարության որոշմամբ տարանջատված են արական և իգական սեռի անձանց **<u>ֆիզիկական պատրաստականության</u>** հետ կապված նորմատիվներն ըստ բժշկատարիքային խմբերի[149]: **Ֆիզիկական պատրաստականության նորմատիվների**

---

[146] Տե՛ս, օրինակ՝ https://www.azdarar.am/announcments/org/117/00995313/

[147] Տե՛ս, օրինակ՝ https://www.facebook.com/photo/?fbid=130553632761327&set=pb.100074200721560.-2207520000.

[148] Տե՛ս ՀՀ կառավարության 14 հոկտեմբերի 2021 թվականի N 1708-Ն որոշումը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=156864

[149] Արական սեռի դեպքում, նախատեսված են հետևյալ վարժությունները, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված են մինչև 20 միավոր՝ Զգումներ Պտտաձողի վրա անգամ. Սեղմումներ, հենում- պառկած անգամ. Վազք 100 մետր վայրկյան. Մաքոքավազք 10 x 10 մետր վայրկյան. Վազք 1000 մետր րոպե-վայրկյան:
Ընդ որում, վերը նշված վարժությունների դեպքում, 50 տարեկան և բարձր տարիք ունեցողները նորմատիվներ չեն հանձնում:

**կատարման վերջնական արդյունքը հաշվարկվում է կատարված երեք վարժությունների գնահատականների հանրագումարով՝ առավելագույնը՝ 60, նվազագույնը՝ 23:**

Նշենք, որ Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց մոտ **առողջական վիճակի հետ կապված հիվանդությունների**[150] առկայությունը կամ բացակայությունը հաստատվում է արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների կողմից:

Այսպես, գտնելով, որ կան Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք, որոնք իրականացնում են տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության և այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կիրառմամբ գործառույթներ, որոնք ամենևին կապված չեն ֆիզիկական պատրաստականության հետ, 2022թ. -ի օգոստոսի 19-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծը[151]: Նախագծով առաջարկվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը լրացնել նոր բովանդակությամբ, ըստ որի Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնները, որոնցում ծառայողների գործառույթների իրականացումը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության և այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կիրառմամբ, կհաստատի Կոմիտեի նախագահը: Կոմիտեի նախագահի կողմից կհաստատվի նաև տվյալ պաշտոնի նշանակելու կարգը և ծառայողին ներկայացվող պահանջները: Այս նախագծի և հատկապես Կոմիտեի նախագահի կողմից պաշտոնի նշանակելու կարգի վերաբերյալ համատեղ կարծիք[152] են հրապարակել ԻՊԱՍ-ը և գործընկեր հասարակական կազմակերպությունները նշելով, որ **բացի ծածկագրված ծառայողների նշանակման կարգից, օպերատիվ ստորաբաժանման մյուս բոլոր պաշտոնները պետք է համալրվեն բացառապես մրցույթի արդյունքում, ինչը առաջարկվող նախագծով չի դիտարկվում պարտադիր: Այսինքն, Կոմիտեի նախագահի կողմից կարող է սահմանվել այլ կարգ՝ ոչ մրցութային, ինչպես օրինակ՝ ուղղակի նշանակումը: Ընդ որում, նախագծով անհրաժեշտ է ամրագրել, որ յուրաքանչյուր ոլորտի օպերատիվ ծառայողի պաշտոնի համալրման մրցութային հանձնաժողովում պետք է ներգրավվեն նաև համապատասխան ոլորտի մասնագետներ:**

**Հարցազրույցի առաջին և երկրորդ փուլեր.** ի տարբերություն ինքնավար թափուր պաշտոնների թեկնածուների թեստավորման և հարցազրույցի փուլերին, որոնց ընթացքին հետևելու նպատակով կարող են ներկա գտնվել դիտորդներ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման համար

---

Իգական սեռի դեպքում, նախատեսված են հետևյալ վարժությունները, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված են մինչև 20 միավոր՝Ուժային համալիր վարժություններ, քանակ. Վազք 100 մետր վայրկյան. Վազք 60 մետր վայրկյան. Մաքոքավազք 10 x 10 մետր վայրկյան. Վազք՝ 1000 մետր որպե- վայրկյան:
Վերը նշված վարժությունների դեպքում, 40 տարեկան և բարձր տարիք ունեցողները նորմատիվներ չեն հանձնում:

[150] Հոգեկան և վարքային խանգարումներ. Նյարդային համակարգի հիվանդություններ և վնասվածքների հետևանքներ. Ներքին օրգանների հիվանդություններ. Վիրաբուժական հիվանդություններ. Ականջի և վերին շնչուղիների հիվանդություններ. Բերանի խոռոչի և ծնոտների հիվանդություններ. Աչքի և նրա հավելումների հիվանդություններ. Մաշկի, ենթամաշկային բջջանքի, լորձաթաղանթների և մաշկի հավելումների հիվանդություններ. Սեռավարակներ. Գինեկոլոգիական հիվանդություններ. Պոտենցիալ վտանգ առողջությանը՝ կապված սոցիալ- տնտեսական և հոգեսոցիալական հանգամանքների հետ (այս կետին են վերաբերում արտահայտված սոցմանկավարժական բարձիթողի վիճակները, արտահայտված խնդիրները՝ կապված ուսուցման և գրագիտության հետ):

[151] Տե՛ս նախագիծը՝ https://www.e-draft.am/projects/4671

[152] Տե՛ս ԻՊԱՍ-ի և գործընկեր ՀԿ-ների համատեղ կարծիքը՝ https://prwb.am/2022/08/29/%d5%af%d5%a1%d6%80%d5%ae%d5%ab%d6%84%e2%80%a4%d5%b0%d5%a1%d5%af%d5%a1%d5%af%d5%b8%d5%bc%d5%b8%d6%82%d5%ba%d6%81%d5%ab%d5%b8%d5%b6-%d5%af%d5%b8%d5%b4%d5%ab%d5%bf%d5%a5%d5%ab-%d5%b4%d5%a1%d5%bd/

անցկացվող **մրցույթի ընթացքին ներկա գտնվելու նպատակով դիտորդների ներգրավման կարգ և պայմաններ նախատեսված չեն[153]:** Գտնում ենք, որ այն դեպքում, երբ խոսքը Կոմիտեի ծածկագրված ծառայողների մասին չէ, մնացյալ բոլոր դեպքերում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման համար անցկացվող մրցույթին դիտորդների ներգրավման կարգի բացակայությունը օրինաչափ և հիմնավորված չէ և չի բխում Կոմիտեի գործունեության հրապարակայնության սկզբունքից:

- **Բարեվարքության ուսումնասիրության փուլ.**

Ինչպես տեսնում ենք, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթը պարտադիր պետք է ներառի բարեվարքության ուսումնասիրության փուլը: Սակայն, **այս կանոնից բացառություն են Կոմիտեի այն պաշտոնների համար մրցույթները, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է**, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ: Այս պաշտոնների նշանակելու (ատեստավորելու, վերապատրաստելու, այլ պաշտոնի փոխադրելու) կարգը և պայմանները սահմանում է Կոմիտեի նախագահը: Կարծում ենք, որ այս կարգավորումը վերահսկողությունից դուրս է թողնում ծածկագրված ծառայողների բարեվարքության ստուգումը, ինչը կարող էր իրականացվել, սակայն չհրապարակվել, ելնելով գաղտնիության պահպանման անհրաժեշտությունից:

Այսպես, ի տարբերություն ՀՀ-ում գործող այլ քննչական մարմինների, Կոմիտեի ղեկավար կազմի և ծառայողների թեկնածուներն ընտրվում են մրցութային խորհրդի/հանձնաժողովի կողմից՝ մրցույթի արդյունքում: Ընդհանուր առմամբ, 2022թ. -ին Կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով կազմակերպվել ու անցկացվել է 5 մրցույթ, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել է 186 թեկնածու: Այդ մրցույթների արդյունքներով հաղթող է ճանաչվել 77 մասնակից, որոնցից համապատասխան պաշտոնների են նշանակվել 74-ը (32 ինքնավար, 42 օպերատիվ-հետախուզական պաշտոններ)154: Հիշեցնենք, որ 2022 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ Կոմիտեի ծառայողների համար նախատեսված էր 100 հաստիք, որից 4-ը՝ ղեկավարության համար, 36-ը՝ ինքնավար պաշտոնների համար և 60-ը՝ օպերատիվ-հետախուզական պաշտոնների համար:

**Աղյուսակ 2. Համալրված հաստիքների ցանկը 2022թ. -ի նոյեմբերի 30-ի դրությամբ**

| Պաշտոն | Հաստիքների քանակ | Համալրված հաստիքներ | Թափուր հաստիքներ |
|---|---|---|---|
| **Նախագահ** | 1 | 1 | 0 |
| **Տեղակալներ** | 3 | 2 | 1 |
| **Ինքնավար պաշտոններ** | 36 | 32 | 4 |
| **Օպերատիվ-հետախուզական պաշտոններ** | 60 | 42 | 18 |

153 ԻՊԱՍ ներկայացուցիչները որպես դիտորդ փորձել են ներկա գտնվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման համար անցկացվող մրցույթի հարցազրույցի առաջին և երկրորդ փուլերին, սակայն, վերջիններիս թույլ չեն տվել մասնակցելու, հղում կատարելով համապատասխան իրավական ակտերում դիտորդությանն առնչվող իրավակարգավորումների բացակայությանը

154 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին հաղորդումները՝ https://anticorruption.am/hy/pages/show/report

Ընդհանուր առմամբ, ԻՊԱՍ-ի կողմից մշտադիտարկման են ենթարկվել 2021թ. -ի սեպտեմբերի 10-ին անցկացված Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերը և Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2022թ. -ի օգոստոսի 18-ին անցկացված մրցույթի թեստավորման փուլը և 2022թ.-ի հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 3-ին անցկացված հարցազրույցների փուլերը, իսկ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ընտրության մրցույթների մշտադիտարկման հնարավորություն կազմակերպությունը չի ունեցել՝ դիտորդության հնարավորություն նախատեսված չլինելու պատճառով: Մինչդեռ միջազգային չափանիշներին համապատասխան՝ իրավապահ մարմիններում ծառայության անցնելու մասին տեղեկությունները և ընթացակարգը պետք է լինեին հրապարակային[155]: Նշվածից բացառություն կարող էր նախատեսվել միայն իրենց լիազորությունները գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ իրականացնող ծառայողների ընտրության և նշանակման դեպքում, սակայն տվյալ դեպքում մշտադիտարկումից դուրս է մնացել առհասարակ բոլոր օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ընտրությունն ու նշանակումը:

## 3. 3 ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

2022թ. -ի հուլիսի 11-ին հայտարարված՝ Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլերին ներգրավված է եղել ընդամենը մեկ դիտորդ՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Աննա Մելիքյանը[156]: Դիտորդի ներգրավման համար իրավական հիմք է հանդիսացել Կոմիտեի նախագահի 16. 11. 2021թ. -ի N 20-Լ հրամանի 23-րդ կետը, ըստ որի՝ **ինքնավար թափուր պաշտոնների թեկնածուների թեստավորման և հարցազրույցի փուլերին**, մրցույթի ընթացքին հետևելու նպատակով, **կարող են ներկա գտնվել դիտորդներ,** որոնք սակայն չպետք է խոչընդոտեն մրցույթի բնականոն ընթացքին, այդ թվում՝ իրավունք չունեն փաստաթղթեր կամ այլ նյութեր վերցնել, ձայնագրել, տեսաձայնագրել կամ առցանց հեռարձակել մրցույթի ամբողջ ընթացքը կամ դրա մասը, ինչպես նաև հաղորդակցվել մասնակիցների հետ: Նշված պահանջները խախտելու դեպքում Հանձնաժողովի նախագահը իրավասու է համապատասխան դիտորդին հեռացնել սենյակից՝ այդ մասին կազմելով արձանագրություն, որը ստորագրում են նաև հանձնաժողովի ներկա անդամները:

Հետագայում, 2022թ. -ի հուլիսի 18-ին Կոմիտեի կողմից հրապարակված «Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթին դիտորդ ներգրավելու մասին» հայտարարությամբ[157] սահմանվել են դիտորդների ներգրավման պայմանները: Մասնավորապես, մրցութային հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել մինչև երեք դիտորդ: **<u>Դիտորդի թեկնածություններ կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառություն:</u>** Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել մեկ դիտորդի թեկնածություն: Ընդ որում, **<u>հասարակական կազմակերպության կողմից առաջադրված դիտորդը նույնպես պետք է ունենա հակակոռուպցիոն ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, ի</u>**

155 Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջ 80 (https://www.unodc.org/pdf/criminal_justice/Handbook_on_police_Accountability_Oversight_and_Integrity.pdf):
156 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հայտարարությունը՝ https://www.facebook.com/photo?fbid=181287994354557&set=pb.100074200721560.-2207520000.
157 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/128

**տարբերություն Հանձնաժողովի այն անդամի, որը ներկայացնում է ՔԿՀ. վերջինիցս պահանջվում է առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձառություն:**

Գտնում ենք, որ Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների թեկնածուների թեստավորման և հարցազրույցի փուլերին մասնակցելու համար ՔՀԿ-ներին ներկայացված հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառության պահանջը և կազմակերպությունից զատ, նաև տվյալ կազմակերպության առաջադրած կոնկրետ թեկնածուին ներկայացված հակակոռուպցիոն ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունենալու պահանջն արհեստականորեն խոչընդոտ է ստեղծում ոլորտային ՔՀԿ-ների համար, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են իրավունքի կամ հակակոռուպցիոն ոլորտում՝ ելնելով իրենց կանոնադրական նպատակներից և խնդիրներից, սակայն դեռևս չունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառություն: Միևնույն ժամանակ խոչընդոտ է ստեղծվել նաև այն ՔՀԿ-ների համար, որոնք թեև ունեն երեք տարվա փորձառություն, սակայն վերջիններիս կողմից առաջադրված դիտորդի թեկնածուն չունի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն հակակոռուպցիոն ոլորտում: Նման պարագայում, հաշվի առնելով, որ մրցույթին դիտորդ ներգրավելու գործընթացում որպես Հայտատու դիտարկվում է ոչ թե դիտորդի թեկնածուն, այլ հասարակական կազմակերպությունը, ուստի նման պահանջ կարող էր նախատեսվել առավելագույնը հասարակական կազմակերպության համար, ինչպիսի պահանջն իր հերթին ևս հիմնավորված չէ:

Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների թեկնածուների թեստավորման և հարցազրույցի փուլերին մասնակցելու համար դիտորդի թեկնածուին և նրան առաջադրած ՔՀԿ-ին ներկայացված պահանջները հիմնավորված չեն նաև այն պայմաններում, երբ անգամ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող <u>մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների որակավորման գրավոր քննությանը և հարցազրույցին կարող են ներկա լինել և դրանց ընթացքին հետևել համապատասխան հայտ ներկայացրած՝ իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև երեք ներկայացուցիչ՝</u> ըստ դիմումների ներկայացման ժամանակագրական առաջնահերթության, յուրաքանչյուր հասարակական կազմակերպությունից՝ մեկ ներկայացուցիչ[158]: «Իրավունքի բնագավառում գործունեության իրականացում». հասարակական կազմակերպություններին ներկայացված պահանջներն օրենսդրի կողմից այսքանով եզրափակվում են: Միևնույն ժամանակ, «Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման համար անցկացվող որակավորման գրավոր քննության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ԲԴԽ-85-Ո-279 որոշմամբ[159] սահմանվում են Հայտատու հասարակական կազմակերպության ներկայացուցիչ դիտորդի հավատարմագրման հայտի ներկայացման կարգը, ըստ որի՝

1) Հայտը պետք է պարունակի հասարակական կազմակերպության անվանումը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, նշում՝ կարգի պայմաններն ընդունելու վերաբերյալ, հայտը ներկայացնելու ամսաթիվը: Կից պետք է ներկայացվի հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը

2) Առաջարկվող դիտորդի անունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ինչպես նաև դիտորդի կողմից ստորագրված հայտարարություն այն մասին, որ

---

[158] Տե՛ս ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=167184

[159] Տե՛ս ԲԴԽ-85-Ո-279 ո ր ո շ ու մը դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման համար անցկացվող որակավորման գրավոր քննության կազմակերպման կարգը սահմանելու մասին՝ https://court.am/hy/decisions-single/1479

համաձայնվել է կարգի պայմաններին: Կից պետք է ներկայացվի առաջարկվող դիտորդի լուսանկարը:

Այսինքն, պահանջները ներկայացված են հասարակական կազմակերպությանը, իսկ դիտորդից պահանջվում է ներկայացնել միայն անձը հաստատող փաստաթուղթ և լուսանկար:

**Ստացվում է, հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում ձևավորված, միևնույն՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող երկու մարմիններում, դեռ ավելին, միևնույն մարմնի տարբեր ծառայողների թեկնածուների ընտրության գործընթացում նախատեսված է դիտորդների ներգրավման տարբերակված մոտեցում՝ առանց օբյեկտիվ հիմնավորումների:**

## ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ/ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ

### 4. 1 Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական պատրաստումը.

Մինչ Կոմիտեի նախագահի կողմից համապատասխան պաշտոնում նշանակում կատարելը, ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում: Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը և փորձաշրջանն իրականացվում են «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով՝ ակադեմիայի կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում: Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը ուղղված է վերջիններիս մեջ քննիչի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է ուսումնական պլաններով, դասավանդման սեղմագրերով, ուսումնական ժամանակացույցով, ինչպես նաև ռեկտորի հաստատած դասացուցակներով: Ուսուցումն անցկացվում է դասախոսությունների, սեմինարների, ուսումնական դատախաղերի, բանավեճերի, դատական գործերի քննարկման միջոցով, ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող դիդակտիկ նյութերի, տեսաժապավենների, ձայնագրված դասախոսությունների օգտագործմամբ և կրթական արդի այլ եղանակներով: Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումն ընդգրկում է ունկնդիրների փորձաշրջանը, իսկ Խորհրդի սահմանած դեպքերում՝ նաև առանձին առարկայական կուրսեր: Փորձաշրջանի ավարտից հետո ունկնդիրը, փորձաշրջանի ղեկավարի հաստատմամբ, ռեկտորին է ներկայացնում փորձաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ Խորհրդի սահմանած ձևի հաշվետվություն:

Կոմիտեի նախագահը նույնպես ուղղակիորեն ներգրավված է Կոմիտեի ծառայողների/թեկնածուների մասնագիտական պատրաստման գործընթացին: Մասնավորապես, վերջինս՝ Արդարադատության նախարարի հետ միասին, Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում, Ակադեմիայի ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ծրագրերում ներառելու համար, իսկ Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակի համալրման օրվան հաջորդող եռօրյա ժամկետում Հակակոռուպցիոն կոմիտեն Ակադեմիա է ներկայացնում մասնագիտական պատրաստման ենթակա անձանց ցուցակը: Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձանց

մասնագիտական պատրաստման գործընթացը, որպես կանոն, սկսվում է թեկնածուների ցուցակների համալրումն ավարտվելու ամսվան հաջորդող ամսվանից:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումն սկսելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ ռեկտորը կազմում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում համապատասխան անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը: Մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրն իրականացվում է միայն առկա ուսուցման ձևով:

Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձը համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա առարկայական կուրսերից բոլոր քննությունների արդյունքներով ստացել է դրական գնահատական և դրական է գնահատվել փորձաշրջանի արդյունքներով: Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձի՝ Ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորը հաշվարկվում է առարկայական կուրսերից հանձնած բոլոր քննությունների գնահատականների հիման վրա: Անձը հանվում է ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակից, եթե Արդարադատության ակադեմիայում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքների հիման վրա ստացած քննական միավորը պակաս է կուրսը հանձնված համարելու համար Ակադեմիայի կառավարման խորհրդի սահմանած նվազագույն միավորից, կամ նա չի անցել «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված փորձաշրջանը կամ Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն հինգ տոկոսից:

**Նշենք, որ անձն ազատվում է ուսումնառությունից, եթե ունի դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեությունը դադարեցնելուց հետո չի անցել հինգ տարի[160]: Այս կարգավորումը մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ վերջին տարիներին անընդհատ փափոխվող և լրացվող օրենսդրության պայմաններում՝ հատկապես հակակոռուպցիոն ոլորտում, այն չի կարող թեկնածուի գիտելիքների երաշխիք հանդիսանալ:**

Հատկանշական է, որ Կոմիտեի քննչական մասի ձևավորման համար հիմք է հանդիսացել ՀԲԾ քննչական կազմը, որոնք մինչև համապատասխան մրցույթի անցկացումը և հաստիքներում քննիչների նշանակումը, շարունակել են գործել որպես պաշտոնակատարներ: Հետագայում այդ անձինք մյուս հավակնորդների հետ արդեն հավասար պայմաններում անցել են բարեվարքության ստուգում, մասնագիտական գիտելիքների ստուգում և նշանակվել համապատասխան պաշտոններում[161]:

**Տվյալ դեպքում, մրցույթը հաղթահարած բոլոր՝ թվով 32 թեկնածուները չեն անցել մասնագիտական պատրաստում, քանի որ համապատասխանել են օրենքով սահմանված ուսումնառությունից ազատման պահանջներին:** Մրցույթը հաղթահարած 32 թեկնածուներից 29-ը (91%) մրցույթին մասնակցելու պահին հանդիսացել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնողի պաշտոնակատարներ:

[160] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164983

[161] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://www.facebook.com/100074200721560/videos/1171732707076914/

## 4. 2 Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումները

Կոմիտեի գործունեության երկարաժամկետ հաջողության և արդյունավետության համար առաջնահերթ նշանակություն ունի վերապատրաստումների գործառույթը: Կոմիտեի ողջ անձնակազմի վերապատրաստման անհրաժեշտությունն ընդգծված է Հակակոռուպցիոն ռազմավարությամբ[162] և դրա իրականացման 2019-2022թթ-ի միջոցառումների ծրագրում, ըստ որի՝ Կոմիտեի բոլոր ծառայողները պարբերաբար անցնելու են վերապատրաստման դասընթացներ՝ մինչև 2022թ. -ի ավարտը: Մասնավորապես, Ռազմավարության իրականացման 2019-2022թթ-ի միջոցառումների ծրագրի 2-րդ գործողության շրջանակներում նախատեսվում է Կոմիտեի աշխատակիցների 40%-ի վերապատրաստում 2022թ.-ին, 13-րդ գործողության շրջանակներում՝ քննիչների և պատգամավորների համար առնվազն 2 վերապատրաստման իրականացում 2022թ.-ին՝ պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ և 29-րդ գործողության շրջանակներում՝ առնվազն 4 վերապատրաստման իրականացում 2021-2022թթ-ին՝ կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման վերաբերյալ: Կոմիտեի անձնակազմի վերապատրաստումներ են նախատեսվում նաև ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ-ի ռազմավարությամբ[163] և ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով, որով կարևորվում է հետևողականությունը կարողությունների զարգացման հարցում՝ պարբերաբար իրականացնելով Կոմիտեի անձնակազմի վերապատրաստումներ: Մասնավորապես, Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 5-րդ նպատակի՝ քրեաիրավական ոլորտի բարեփոխումների շրջանակներում, նախատեսվում է քննիչների, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առնվազն 30 տոկոսի վերապատրաստում՝ կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննություն, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու հմտություններ ձեռք բերելու առնչությամբ, ինչպես նաև քննիչների, դատախազների և դատավորների շուրջ 70 տոկոսի վերապատրաստում քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի վերաբերյալ՝ մինչև 2026թ. -ի 2-րդ կիսամյակը: Ռազմավարական այլ ուղղությունների շրջանակներում նախատեսվում է Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող առնվազն 25 անձինք վերապատրաստում Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտերի վերաբերյալ՝ մինչև 2023թ. -ի 1-ին եռամսյակը:

Ընդ որում, վերապատրաստումների կարգերը տարբերվում են ըստ Կոմիտեի ծառայողների[164].

1. Ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված կարգով
2. Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումն իրականացվում է ենթաօրենսդրական ակտով սահմանված կարգով:
3. Կոմիտեի այն պաշտոններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, վերապատրաստելու կարգը և պայմանները սահմանում է Կոմիտեի նախագահը:

---

[162] Տե՛ս ՀՀ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168051

[163] Տե՛ս ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ-ի ռազմավարությունը՝ https://www.moj.am/page/491

[164] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164983

4. Ուսումնառությունից ազատված և Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց (դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ ունեցող անձինք, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեությունը դադարեցնելուց հետո չի անցել հինգ տարի) վերապատրաստման կարգը սահմանում է Կոմիտեի նախագահն Արդարադատության ակադեմիայի ռեկտորի հետ համատեղ:

Այսպես, «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով[165] սահմանված կարգով Ակադեմիան կազմակերպում և անցկացնում է[166] Կոմիտեի քննիչների վերապատրաստումը: Վերապատրաստումը՝ Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման համար կոնկրետ ոլորտների ուսումնասիրության միջոցով կազմակերպվող պարտադիր ուսումնական գործընթաց է: Ուսումնական գործընթացն անցկացվում է Խորհրդի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա կազմված և օրենքով նախատեսված կարգով հաստատված ուսուցման ծրագրերով և ներառում է նաև վերապատրաստման, ինչպես նաև լրացուցիչ վերապատրաստման ծրագրերը: Ուսուցման ծրագրերն իրականացվում են առկա և հեռավար ձևերով: Ուսուցման ձևի ընտրությունը նախատեսվում է ուսուցման ծրագրում:

**Հարկ է նշել, որ մինչ 2022թ. -ի նոյեմբերի 30-ը՝ Կոմիտեի ստեղծումից մոտ մեկ տարի անց, ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական հին[167] և նոր[168] կայքերում հրապարակված Խորհրդի որոշումների շարքում, առկա չէ Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական պատրաստման, տարեկան վերապատրաստման կամ հատուկ ուսուցման ծրագրերի վերաբերյալ Խորհրդի որևէ որոշում:**

Առհասարակ, կոռուպցիային առնչվող դասընթացներ Ակադեմիայում նախատեսված են միայն հեռաուսուցման տարբերակով՝ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը»[169] թեմայով:

Ուսուցման ծրագրերը Խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ռեկտորի կողմից ուղարկվում է Հակակոռուպցիոն կոմիտե՝ վերապատրաստում անցնող անձանց կողմից առարկայական կուրսերի ընտրություն կատարելու նպատակով, քանի որ Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք ունեն առաջարկվող վերապատրաստման առարկայական կուրսերի ընտրության իրավունք՝ սահմանված պահանջներին և ժամաքանակին համապատասխան: Միևնույն ժամանակ, Կոմիտեի նախագահը կարող է սահմանել Ակադեմիայի վերապատրաստման ծրագրերի առարկայական կուրսերի շրջանակում Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց համար պարտադիր առարկայական կուրսեր:

**Հակակոռուպցիոն կոմիտեն իր հերթին՝ Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց մասով, յուրաքանչյուր տարի՝ մինչև դեկտեմբերի 1-ը, Ակադեմիա է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը՝ առարկայական կուրսերի ընտրության նշումով:** Ռեկտորը

165 Տե՛ս Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164915

166 Ակադեմիան անցկացնում է նաև Կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, ինչպես նաև Կոմիտեի քննիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով:

167 Տե՛ս ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական հին կայքէջը՝ https://justiceacademy.am/#2524

168 Տե՛ս ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական նոր կայքէջը՝ https://aoj.am/full-time-education

169 Տե՛ս հետևյալ հղումները՝ https://justiceacademy.am/#2563 , https://aoj.am/distance-learning/courses/book/31

վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրների ներկայացված ցուցակների հիման վրա կազմում է Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց ուսուցման ընդհանուր ժամանակացույց և ներկայացնում Կոմիտեի նախագահի հաստատմանը՝ ուսուցումը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

Կոմիտեի ծառայողի վերապատրաստումը և մասնակցությունը կրթական այլ ծրագրերին, ինչպես նաև դրանց ժամկետները մասնակիորեն սահմանվում են նաև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, ըստ որի՝ **Կոմիտեի ծառայողները, բացառությամբ Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան երկու տարին մեկ անցնել վերապատրաստում: Պարտադիր վերապատրաստման ժամկետը կարող է տևել մինչև մեկ ամիս:**

Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը համարվում է վերապատրաստումը կամ լրացուցիչ վերապատրաստումն անցած, եթե մասնակցել է վերապատրաստման կամ լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին, այդ թվում, երբ նրանց բացակայությունը ռեկտորը ճանաչել է հարգելի: Սակայն, եթե հարգելի ճանաչված բացակայությունները գերազանցում են վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսի ժամաքանակի քսան տոկոսը, ունկնդրի՝ համապատասխան առարկայական կուրսով անցած վերապատրաստումը չի գնահատվում: Այս դեպքում ունկնդրին հնարավորություն է տրվում կրկին անցնելու նույնաբովանդակ առարկայական կուրսը կամ Խորհրդի սահմանած կարգով անցնելու Խորհրդի կողմից համարժեք սահմանված այլ առարկայական կուրս:

Հատկանշական է, որ վերապատրաստումը (այդ թվում՝ կրթական վերապատրաստման ծրագրեր, համաժողովներ և իրավաբանների մասնագիտական այլ հավաքներ) Կոմիտեի ծառայողի համար հանդիսանում է միաժամանակ և՛ իրավունք, և՛ պարտականություն: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է Կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը և թույլտվություն ստացած ծառայողի՝ այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ բացակայությունը համարվում է հարգելի, նրանք ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունների կատարումից՝ աշխատավարձի պահպանմամբ:

Կոմիտեի նախագահի կողմից ուսումնառությունից ազատված թեկնածուներին համապատասխան պաշտոնում նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, Կոմիտեի նախագահն Արդարադատության ակադեմիայի ռեկտորի հետ համատեղ սահմանում են այդ անձանց վերապատրաստման կարգը և կազմակերպում վերապատրաստման գործընթացը: **Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նշանակման գործընթացն իրականացվել է 2022թ. -ի հոկտեմբեր ամսին, ուստի վերապատրաստման կարգը հաստատվելու է համապատասխան ժամկետում, այսինքն՝ դեռևս (2022թ. -ի նոյեմբերի 30-ի դրությամբ) առկա չէ:**

Այսպես, չնայած վերապատրաստման դրույթներ նախատեսող ռազմավարություններին և օրենքներին, փաստացի Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման դասընթացների քիչ դեպքեր են հայտնի: Դրանցից է **2022թ. -ի ապրիլի 19-ից 20-ը ՀՀ արդարադատության ակադեմիայում կազմակերպված Կոմիտեի քննիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացը**[170], որն իրականացվել է Հայաստանում հակակոռուցիոն բարեփոխումների իրականացման Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) ծրագրի շրջանակներում: Այս դասընթացը ամփոփումն է հանդիսացել դեռևս 2022թ. -ի մարտ ամսից մեկնարկած առցանց դասընթացների: Դասընթացների հիմնական նպատակը փողերի լվացման դեպքերի քննության վերաբերյալ փորձի

170 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.anticorruption.am/hy/news/view/128

փոխանակումն ու նախորդող ֆինանսական հանցագործությունների քննության գործում քննիչների մասնագիտական հմտությունների կատարելագործումն է եղել: Բացի այդ, Կոմիտեի 7 ծառայողներ մասնակցել են Ամերիկայի միացյալ նահանգներում, Չեխիայում, Խորվաթիայում և Հունգարիայում կազմակերպված դասընթացներին, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը և հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը[171]:

Հետաքրքրական է, որ 2022թ. -ի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրագործման ընթացքի վերաբերյալ հաշվետվության[172] համաձայն՝ Կոմիտեի ինքնավար պաշտոնները ժամանակավորապես զբաղեցնող 70%-ից ավելին անցել են վերապատրաստում, ինչպես նաև վերապատրաստում են անցել Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց 10%-ը: **Նման պայմաններում հարց է առաջանում, թե Կոմիտեի ո՞ր ծառայողների և ի՞նչ վերապատրաստումների մասին է խոսքը, երբ համաձայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների համար 2022թ. -ի ապրիլի 1-ին, հուլիսի 25-ին և 26-ին անցկացված մրցույթների հարցազրույցների 2-րդ փուլի արդյունքում հաղթող ճանաչվածներից 27-ը ազատվել են վերապատրաստումից, իսկ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նշանակման գործընթացն իրականացվել է 2022թ. -ի հոկտեմբեր ամսին, ուստի վերապատրաստման կարգը հաստատվելու է նշանակումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, Կոմիտեի ծառայողներից բոլորն ազատված են Արդարադատության ակադեմիայում նախատեսված ուսումնառությունից:** Օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների համար որոշակի վերապատրաստումներ իրականացվել են ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում, որոնց առավել մանրամասն անդրադարձ կկատարենք համապատասխան ենթագլխում:

Հատկանշական է, որ նախատեսված չէ մասնագիտական ուսուցում, փորձաշրջան և վերապատրաստում անցնելու օրենսդրական պահանջ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների համար՝ նշանակումից առաջ և հետո: Վերջիններս ենթակա չեն նաև ատեստավորման[173]: Գտնում ենք, որ այս իրավակարգավորումները ռիսկեր են պարունակում Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների շարունակական մասնագիտական զարգացման տեսանկյունից՝ հատկապես օրեցօր փոփոխվող, լրացվող և կատարելագործվող հակակոռուպցիոն ոլորտի պայմաններում:

**Հակակոռուպցիոն կոմիտեի անդամակցությունը Արդարադատության ակադեմիայի խորհրդին.** վերապատրաստումների համատեքստում կարևորելով Արդարադատության ակադեմիայի դերն ու գործառույթները, մասնավորապես այն, որ Ակադեմիայի կառավարումն իրականացվում է Ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից, որի լիազորություններն անմիջականորեն առնչվում են նաև քննչական մարմինների համար նախատեսված մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գործընթացներին, կանդրադառնանք նաև Խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու վերաբերյալ շրջանառվող օրենքի նախագծին: Մասնավորապես, Ակադեմիայի կառավարման խորհրդի կազմում ընդգրկված ներկայացուցիչները իրականացնում են Ակադեմիայի կառավարումը, սակայն տվյալ խորհրդի կազմում ներառված չեն Հակակոռուպցիոն կոմիտեի և Քննչական Կոմիտեի ներկայացուցիչները: Մինչդեռ, Կոմիտեի ինքնավար պաշտոնների

171 Տե՛ս հետևյալ հղում՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/135

172 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5779573371991__2019-2022_2022_.pdf

173 Կոմիտեի ծառայողի ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին Կոմիտեի ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:

թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք նույնպես Արդարադատության ակադեմիայում անցնում են մասնագիտական պատրաստում և վերապատրաստում, ուստի անհրաժեշտություն կա նրանց նույնպես հնարավորություն ընձեռել մասնակցելու մասնագետների պատրաստման գործընթացը կազմակերպող մարմնի կառավարմանը: Ակադեմիայի կառավարման խորհրդի կազմում Հակակոռուպցիոն և Քննչական կոմիտեների ներկայացուցիչների ընդգրկվածությունը հնարավորություն կտա անմիջականորեն մասնակցելու խորհրդի գործունեությանը, ինչպես նաև մասնագետների պատրաստման և վերապատրաստման ընթացքում առաջացած խնդիրները լուծել արագ և արդյունավետ: Այս նպատակով, 2022թ. -ի ապրիլի 26-ին՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում շրջանառության է դրվել «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը[174], որով առաջարկվում է Օրենքում փոփոխություն կատարել՝ սահմանելով, որ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդում բացի արդարադատության նախարարության, դատախազության և դատական համակարգի ներկայացուցիչներից ընդգրկվեն նաև Կոմիտեի և Քննչական Կոմիտեի ներկայացուցիչները: Այսինքն, արդյունքում Խորհուրդը բաղկացած է լինելու 7-ի փոխարեն 13 անդամից՝ արդարադատության նախարարը կամ նրա նշանակմամբ՝ իր տեղակալը, երեք դատախազ, երեք դատավոր, Կոմիտեի երեք ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, Քննչական Կոմիտեի երեք ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ: Օրենքի նախագիծը 2022թ. -ի հունիսի 3-ին ընդգրկվել է ԱԺ նիստերի օրակարգ և 2022թ. -ի նոյեմբերի 16-ին ընդունվել երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ[175]:

### 4. 3 Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց վերապատրաստումները

Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց վերապատրաստման դասընթացի անցկացման կարգը նույնպես սահմանվում է Կոմիտեի նախագահի կողմից: Համաձայն Կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 03-Լ հրամանի՝ **Կոմիտեի ծառայողների և ծառայողների թեկնածուների վերապատրաստման աշխատանքներն արդյունավետ և որակյալ կազմակերպելու համար պատասխանատու է Կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ղեկավարը:** Իսկ կազմակերպման մեթոդական ղեկավարումը և վերահսկումն իրականացվում են Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից: Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համապատասխան ուսումնական հաստատության հետ համատեղ մշակում է ծառայողների թեկնածուների վերապատրաստման ժամանակացույց՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելուց հետո, որը հաստատվում է Կոմիտեի նախագահի հրամանով: Ժամանակացույցով նախատեսվում է այն ուսումնական հաստատությունը, որտեղ անցկացվելու են վերապատրաստման դասընթացները, սահմանվում են վերապատրաստման ենթակա ծառայողների խմբերը, նրանց թիվը և ուսուցման ժամկետները: Նշենք, որ տվյալ դեպքում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների/ ծառայողների **վերապատրաստումն իրականացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում:** Ծառայողների և ծառայողների թեկնածուների յուրաքանչյուր խմբի համար ուսուցման կոնկրետ ժամկետները և բովանդակությունը որոշվում են ուսումնական պլաններով ու առարկայական ծրագրերով, որոնք մշակում են համապատասխան ուսումնական հաստատությունները՝ Կոմիտեի շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ:

[174] Տե՛ս նախագծի հիմնավորումը՝ https://www.e-draft.am/projects/4261/justification
[175] Տե՛ս նախագծի ընդունման պատմությունը՝ http://parliament.am/draft_history.php?id=13637

Ուսումնական պլանները հաստատվում են Կոմիտեի նախագահի կողմից, իսկ առարկայական ծրագրերը՝ համապատասխան ուսումնական հաստատության ղեկավարի կողմից:

Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից կազմվում են նաև հաջորդ տարում վերապատրաստման ենթակա ծառայողների ցուցակները՝ համաձայնեցնելով ծառայողների ղեկավարների հետ: Վերապատրաստման ենթակա ծառայողների ցուցակի հիման վրա Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանումն ուսումնական հաստատության հետ համատեղ մշակում է վերապատրաստման տարեկան ժամանակացույց, որը հաստատվում է Կոմիտեի նախագահի հրամանով: Կոմիտեի նախագահի որոշմամբ ուսումնական հաստատությունում կարող են կազմակերպվել նաև վերապատրաստման տարեկան ժամանակացույցից դուրս լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ:

Հատկանշական է, որ ուսումնական հաստատությունում վերապատրաստում անցնող ծառայողների և ծառայողների թեկնածուների գործնական պարապմունքներն անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել իրավապահ այլ մարմինների համապատասխան ստորաբաժանումներում:

**Ինչպես և Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողները ևս առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ պարտադիր պետք է անցնեն վերապատրաստման դասընթացներ, որոնց ժամկետը կարող է տևել մինչև մեկ ամիս:**

Վերապատրաստման դասընթացները հաջողությամբ ավարտած ծառայողին և ծառայողի թեկնածուին տրվում է սահմանված նմուշի վկայական, որի ձևը հաստատվում է Կոմիտեի նախագահի հրամանով: Վերապատրաստման դասընթացների ավարտից հետո օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ղեկավարին ուսումնական հաստատության կողմից ներկայացվում են տեղեկություններ վերապատրաստմանը մասնակցած ծառայողի և ծառայողի թեկնածուի հաճախումների և առաջադիմության վերաբերյալ[176]:

**Նշենք, որ ինչպես Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք և թեկնածուները, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողները և թեկնածուները ազատվում են ուսումնառությունից, եթե ունեն դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեությունը դադարեցնելուց հետո չի անցել հինգ տարի:**

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 03Լ հրամանին համապատասխան **վերապատրաստում չեն անցնում՝**

1. **Այն ծառայողները, որոնց ծառայության սահմանային տարիքը լրանալուն մնացել է երկու տարվանից պակաս ժամանակ.**
2. **Այն կին ծառայողները, որոնք ունեն մինչև երեք տարեկան երեխա:**

Նշենք, որ վերապատրաստումներից ազատման նման հիմքեր չեն նախատեսվում Կոմիտեի մյուս ծառայողների, այդ թվում՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

Փաստացի, Կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցները մասնակցել են սակավաթիվ դասընթացների: Դրանցից են Հայաստանում հակակոռուցիոն բարեփոխումների իրականացման ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում **2022թ. -ի օգոստոսի 8-**

[176] Ինքնավար պաշտոնների դեպքում՝ Արդարադատության ակադեմիան յուրաքանչյուր ուսումնական ծրագրի ավարտից հետո ամփոփ տեղեկանք է ներկայացնում Կոմիտեի նախագահին՝ Ակադեմիայում ուսուցումն անցած ունկնդիրների ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

**ից 12-ը անցկացված Կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացները[177]:** Դրանք Կոմիտեի ծառայողների համար օպերատիվ գործունեության մեթոդների, օպերատիվ աշխատանքի համակարգման և մարտավարության վերաբերյալ առաջին վերապատրաստման դասընթացներն էին: Նույն ծրագրի շրջանակներում **2022թ. -ի հոկտեմբերի 25-ից 28-ը Երևանում անցկացվել է Կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված երկրորդ վերապատրաստումը[178]**: Կոմիտեի օպերատիվ աշխատակիցների վերապատրաստումն ուղղված էր կոնկրետ ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման ու հայտնաբերման, ընտրակաշառքի, ֆինանսատնտեսական բնույթի հանցագործությունների ու փողերի լվացման սխեմաների քննության, միջգերատեսչական համագործակցության և այլ թեմաների վերաբերյալ նրանց գիտելիքների ու հմտությունների խորացմանը:

## ԳԼՈՒԽ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 5. 1 Ծառայողական քննություն/կարգապահական վարույթ իրականացնող և տույժ նշանակող մարմինը

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կարգապահական պատասխանատվության հետ կապված հարցերը ևս ուղղակիորեն անդրադառնում են Կոմիտեի գործունեության արդյունավետության և անկախության երաշխիքների վրա, որոնց վերաբերյալ գործող իրավակարգավորումներն ունեն լրացումների և փոփոխությունների կարիք: Այսպես, Կոմիտեի ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգն անմիջապես ազդում է քննիչի անկախության և դատավարական ինքնուրույնության վրա: **Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողի[179] նկատմամբ կարգապահական տույժերը[180] կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, այսինքն՝ Կոմիտեի նախագահը**[181]: Առհասարակ, նախաքննություն կատարող մարմիններում ծառայողական քննություն/կարգապահական վարույթ իրականացնում են կա՛մ կոնկրետ կարգապահական վարույթի համար ստեղծված մարմինները/հանձնաժողովները, կա՛մ կոնկրետ համապատասխան պաշտոնատար անձը: Նախաքննություն կատարող որոշ պետական

---

177 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կայքի նորությունները՝ https://www.anticorruption.am/hy/news/view/158

178 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կայքի նորությունները՝ https://www.anticorruption.am/hy/news/view/172?fbclid=IwAR2Y2gyX_Kxnlv7YDkD10YHskwK9i86gZI_y7dtgg0TxO07jLpdNM_sO85A

179 Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար, աշխատողներ

180 Կոմիտեի ծառայողի նկատմամբ, կարգապահական խախտման ծանրությունից ելնելով, կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը. զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում:

181 Հակակոռուպցիոն կոմիտեում, Կոմիտեի Կոմիտեի նախագահի այս լիազորությունը սահմանված է ինչպես «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով, այնպես էլ Կոմիտեի կանոնադրությամբ: Բացառություն է կազմում «Դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողի նկատմամբ (արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի և արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններ), որի պարագայում, վերջինիս դասային աստիճանից զրկում է ՀՀ նախագահը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: Տվյալ դեպքում, Կոմիտեի նախագահը առաջարկություն է ներկայացնում Վարչապետին, իսկ վարչապետը համապատասխան միջնորդությամբ դիմում է Հանրապետության նախագահին բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողի դասային աստիճանը իջեցնելու համար: Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/Statute, https://www.arlis.am/documentview.aspx?docid=166838

մարմիններում կարգապահական խախտման փաստը որոշող և տույժ նշանակող մարմինները տարանջատված չեն. քննչական մարմնի ղեկավարը նախաձեռնում է կարգապահական վարույթ, նրա կողմից հաստատվում է քննիչի կողմից թույլ տված խախտումը և նույն պաշտոնատար անձի կողմից նշանակվում է նաև տույժ: Այլ կերպ՝ քննչական մարմնի ծառայողի կարգապահական պատասխանատվության ընթացակարգի շրջանակներում տարաբնույթ լիազորությունները կենտրոնացվում են քննչական մարմնի ղեկավարի ձեռքում:

Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (ծառայողական քննություն նշանակելու) վերաբերյալ միջնորդությունները Կոմիտեի նախագահը ստանում է իր տեղակալներից կամ Կոմիտեի վարչությունների և բաժինների պետերից: Այնուհետև իր կողմից նշանակված ծառայողական քննության արդյունքների հիման վրա, Կոմիտեի նախագահը կիրառում է կարգապահական տույժերը: Ընդ որում, Կոմիտեի նախագահը կարող է նշանակել և փոփոխել ծառայողական քննություն կատարողին (Ներքին անվտանգության վարչության աշխատակցին):

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով չեն սահմանվում ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ[182], ինչպես նաև չի սահմանում ծառայողական քննության գործառույթն իրականացնող ծառայողների կամ վարչությունների շրջանակը, մինչդեռ Կոմիտեի Կանոնադրությունից հետևում է, որ այդ գործառույթը, մասնավորապես՝ նախնական ուսումնասիրությունը, իրականացնում է Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունը: Վերջինս կանխարգելում, հայտնաբերում, խափանում և բացահայտում է Կոմիտեի ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտման դեպքերը, Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ կատարում է նախնական ուսումնասիրություն և եզրակացություն տալիս կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է կարգապահական խախտման հանգամանքների լրիվ, համակողմանի և օբյեկտիվ քննություն, Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ առանձին հարցերով ուսումնասիրություններ է իրականացնում Կոմիտեի ստորաբաժանումներում, կարգապահական խախտումներ ծնող պատճառների ու նպաստող պայմանների վերացման ուղղությամբ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին և այլն:

Ծառայողական քննությունների իրականացման շրջանակներում գործառույթներ ունի նաև Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությունը, որը տրամադրում է ծառայողական քննությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, մշակում Կոմիտեի աշխատակիցներին կարգապահական և աշխատանքային պատասխանատվության ենթարկելու իրավական ակտերի նախագծերը և կազմում Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի անձնակազմի կառավարման գծով հրամանները, այդ թվում՝ կարգապահական տույժերի հայտարարման վերաբերյալ:

Կոմիտեի քաղաքացիական ծառայողների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց նկատմամբ կարգապահական տույժեր նշանակելու լիազորությունը վերապահված է ոչ թե Կոմիտեի նախագահին, այլ Կոմիտեի գլխավոր քարտուղարին՝ Կոմիտեի կանոնադրությանը համապատասխան:

**Այսպես, չնայած Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ներգրավված են Կոմիտեի տարբեր վարչություններ՝ ներքին անվտանգության վարչությունը, անձնակազմի կառավարման վարչությունը, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալները, վարչությունների և բաժինների պետերը, այնուամենայնիվ, Կոմիտեի ծառայողին**

182 2022թ. -ի սեպտեմբերի 7-ին շրջանառության մեջ դրված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծով տարանջատվում են ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ:

**կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը կենտրոնացված է մեկ անձի՝ Կոմիտեի նախագահի ձեռքում:**

Այլ երկրների փորձը և ՄԻԵԴ-ի մոտեցումներն այս հարցի շուրջ նույնպես կարևոր են: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը Չեխիայի դեմ գործերից մեկի շրջանակներում անդրադարձել է Չեխիայում ոստիկանների դեմ գործերով քննություն իրականացնող մարմնի՝ Ոստիկանական Տեսչության (Police Inspectorate) անկախությանը: Այդ մարմնի ղեկավարը Չեխիայում նշանակվում և պաշտոնից ազատվում է Կառավարության կողմից, իսկ մյուս անդամները կազմում են Ներքին գործերի նախարարության կողմից նշանակված ոստիկաններ: Դատարանը, հատկապես ընդգծելով քննություն իրականացնող պաշտոնյաների՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն Ներքին գործերի նախարարից կախված լինելը, քննություն իրականացնող ոստիկանական մարմնի ղեկավարի՝ Ներքին գործերի նախարարին հաշվետու լինելը՝ նշել է, որ այդ հանգամանքներով պայմանավորված՝ առկա են կասկածներ քննություն իրականացնող անձանց անկախության կամ վերադասների կողմից ճնշումների ենթակա լինելու առումով՝ անկախ նրանից, թե գործի կյուրերում իրականում առկա է կանխակալության որևէ դրսևորում, թե ոչ[183]:

Կարգապահական պատասխանատվության համատեքստում կարևոր են նաև պաշտոնից ազատելու երաշխիքները: Ցանկացած դեպքում պաշտոնից ազատումը չի կարող լինել կամայական: Պաշտոնից ազատման հիմքերը պետք է հստակ սահմանված լինեն համապատասխան իրավական փաստաթղթերով, որոնցով կարգավորվում է տվյալ մարմնի գործունեությունը: Դրանք կարող են ներառել իրավախախտում, անձեռնհասություն, և այլն[184]: Պետք է ապահովված լինի այնպիսի բազմաշերտ ընթացակարգ, որի միջոցով պաշտոնից ազատման համար հիմք հանդիսացող արարքի մեջ մեղադրվող անձը պատճառաբանություններ ներկայացնելու հնարավորություն կունենա, և որին ներգրավված կլինեն ներկայացուցիչներ ինչպես տվյալ մարմնի, այնպես էլ իշխանության այլ ճյուղերից, օրինակ՝ օրենսդիր, դատական մարմիններ, վերահսկողական հանձնաժողովներ և այլն: Ինչ վերաբերում է ազատման համար հիմքերին, ապա դրանց հիմքում պետք է դրվեն բավարար ապացույցներ և հիմնավորումներ՝ նվազեցնելու պաշտոնից ազատման քողարկման ներքո տարբեր այլ նպատակներով ղեկավար կազմի թիրախավորման հնարավորությունը:

## 5. 2 Կարգապահական վարույթներին առնչվող օրենսդրական նախագծերը

Հակակոռուպցիոն կոմիտեում կարգապահական հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտության հարցը բազմիցս քննարկվել է օրենսդրական նախագծերի շրջանակներում, սակայն, մինչ օրս կյանքի չի կոչվել: Օրինակ՝ 2020թ. -ի հունվարի 24-ին՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի[185] սկզբնական տարբերակում, Կոմիտեի համակարգում նախատեսվել էր ունենալ 7 անդամից կազմված կարգապահական հանձնաժողով[186]: Կարգապահական հանձնաժողովի բոլոր անդամների նշանակումը իրականացվելու էր մեկ անձի՝ Կոմիտեի նախագահի կողմից, ինչը կարող էր կարգապահական հանձնաժողովի ձևավորումն ու գործունեությունը ամբողջությամբ դուրս թողնել վերահսկողությունից, ինչի մասին իրենց հայտարարություններով բարձրաձայնել են ՔՀԿ-ները[187]: Սակայն, Հանձնաժողովի կազմավորման վերաբերյալ ՔՀԿ-ների առաջարկները

183 ՄԻԵԴ, Երեմիասովան և Պեչովան ընդդեմ Չեխիայի (Eremiasova and Pechova v. The Czech Republic) գործով ՄԻԵԴ վճիռը, no. 23944/04 (16 փետրվարի 2012), §§ 58, 154:
184 Կոլոմբոյի մեկնաբանություններ, էջ 33:
185 Տե՛ս նախագիծը՝ https://www.e-draft.am/projects/2256/about
186 Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ Կոմիտեի նախագահի որոշմամբ, Կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ծառայող և երեք իրավաբան-գիտնական
187 Տե՛ս ԻՊԱՍ առաջարկները «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ https://prwb.am/2020/02/17/%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%a1%d6%80%d5%af%d5%b6%d5%a5%d6%80-

քննարկելու փոխարեն, նախագծի հեղինակներն առհասարակ հեռացրել են Հանձնաժողովի հետ կապված դրույթները օրենքի նախագծի վերջնական տարբերակից, որով էլ սահմանել են Կոմիտեի ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու այլ՝ այժմ գործող ընթացակարգը՝ Կոմիտեի նախագահի կողմից միանձնյա, ինչը խնդրահարույց է վերը նշված ՄԻԵԴ մոտեցման համատեքստում:

Կոմիտեի գործունեության մեկնարկից շուրջ մեկ տարի անց՝ 2022թ. -ի սեպտեմբերի 7-ին կրկին շրջանառության է դրվել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը[188], որով **<u>առաջարկվել է Կոմիտեում ձևավորել 7 անդամից[189] բաղկացած կարգապահական հանձնաժողով</u>**[190]: Ի տարբերություն նախորդ նախագծի, սույն նախագծով կարգապահական հանձնաժողովի անդամները չեն նշանակվելու Կոմիտեի նախագահի որոշմամբ, բացառությամբ՝ Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկի: Գտնում ենք որ օրենսդրական նախագիծն ունի լրամշակումների կարիք հետևյալ հարցերի շրջանակներում:

Ըստ նախագծի՝ կարգապահական հանձնաժողովի որոշմամբ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական վարույթ կարող է հարուցվել Կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ: <u>Այսինքն, ֆիզիկական և իրավաբանական անձինք ներգրավված չեն այն անձանց ցանկում, ում դիմումի, միջնորդության հիման վրա կարող է հարուցվել կարգապահական վարույթ:</u> **Գտնում ենք, որ կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծման նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու առիթ պետք է հանդիսանան նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները, դիմումները և այլն**, ինչպիսի հաջողված պրակտիկա է ձևավորել ՀՀ քննչական կոմիտեն՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանին[191] համապատասխան:

**Գտնում ենք, որ նախագծում անհրաժեշտ է որպես Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք նախատեսել նաև մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումները, հաշվի առնելով, որ դրանց պաշտպանությունն ու վերականգնումը երբեմն դուրս են մնում բողոքարկման քրեադատավարական մեխանիզմների շրջանակից**, իսկ գործող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սահմանափակվում են միայն հետևյալով.

1) Կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը.
2) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

---

%d5%b0%d5%a1%d5%af%d5%a1%d5%af%d5%b8%d5%bc%d5%b8%d6%82%d5%ba%d6%81%d5%ab%d5%b8%d5%b6-%d5%af%d5%b8%d5%b4%d5%ab%d5%bf%d5%a5%d5%ab/

188 «Կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը դեռևս չի ընդգրկվել ԱԺ նիստերի օրակարգ, տես հետևյալ հղումը՝ https://www.e-draft.am/projects/4723/about, http://www.parliament.am/draft_history.php?id=14118&lang=arm

189 Հանձնաժողովի կազմում են հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ փաստաբանական պալատի մեկ ներկայացուցիչ, երկու իրավաբան-գիտնական և Կառավարության նշանակած մեկ ներկայացուցիչ:

190 Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ Կոմիտեի նախագահի որոշմամբ, Կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ փաստաբանական պալատի մեկ ներկայացուցիչ, երկու իրավաբան-գիտնական և Կառավարության նշանակած մեկ ներկայացուցիչ

191 Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին՝ https://www.investigative.am/news/view/punish-order.html

3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը[192].

4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը.

5) առաքինության ստուգման բացասական արդյունքները:

Գործող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է, որ Կոմիտեի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան: Նախագծով այս իրավունքին ավելացվել են նաև իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ բացատրություն տալու, իրավաբանական օգնություն ստանալու, ներկայացուցչի միջոցով հանդես գալու իրավունքները: Այսինքն, գործող օրենքով և նախագծով նախատեսվել է միայն Կոմիտեի ծառայողի կողմից կարգապահական տույժի մասին որոշման դատական կարգով բողոքարկման հնարավորություն, չնախատեսելով նաև վարույթին ներգրավված այլ անձանց՝ վարույթի մասնավոր մասնակիցների[193] կողմից իրենց շահերին առնչվող (ծառայողական քննություն նշանակելու հիմքի/ կարգապահական խախտման փաստի բացակայության մասին գրություն, Կոմիտեի ծառայողի մեղավորության բացակայության մասին գրություն կամ այլ փաստաթղթեր) կարգապահական վարույթների հետ կապված փաստաթղթերը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Կարևոր է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում կարգապահական վարույթներին առնչվող փաստաթղթերի/ իրավական ակտերի բողոքարկման որևէ մեխանիզմ՝ ինչպես դատախազական հսկողության, այնպես էլ դատավարական վերահսկողության/դատական երաշխիքների շրջանակներում: Նման պայմաններում դատական պաշտպանության տարբերակն է վարչական դատավարության ընթացակարգը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցով ուղղակիորեն նախատեսված չէ քննիչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրա մեղավորությունը հաստատելու, ծառայողական քննություն նշանակելու վերաբերյալ Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի կողմից տրված գրությունները, որոշումները, հրամանները, Կոմիտեի աշխատակիցների գործողությունները, անգործությունը կամ կայացրած ակտերը քրեական վարույթի մասնավոր մասնակիցների կողմից վարչական դատավարության ընթացակարգերին համապատասխան բողոքարկելու հնարավորություն, ինչն իր հերթին հանգեցնում է մի շարք իրավական խնդիրների և հարցերի:

*Հատկանշական է, որ ԻՊԱՍ իրավաբանների կողմից 2022թ. -ի հունիս ամսին նախաձեռնվել է դատավարություն, որի շրջանակներում պահանջ է ներկայացվել ՀՀ վարչական դատարանին՝ Կոմիտեին՝ հատուկ կարևոր գործերով քննիչի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելուն պարտավորեցնելու մասին, քանի որ մինչ այդ ծառայողական քննություն նշանակումը մերժվել էր Կոմիտեի ներքին անվտանգության վարչության համապատասխան գրությամբ: Հայցով նշվել է, որ թեև Հակակոռուպցիոն կոմիտեն հանդիսանում է քրեաիրավական հարաբերությունների սուբյեկտ, սակայն Կոմիտեի աշխատակցին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս այն դասական առումով չի գործում որպես քրեական իրավունքի սուբյեկտ, այլ՝ իրականացնում է ղեկավար գործառույթներ՝ մի կողմից՝ աշխատակցի, և մյուս կողմից՝ կարգապահական վարույթ հարուցելու համար դիմած անձի միջև հարաբերություններում: Վերջինս*

[192] Տե՛ս Կոմիտեի նախագահի 2022թ. -ի փետրվարի 4-ի N 02-L հրամանը «Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին»

[193] Մեղադրյալ, նրա օրինական ներկայացուցիչ, պաշտպան, տուժող, գույքային պատասխանող, տուժող և գույքային պատասխանող օրինական ներկայացուցիչ և լիազոր ներկայացուցիչ

*այդ իմաստով հանդիսանում է վարչական մարմին, իրականացնում է վարչարարություն, ուստի գործը ենթակա է քննության վարչական դատավարության կարգով: Սակայն, ՀՀ վարչական դատարանի կողմից մերժվել է հայցադիմումի վարույթ ընդունումը[194] այն հիմնավորմամբ, որ ներկայացված պահանջը չի կարող համարվել հայցվորների ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման միջոց, քանի որ նախ, հայցվող ակտը հանդիսանում է ներքին ակտ, այսինքն վեճը տվյալ դեպքում չի համարվում հանրային իրավահարաբերություններից բխող վեճ, և երկրորդ՝ ծառայողական քննություն հարուցելով բոլոր դեպքերում չեն վերականգնվում հայցվորների որևէ ենթադրյալ խախտված իրավունք:* ***Սա նշանակում է, որ քննիչի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու կամ չնշանակելու ինստիտուտների կիրառումը ողջամտորեն չի ենթադրում հայցվորների՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով պահպանվող որևէ իրավունքի պաշտպանություն:*** *Նման պայմաններում անձը զրկվում է իր խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներից, մինչդեռ ՄԻԵԴ պրակտիկայի համաձայն, դատարան դիմելու իրավունքը պետք է լինի գործնական և արդյունավետ: Որպեսզի այս իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է ունենա հստակ գործնական հնարավորություն վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին[195]: Ավելին,* ***սահմանված կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտեն դատավարության մասնակիցների՝ իրավական պաշտպանության հասանելի միջոցի օգտագործումը[196], հետևաբար ինչպես արդեն իսկ շրջանառության մեջ գտնվող նախագծում, այնպես էլ հնարավոր առաջիկա այլ օրենսդրական նախագծերում՝ քրեական և վարչական դատավարությունների համատեքստում, անհրաժեշտ է վերանայել և երաշխիքներ նախատեսել վարույթի մասնավոր մասնակիցների կողմից իրենց դիմումների հիման վրա և իրենց շահերին առնչվող ծառայողական քննությունների/կարգապահական վարույթների կապակցությամբ ընդունված իրավական ակտերի բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ապահովման համար:***

Նախագիծը դրույթներ չի պարունակում Հանձնաժողովի կազմում ՔՀԿ ներկայացուցիչների անդամակցություն վերաբերյալ: Գտնում ենք, որ նման դրույթներ չնախատեսելը չունի որևէ օբյեկտիվ և համոզիչ հիմնավորում, քանզի անգամ նախաքննական գաղտնիքի նկատառումներից ելնելով, **հնարավոր է գործընթացների կազմակերպում, որոնք կապահովեն կարգապահական հանձնաժողովի կազմում ՔՀԿ ներկայացուցիչների ներգրավման երաշխիքները, ինչպես օրինակ՝ գաղտնիության համաձայնագրի կնքումը, ՔՀԿ ներկայացուցչի ընտրության կարգի սահմանումը և այլն:** Անհրաժեշտ է շեշտել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ ներգրավված են օրինակ՝ ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում[197], որոնց ներկայացվող հիմնական պահանջը միայն «առնվազն

194 Տե՛ս ՎԴ/3720/05/22 դատական գործը՝ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809973299

195 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Նունես Դյասն ընդդեմ Պորտուգալիայի 69829/01 2672/03 գործով 10.04.2003թ. վճիռը, NUNES DIAS v. PORTUGAL, 69829/01 2672/03, 10.04.2003

196 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Զվոլսկին և Զվոլսկան ընդդեմ Չեխիայի հանրապետության, թիվ 46129/99 գործով, 12.11.2002թ. վճիռը CASE OF ZVOLSKÝ AND ZVOLSKÁ v. THE CZECH REPUBLIC, 46129/99, 12.11.2002

197 Տե՛ս ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175839, ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության պետի 29 ապրիլի 2013 թ.-ի թիվ 9-Ն հրամանը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=106054, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1672-Ն որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80623

երեք ամսվա գործունեություն ունենալն է»: ՀՀ ոստիկանության Կարգապահական հանձնաժողովի 11 անդամներից 5-ը հասարակական միավորումների ներկայացուցիչներ են[198]: ՀՀ ոստիկանությունը ևս հանդիսանում է հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարող կառույց, սակայն այդ հանգամանքը, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննության կատարումը, խոչընդոտ չեն հանդիսանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման համար:

**Կարգապահական հանձնաժողովում ՔՀԿ ներկայացուցիչների անդամակցության նախատեսումից զատ, գտնում ենք, որ անհրաժեշտ է ապահովել նաև դիտորդների մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին՝ վերը նշվածին նույնանման երաշխիքների նախատեսմամբ:** Ինքնին քրեական վարույթներով նախաքննական գաղտնիքի առկայության մատնանշումը, կարգապահական հանձնաժողովի նիստերի դռնփակ լինելը չեն կարող հիմք լինել դիտորդների մասնակցությունը բացառելու համար: Հանձնաժողովի աշխատանքներին դիտորդի կարգավիճակով ՔՀԿ-ների ներկայացուցիչներ չներգրավելը Կոմիտեի գործունեության սկզբունքների, մասնավորապես՝ հրապարակայնության սկզբունքի խախտում է և քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից՝ խոչընդոտ: Այս առումով դրական օրինակ է Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ ԲԴԽ), որի կողմից դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթներն[199] անցկացվում են դռնբաց՝ ապահովելով դիտորդների ներգրավվածությունը: Հաշվի առնելով Կոմիտեի գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև քրեական վարույթներով նախաքննական գաղտնիքի օբյեկտիվորեն հիմնավորված շրջանակը, գտնում ենք, որ անգամ Հանձնաժողովի նիստերի դռնփակ լինելու պայմաններում (*համարժեք օրինակ է Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անցանց համալրման մրցույթը, որի ընթացքը բաց չէ ԶԼՄ-ների և հասարակության համար, սակայն դիտորդի ներգրավվածություն նախատեսվում է*), վերջինիս աշխատանքներին, մասնավորապես նիստերին մասնակցության հնարավորություն պետք է ունենան նաև ոլորտային ՔՀԿ-ները՝ դիտորդի կարգավիճակով:

Նշենք նաև, որ գործող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով չեն սահմանվում ծառայողական քննության փուլերը[200], ինչպես նաև չի սահմանվում ծառայողական քննության գործառույթն իրականացնող ծառայողների կամ վարչությունների շրջանակը, մինչդեռ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունից հետևում է, որ այդ գործառույթը, մասնավորապես՝ նախնական ուսումնասիրությունը, իրականացնում է կոմիտեի ներքին անվտանգության վարչությունը: Գտնում ենք, որ ծառայողական քննության փուլերը և դրանց հետ կապված ընթացակարգային հարցերը ևս պետք է ամրագրվեն նախագծով:

Այսպես, գտնում ենք, որ անհրաժեշտ է ծառայողական քննությունները/կարգապահական վարույթներն իրականացնել ոչ թե մեկ անձի, այլ կարգապահական հանձնաժողովի կողմից՝ քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների, դիտորդների, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցությամբ, ինչպես նաև գործող օրենքը լրացնել նախնական ուսումնասիրություն/ծառայողական քննություն կատարելու առիթներով (օրինակ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները) և հիմքերով (օրինակ՝ մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների

---

[198] Տե՛ս 2023 թ.-ին ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկված հասարակական միավորումների ցանկը՝ https://www.police.am/news/view/%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6010323.html ,

199 Տե՛ս ԲԴԽ կարգապահական վարույթների նիստերի ժամանակացույցը՝ https://court.am/hy/disciplinary/3

[200] *2022թ.-ի սեպտեմբերի 7-ին շրջանառության մեջ դրված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծով տարանջատվում են ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ:*

խախտումները), ծառայողական քննության փուլերի և դրանց ընթացակարգային հարցերի վերաբերյալ դրույթներով:

## ԳԼՈՒԽ 6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներ են հանդիսանում միայն Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը, աշխատողները:

**Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք են՝** Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, Հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչության ղեկավարի (հետաքննության մարմնի պետի) և նրա տեղակալի, հակակոռուպցիոն Կոմիտեի բաժինների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժինների ղեկավարների և նրանց տեղակալների, հակակոռուպցիոն Կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները, քննիչները:

**Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք են՝** օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչության ղեկավարը և նրա տեղակալը, բաժինների ղեկավարները և նրանց տեղակալները, ավագ օպերլիազորները, օպերլիազորները:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ունեն մի շարք նյութական, սոցիալական և այլ երաշխիքներ[201], որոնցից մեկը զենք կրելու իրավունքն է: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի[202] 45-րդ հոդվածով նախատեսվել է, որ Կոմիտեի ծառայողին ծառայողական հաշվեցուցակային զենք տրամադրվում է իր անվտանգության և անձնական պաշտպանության նպատակով: Նշվածով պայմանավորված լրացումներ են կատարվել նաև «Զենքի մասին» ՀՀ օրենքում[203], դրա 5-րդ հոդվածում նախատեսելով, որ մարտական զենք օգտագործելու իրավունք ունի նաև Հակակոռուպցիոն կոմիտեն[204]՝ օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման նպատակով:

Այսպես, միևնույն օրը ուժի մեջ մտած երկու օրենքների միջև առկա է անհամապատասխանություն. **«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով զենք կրելու իրավունքը Կոմիտեի ծառայողին տրվում է որպես իր անվտանգության և անձնական պաշտպանության միջոց[205], ընդ որում՝ տրվում է ծառայողական հաշվեցուցակային զենք, իսկ «Զենքի մասին» ՀՀ օրենքով Կոմիտեի ծառայողին տրվում է ոչ թե ծառայողական, այլ մարտական զենք, որը նախատեսված է ոչ թե ծառայողի անձնական պաշտպանության, այլ օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար:** Սա ոչ միայն սոսկ հակասություն է, այլև իրավական որոշակիության ու

201 Ծառայողի վարձատրությունը, կենսաթոշակային և սոցիալական ապահովությունը, գույքային վնասի հատուցումը, արձակուրդը, ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելը և այլն

202 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164983

203 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=157301

204 Մինչ օրենսդրական փոփոխությունը, մարտական զենքը ընդունված էր օգտագործել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների զինված ստորաբաժանումներում, քրեակատարողական ծառայությունում, ՀՀ պետական եկամուտների Կոմիտեի հարկային և մաքսային մարմիններում և պետական սուրհանդակային ծառայության (այսուհետ՝ պետական ռազմականացված կազմակերպություններ) սպառազինության մեջ և նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար:

205 Տեմ՛ ՀԿԿ մասին օրենքի հոդված 45, մաս 1՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=175831

հստակության խնդիր երկու իրավական ակտերի միջև, որոնք կարող էին հանգեցնել պրակտիկ մեկնաբանությունների խնդիրների:

Այս օրենսդրական հակասությունների խնդիրը լուծվել է մոտ մեկ տարի անց՝ 2022թ. -ի հոկտեմբերի 5-ին ընդունված նոր՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով[206], որի շրջանակներում Հակակոռուպցիոն կոմիտեն դիտարկվել է պետական ռազմականացված կազմակերպությունների շարքում, այդպիսով իրավունք ստանալով օգտագործելու ոչ միայն մարտական, այլև ծառայողական զենք՝ ինքնապաշտպանության կամ քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի, բնական պաշարների, արժեքավոր և վտանգավոր բեռների, հատուկ թղթակցության պահպանության պարտականությունների կատարման համար:

Նշենք նաև, որ Կոմիտեի ծառայողի ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը պետք է սահմանվեր Կոմիտեի նախագահի հրամանով, ինչպիսի հրաման մինչ 2022թ. -ի նոյեմբերի 30-ը չի մշակվել[207]:

Փոխարենը Կոմիտեի կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ[208], որով **առաջարկվել է Օրենքը լրացնել նոր՝ 7.1 գլխով՝ «Կոմիտեի ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը (գործադրում և օգտագործում): Կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության միջոցները» վերնագրով:** Նախագծի վերաբերյալ գրավոր հիմնավորում չի ներկայացվել, ինչը հնարավորություն կընձեռեր հասարակությանն ընկալել Կոմիտեի ծառայողի կողմից զենք կրելու անհրաժեշտությունը և առաջ չէր բերի մարդու իրավունքների հնարավոր խախտումների մտավախություններ, քանի որ այն ունի հակասություններ իրավապահ մարմինների կողմից ուժի կիրառման միջազգային չափանիշների հետ: Մասնավորապես, անձի կյանքի իրավունքի և խոշտանգումների արգելքի իրավունքի համատեքստում նախագիծը չի ամրագրում իրավապահ մարմնի ծառայողի կողմից ուժի կիրառման, այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման համար պարտադիր սկզբունքները, ներառյալ՝ անհրաժեշտության և համաչափության սկզբունքները[209]: ՄԱԿ Իրավապահ մարմինների ծառայողների կողմից ուժի կիրառման և հրազենի կիրառման հիմնական սկզբունքները սահմանում են, որ «Իրավապահ մարմինների ծառայողները չպետք է զենք (հրազեն) օգտագործեն անձանց դեմ, բացառությամբ ինքնապաշտպանության կամ այլ անձանց կյանքի կամ ծանր վնասվածքի իրական սպառնալիքից պաշտպանելու համար, կյանքին ծանր սպառնալիք պարունակող առանձնապես ծանր հանցագործության կատարումը կանխելու, նման վտանգ ներկայացնող և ծառայողների իշխանությանը չենթարկվող ու դիմադրող անձին ձերբակալելու համար, կամ նրա փախուստը կանխելու նպատակով, և երբ նվազ ծայրահեղ միջոցները բավարար չեն նշված նպատակներին հասնելու համար»: Այս համատեքստում, նախագծով սահմանված կարգավորումը հակասում է միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած իրավունքին, քանի որ չի անդրադառնում անձանց կողմից Կոմիտեի ծառայողին, այլ անձանց կյանքին կամ առողջությանը իրական սպառնալիքի առկայությանը, տարբերակում չի դնում կյանքին ծանր սպառնալիք պարունակող և մնացած ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների միջև[210]:

206 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=169842
207 Համաձայն ԻՊԱՍ 12. 10. 2022 թիվ Ե74 գրության պատասխանի՝ տրված Կոմիտեի կողմից 17. 10. 2022թ. -ին
208 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-draft.am/projects/4671
209 Տե՛ս ԻՊԱՍ հայտարարությունը՝ https://prwb.am/2022/09/01/kartcikh-10/

210 Առավել մանրամասն տե՛ս ԻՊԱՍ-ի կողմից 2022թ. -ի սեպտեմբերի 1-ին տրված կարծիքում՝ https://prwb.am/2022/09/01/kartcikh-10/

Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեն որպես քննչական մարմին կոչված էր ապահովելու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը, ինչի նպատակով վերջինիս հատկացվել էին համապատասխան գործիքակազմ և հաստիքներ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու հնարավորություն: Կոմիտեի 170 հաստիքներից միայն 29-ն են նախատեսված եղել քննիչների, իսկ 50-ը՝ օպերլիազորների համար, ինչը հանգեցրել է Կոմիտեի գերծանրաբեռնվածության և որպես արդյունք՝ Կոմիտեի քննությանը ենթակա հանցագործությունների ցանկի վերանայման: Կատարված ընթացիկ փոփոխություններով Կոմիտեի ենթակայությունից դուրս են թողնվել մասնավոր կոռուպցիոն դեպքերի քննությունը (ինչպես ՀՔԾ-ի դեպքում էր), ինչպես նաև ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով զուգորդված, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական լիազորություններն անցնելու և իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը: Այս ֆիլտրները նախատեսվում էր վերացնել 2023թ. -ի հունվարի 1-ից՝ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված բոլոր կոռուպցիոն բնույթի հանցանքների քննությունը փոխանցելով Հակակոռուպցիոն կոմիտեին, սակայն այս գործընթացը հետաձգվել է, այն նախատեսելով 1 տարի ավելի ուշ՝ 2024թ. -ի հունվարի 1-ից:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության արդյունավետության նպատակով սահմանվել էին նաև Կոմիտեի ծառայողների սոցիալական և այլ երաշխիքները, որոնց թվում էր զենք կրելու իրավունքը, որի վերաբերյալ իրավակարգավորումներն էականորեն թերի են և մինչ օրս գտնվում են լրամշակումների փուլում: Այսպես, վերը նշված խնդիրները ցույց են տալիս, որ չնայած Կոմիտեի կառուցվածքի և գործունեության ձևաչափի, գործիքակազմի և հաստիքացուցակի նախնական սահմանմանը, դրանք ինչպես տեխնիկապես, այնպես էլ բովանդակային առումով համապատասխանեցված չեն եղել գործնական մարտահրավերներին, և հանգեցրել են Կոմիտեի ստեղծման հիմքում դրված հիմնական նպատակից շեղման:

## ԳԼՈՒԽ 7. ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող մասնագիտական մարմինների բովանդակային իրավասությունների սահմանումն ամենախնդրահարույց հարցերից մեկն է: Կոռուպցիոն հանցագործությունների ներքո տարբեր պետություններ դիտարկում են տարբեր հանցագործություններ: Մասնագիտացված մարմիններ ստեղծելիս պետությունները սահմանում են այն հանցակազմերի ցանկը, որն ընկնում է այդ մարմնի իրավասության ներքո: Այս առումով մեկ այլ խնդիր է նշված մասնագիտացված մարմինների ծանրաբեռնումը բոլոր կոռուպցիոն հանցագործությունները քննելու պարտականությամբ, որի արդյունքում, օրինակ՝ մանր կոռուպցիայի դրսևորումներով հանցագործությունների պատճառով ռեսուրսները չեն բավարարում քննելու լուրջ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված հանցագործությունները: Որպես հնարավոր լուծում առաջարկվում է սահմանափակել կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմինների իրավասությունները, օրինակ՝ տալով միայն կարևոր և բարձրաստիճան կոռուպցիոն գործեր քննելու իրավասություն: Նշված մոտեցումը որդեգրելիս կարևոր է հստակ սահմանել այն չափորոշիչները, որոնց միջոցով կտարանջատվեն նշված հանցագործությունները՝ խուսափելու հայեցողության կամայական դրսևորումներից և այլ չարաշահումներից: Այս մոտեցման կողմնակից է նաև ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, ով բազմիցս

բարձրաձայնել է[211] մանր, ինչպես նաև մասնավոր բնույթի կոռուպցիոն հանցագործությունների քննության վրա Կոմիտեի ռեսուրսները վատնելու խնդրի մասին, առաջարկելով ներդնել որոշակի «ֆիլտրեր», և այդ առաջարկները՝ այլ առաջարկների հետ միասին, հետագայում ներկայացրել է օրենսդրական նախագծերի տեսքով:

Կոմիտեի քննչական ենթակայության տակ գտնվող հոդվածները դիտարկելիս անդրադարձ կկատարենք ինչպես նախորդ՝ 1998թ. -ի հուլիսի 1-ին ընդունված, այնպես էլ գործող 2021թ. -ի հունիսի 30-ին ընդունված քրեական դատավարության օրենսգրքերին (այսուհետ նաև նախորդ և գործող քրեական դատավարության օրենսգրքեր):

1. Այսպես, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և նախաքննության իրականացումը վերապահվել են Կոմիտեին: Այդ նպատակով, 2021թ. -ի մարտի 24-ին[212]՝ նախորդ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածում (քննչական ենթակայությունը) կատարվել են փոփոխություններ և հոդվածը համալրվել է 5.1-րդ մասով, ըստ որի՝ նախաքննությունը 2003թ. -ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարելու էին Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

2. Նշված փոփոխությունից հետո Հակակոռուպցիոն կոմիտեն հրապարակել էր իր գործունեության մասին 2021թ. -ի և 2022թ. -ի առաջին կիսամյակի հաղորդումները[213], դրանցում շեշտադրելով Կոմիտեի աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ կատարելով համեմատականներ ՀՔԾ ծանրաբեռնվածության հետ՝ այդպիսով հիմք նախապատրաստելով նոր օրենսդրական փոփոխությունների համար: Մասնավորապես, նշվել է, որ ՀՔԾ-ում 2020թ. -ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում քննվել էր 178 քրեական գործ, Հակակոռուպցիոն կոմիտեում 2021թ. -ի նույն ժամանակահատվածում՝ 280 քրեական գործ, իսկ 2022թ. -ի հունվարի 1-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 627 քրեական գործ: Նման ցուցանիշների պայմաններում քննիչների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, պատշաճ նախաքննության իրականացման ու նախաքննության արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեի կողմից մշակվել էր նախորդ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ[214]: Նախագիծը հիմնավորվել էր նրանով, որ Կոմիտեի ռեսուրսը բավարար չէր նման մեծ ծավալով գործերի քննությունն իրականացնելու համար, ինչը անդրադառնալու էր ինչպես գործերի քննության որակի, այնպես էլ ողջամիտ ժամկետների պահպանման վրա: Ընդ որում, 1 քննիչի ծանրաբեռնվածությունը կարող էր գերազանցել տարեկան 58 գործը (Կոմիտեի նախագահի պնդմամբ, արդյունավետ քննություն իրականացնելու նպատակով մեկ քննիչի վարույթում առավելագույնը պետք է քննվի միաժամանակ 2 քրեական գործ[215]): Բացի այդ, Կոմիտեի քննիչներին էին վերապահված ՀՀ հին քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված այնպիսի հանցագործություններ, որոնք իրենց դրսևորումներով հիմնականում կոռուպցիոն որևէ հատկանիշ չէին պարունակում, օրինակ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը[216], եթե կատարվել են բռնություն

211 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/123, https://www.anticorruption.am/hy/videws/view/129

212 Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունված 2021 թ. -ի մարտի 24-ին՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=151804

213 Տե՛ս Կոմիտեի 2021թ. -ի տարեկան գործունեության մասին հաղորդումը՝ https://anticorruption.am/hy/pages/show/report, Կոմիտեի 2022թ. -ի 1-ին կիսամյակի գործունեության մասին հաղորդումը՝ https://anticorruption.am/hy/pages/show/report-semester

214 Տե՛ս նախագծի հիմնավորումը՝ https://www.e-draft.am/projects/4031/justification

215 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://www.anticorruption.am/hy/news/view/111

216 Համապատասխանաբար ՀՀ հին քրեական օրենսգրքի 308, 309 և 375 հոդվածներ

գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով: Նախագծով առաջարկվել էր նաև Կոմիտեի ենթակայությունից հանել մասնավոր կոռուպցիոն դեպքերի քննությունը: Այսինքն, բացառապես, Կոմիտեին վերապահել որոշակի տեսակի հանցագործությունների քննությունը, իսկ մնացյալ կոռուպցիոն հանցագործությունների Կոմիտեի ենթակայությանը վերապահելու համար նախատեսել որոշակի պայման, այն է՝ եթե դրանք կատարվել են որոշակի պաշտոնատար անձանց կողմից:

**Նշված նախագիծն ընդունվել է 2022թ. -ի մայիսի 25-ին[217], որի արդյունքում քննչական ենթակայության դրույթները փոփոխվել են**, սահմանելով, որ նախաքննությունը նախորդ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են Կոմիտեի քննիչները, **եթե հանցագործությունները կատարվել են ՀՀ հին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պաշտոնատար անձանց կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից[218]՝** իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված, իսկ նախաքննությունը պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական լիազորություններն անցնելու և իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են Կոմիտեի քննիչները, **բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և զուգորդվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:** Սահմանվել են նաև այն հանցագործությունները[219], որոնց վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են բացառապես Կոմիտեի քննիչները: Այս փոփոխություններն ու լրացումները պահպանվել են նաև ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 16-ի մասով:

**3.** Գործող քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթներին համապատասխան, 2023թ. -ի հունվարի 1-ից ՀՀ ողջ տարածքում կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը ամբողջությամբ վերապահվելու էր Հակակոռուպցիոն կոմիտեին, ինչից ենթադրելի էր, որ մինչև 2023թ. -ն արդեն հարուցված գործերը կամ նախաձեռնված վարույթները փոխանցվելու էին Կոմիտեին: Խոսքն այն գործերի կամ վարույթների մասին է, որոնք նախորդ քրեական դատավարության օրենսգրքում վերը նշված՝ 2022թ. -ի մայիսի 25-ի թիվ ՀՕ-140-Ն օրենքով նախատեսված փոփոխություններով, ինչպես նաև գործող քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ

217 Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունված 2022 թ. -ի մայիսի 25-ին՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=163727

218 Համապատասխանաբար նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով նախատեսված պաշտոնատար անձինք

219 ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 154.2. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը, հոդված 154.9. Ընտրակաշառքի միջնորդությունը, հոդված 154.10. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը, հոդված 161.2. Կուսակցության օգտին խոշոր չափով ապօրինի նվիրատվություն ներգրավելը, հոդված 161.5. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափով շրջանցելը, հոդված 310. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը, հոդված 310.1. Ապօրինի հարստանալը, հոդված 311. Կաշառք ստանալը, հոդված 311.1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը, հոդված 311.2. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելը, հոդված 312. Կաշառք տալը, հոդված 312.1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը, հոդված 312.2. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը, հոդված 313. Կաշառքի միջնորդությունը, հոդված 314. Պաշտոնեական կեղծիքը, հոդված 314.2. Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը, հոդված 314.3. Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, հոդված 352. Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը:

հոդվածի 16-ի մասով վերապահվել էին նախաքննություն իրականացնող այլ մարմիններին: Սակայն, Կոմիտեի նախագահն իր 2022թ. -ի ամփոփիչ ելույթում կրկին անդրադարձել է Կոմիտեի ծանրաբեռնվածության խնդրին, նշելով, որ, եթե նախորդ մեկ տարվա ընթացքում ՀՔԾ-ում քննվել է 565 քրեական գործ, ապա 2021թ. -ի հոկտեմբերի 23-ից մինչ 2022թ. -ի հոկտեմբերի 24-ը Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվել է 1042 քրեական վարույթ: Այսինքն, Կոմիտեն ավելի քիչ քննիչներով (23 քննիչ) մեկ տարվա ընթացքում քննել է 477 քրեական վարույթ ավելի (84,4%-ով ավելի)[220]: Գործերի քանակի աննախադեպ աճով պայմանավորված և ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով նախաքննություն են իրականացրել նաև Կոմիտեի երեք վարչությունների պետերի տեղակալները, սակայն այդ պայմաններում ևս միջին ծանրաբեռնվածությունը չի նվազել և այն կազմել է տարեկան միջինը 43 վարույթ 1 քննիչի հաշվարկով: Քրեական վարույթներով նախաքննություն իրականացնելուն զուգահեռ, Կոմիտեի քննիչները նախապատրաստել են 767 նյութեր, 2491 դիմում և հաղորդում[221]:

**Արդյունքում, կրկին Կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ արդարադատության նախարարության միջոցով 2022թ.-ի նոյեմբերի 10-ին հանրային քննարկման է ներկայացվել նոր քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը[222]՝ քննչական ենթակայությանն առնչող կարգավորումների մասով**, այն հիմնավորմամբ, որ <u>առկա է իրական վտանգ, որ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ռեսուրսը բավարար չի լինելու նման ահռելի քանակությամբ գործերի քննությունը 2023թ. -ի հունվարի 1-ից իրականացնելու համար, ինչը անդրադառնալու է ինչպես գործերի քննության որակի, այնպես էլ ողջամիտ ժամկետի հիմնարար սկզբունքի պահպանման վրա (նույն հիմնավորումը, ինչ՝ նախկինում):</u> Նախագծով առաջարկվել է սահմանափակել Կոմիտեի քննությանը ենթակա քրեական գործերի շրջանակը՝ **<u>2023թ. հունվարի 1-ից Կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված՝ նոր քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթների մի մասի քննությունը պատվիրակելով այլ քննչական մարմիններին:</u>** Կոմիտեն նշել է, որ եթե իրենց մոտ գտնվող վարույթներին գումարվեն այն քրեական գործերն ու քրեական վարույթները, որոնք մինչև 2023թ. -ի հունվարի 1-ը հարուցվել (նախաձեռնվել) և քննվում են նախաքննական այլ մարմիններում, որոնք գործող դատավարական կարգավորումների համաձայն՝ պետք է փոխանցվեն Կոմիտեին, ապա իրավիճակն իրավամբ անկառավարելի կդառնա: Ըստ այդմ, առաջարկվել է, որ քրեական դատավարության օրենսգրքով Կոմիտեի քննիչների ենթակայությանը վերապահված, սակայն «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2024թ. -ի հունվարի 1-ը հարուցված (նախաձեռնված), ինչպես նաև քննվող քրեական գործերով (վարույթներով) նախաքննությունն իրականացնեն այն մարմինները, որոնք Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նշված գործերով (վարույթներով) իրականացրել են նախաքննություն, բացառությամբ այն գործերի, որոնք Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ Կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնվել են Կոմիտեի քննիչների վարույթին: Իսկ օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո նախաքննություն իրականացրած մարմնի գործունեությունը դադարեցվելու դեպքում (օրինակ՝ ՊԵԿ-ի, ԱԱԾ-ի) ՀՀ գլխավոր դատախազը վերոհիշյալ գործերով (վարույթներով) նախաքննությունը շարունակելը կհանձնարարի Քննչական կոմիտեին: Նախագծի վերաբերյալ կարծիքով հանդես են եկել նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (այսուհետ՝ ՔՀԿ) ներկայացուցիչները, նշելով, որ ներկայացված չէ

220 Թարմացված տվյալներ 2023թ. -ի հունվարի 4-ի դրությամբ. 2997 դիմում, 1277 քրեական վարույթ, դատարան է ուղարկվել 103 գործ՝ 228 անձի վերաբերյալ, որոնցից որևէ գործով դատարանի կողմից արդարացման դատավճռ չի կայացվել, այսինքն՝ կամ կայացվել են մեղադրական դատավճիռներ կամ գործերը դեռևս գտնվում են քննության փուլում: Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/137

221 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ելույթը՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/135

222 Տ՛ես հետևյալ հղումը՝ https://www.e-draft.am/projects/4972/about

համեմատական վերլուծություն այլ քննչական մարմինների ծանրաբեռնվածության վերաբերյալ և, բացի այդ, արդիական է առաջին հերթին Կոմիտեի կառուցվածքային փոփոխությունների և աշխատակազմի օպտիմալացման խնդիրը, ոչ թե Կոմիտեին վերապահված գործերը այլ քննչական մարմիններին փոխանցելը: Նշված օրենսդրական նախագիծը ԱԺ-ի կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ[223] 2022թ. -ի դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել[224] 2023թ. -ի հունվարի 1-ից:

*Գծապատկեր 6. Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական ենթակայության փոփոխություններ*




Այսպես, Կոմիտեի ձևավորման օրվանից ի վեր օրակարգային քննարկումների թեմա է դարձել Կոմիտեի ծանրաբեռնվածության խնդիրը: Նշվածի կապակցությամբ բազմիցս կատարվել են օրենսդրական փոփոխություններ ու լրացումներ՝ նեղացնելով Կոմիտեի քննությանը ենթակա հանցագործությունների շրջանակը՝ բացառելով մասնավոր կոռուպցիոն հանցագործությունների, ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով, բռնության գործադրման կամ գործադրելու սպառնալիքով զուգորդված, զենք կամ հատուկ միջոց օգտագործելով կատարված հանցագործությունների քննությունը: Սակայն, նույնիսկ հընթացս կատարված այդ փոփոխություններին, Կոմիտեն շարունակում է բարձրաձայնել իր աննախադեպ ծանրաբեռնվածության, ռեսուրսների անբավարարության մասին և ներկայացնում է նոր օրենսդրական նախագծեր՝ կապված քննչական ենթակայության կանոնների վերանայման հետ:

Նման պայմաններում անհասկանալի է առհասարակ Կոմիտեի ստեղծման նպատակահարմարությունը, երբ օրեցօր նվազեցվում է նրա ենթակայության տակ գտնվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շրջանակը, խախտվում է 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության տրամաբանությունը, որով նախատեսվում էր

223 http://parliament.am/draft_history.php?id=13947
224 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172456

կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությունն ամբողջությամբ իրականացնել մեկ մասնագիտացված մարմնի կողմից: Բացի այդ, ստացվում է, որ Կոմիտեն փաստացի իրականացնում է ՀՔԾ գործառույթներին նմանվող գործունեություն՝ քննելով միայն կոռուպցիոն բնույթի այն հանցագործությունները (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի որոշ հոդվածների), որոնք կատարվել են պաշտոնատար անձանց կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից, քանի որ ՀՔԾ-ն նույնպես իրականացնում էր բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննություն:

Այս ամենը վկայում է ի սկզբանե սխալ ռազմավարական պլանավորման կամ առհասարակ պլանավորման բացակայության մասին, քանզի Կոմիտեի ձևավորման հիմքում ընկած ռազմավարական գաղափարներն ու նպատակները մնացել են անկատար՝ Կոմիտեի քննչական ենթակայության, հաստիքակազմի անբավարարության, ինչպես նաև այլ միջոցառումների (օրինակ՝ տարածքային ստորաբաժանումների ձևավորման) համատեքստում:

## ԳԼՈՒԽ 8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

ՏՀՁԿ-ի կողմից սահմանված հաշվետվողականության և թափանցիկության գործոնի շրջանակներում՝ անկախությունը կամ ինքնավարությունը չի նշանակում հաշվետողականության և թափանցիկության բացառում: Անկախ ինստիտուցիոնալ դիրքից, կարևոր է, որ նշված մարմնի լիազորությունները ներկառուցվեն իշխանության ճյուղերի տարանջատման և հակակշռման սկզբունքի համակարգում: Այսինքն՝ անկախությունը պետք է լինի ոչ թե բացարձակ, այլ այնքան, որպեսզի ապահովի այդ մարմնի պատշաճ գործունեությունը[225]: Բոլոր դեպքերում ենթադրվում է, որ նշված մարմինը պարտավոր է ներկայացնել կատարողականի վերաբերյալ հաշվետվություններ բարձրաստիճան գործադիր և օրենսդիր իշխանություններին: Բացի այդ, նշված մարմինները պետք է ենթակա լինեն դատախազական և դատական հսկողությանը[226]:

Այսպես, չնայած «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն չի սահմանվում թափանցիկությունը՝ որպես Կոմիտեի գործունեության սկզբունք, սակայն միաժամանակ, Կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքի պահպանմամբ[227], որը ներառում է հանրությանն իր գործունեության մասին տեղեկացնելը, Կառավարություն և Ազգային ժողով նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում ներկայացնելը և այն իր պաշտոնական կայքէջում հրապարակելը, նույն կայքէջում գործունեության մասին կիսամյակային ամփոփ տեղեկատվություն ներկայացնելը և այլն:

**Կոմիտեի ընթացիկ գործունեության, Կոմիտեի մանդատի/ իրավասությունների և վերջինիս լիազորությունների շրջանակի մասին իրազեկում.** հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքի ապահովման նպատակով Կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքների պաշտպանությունը: Այս սկզբունքի ապահովման նպատակով, **Կոմիտեն իր ընթացիկ գործունեության, մանդատի և լիազորությունների շրջանակի մասին սոցիալական ցանցերում և**

[225] Ավելի մանրամասն տե՛ս Specialised Anti-Corruption Institutions. Review of models, OECD 2008, https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf, էջ 25-26
[226] Նույն տեղում, էջ 27
[227] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172258

**պաշտոնական կայքերում, հնարավորության դեպքում նաև զանգվածային լրատվության միջոցներում պետք է հեռարձակի/ցուցադրի իրազեկող տեսահոլովակներ կամ տեղեկատվական նյութեր**[228]: Սակայն, փաստացի, Կոմիտեի գործունեությանն ու մանդատին առնչվող տեսահոլովակները[229] սակավաթիվ են, որոնք պատրաստվել են դեռևս Կոմիտեի ձևավորման սկզբնական փուլում և ամբողջովին չեն ներկայացնում Կոմիտեի գործիքակազմը և հնարավորությունները: Գտնում ենք, որ Կոմիտեի լիարժեք ձևավորումից և գործունեության մեկնարկից հետո նույնպես պետք է պարբերաբար հրապարակվեն տեղեկատվական և վիճակագրական բնույթի տեսահոլովակներ՝ քաղաքացիների համար առնվազն Կոմիտե դիմելու դեպքերի, կարգի ու Կոմիտեի լիազորությունների շրջանակի պարզաբանման նպատակով, հաշվի առնելով նաև Կոմիտեի ենթակայության ներքո գտնվող հանցագործությունների ցանկի հաճախակի փոփոխումը օրենսդրի կողմից:

**Կոմիտեին առնչվող իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների անցկացում. Էլեկտրոնային հարթակներ.** Կոմիտեի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման տեսանկյունից կարևոր է նաև Կոմիտեին առնչվող իրավական ակտերի նախագծերի հրապարակումն ու դրանց վերաբերյալ հանրային քննարկումների անցկացումը: Կոմիտեն ստեղծման օրվանից ի վեր, ուսումնասիրել է ավելի քան 150 իրավական ակտերի նախագծեր, ինչպես նաև օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի 58 նախագծերի վերաբերյալ ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ[230]: Կարևորելով նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակի (www.e-draft.am) [231] դերը՝ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ 2020, 2021 և 2022թթ-ին նախատեսվել էին www.e-draft.am հարթակի արդիականացմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ: Սակայն, չնայած նշված հարթակի առկայությանը, միևնույնն է, մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծեր պատշաճ ընթացակարգով չեն հրապարակվել և ներկայացվել հանրային քննարկման, նվազեցնելով այդ հարթակների դերն ու նշանակությունը: Նշենք, որ Կոմիտեի՝ www. anticorruption.am եռալեզու պաշտոնական կայքէջը[232] /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ գործարկվել է 2022թ. -ի տարեսկզբին: Այն նույնպես պետք է ծառայեր Կոմիտեի ընթացիկ գործունեության, այդ թվում՝ Կոմիտեի մասնակցությամբ մշակվող իրավական ակտերի նախագծերի լուսաբանման նպատակին: Հատկանշական է, որ Կոմիտեն ստեղծման սկզբնական ժամանակահատվածում առավել ակտիվորեն օգտագործում էր սոցիալական ցանցերում ստեղծված պաշտոնական էջերը[233]:

**Կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվություններ. կայքում հրապարակվող տեղեկատվություն.** Կոմիտեի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման հաջորդ կարևոր գործոնը Կոմիտեի պաշտոնական կայքէջում կիսամյակային և տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ վիճակագրական հաշվետվությունների հրապարակումն է: Կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքէջում հրապարակում է գործունեության

---

[228] Տե՛ս ՀՀ կառավարության 2022թ. -ի հուլիսի 18-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022թ. -ի հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 820-Լ որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=166032

[229] Տե՛ս օրինակ՝ https://www.anticorruption.am/hy/category/show/13, https://www.anticorruption.am/hy/videws/view/129,

[230] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին հաղորդումները՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/report

[231] Տե՛ս ՀՀ կառավարության 2016թ. -ի սեպտեմբերի 2-ի 1134-Ն որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=109283

[232] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի www. anticorruption.am եռալեզու պաշտոնական կայքէջը՝ https://anticorruption.am/hy/

[233] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ֆեյսբուքյան պաշտոնական էջը՝ https://www.facebook.com/profile.php?id=100074200721560,

մասին ամփոփ տեղեկատվություն, որի կառուցվածքը, դրանում ներառվող հարցերի շրջանակը սահմանում է Կոմիտեի նախագահը: Իսկ Կոմիտեի տարեկան հաշվետվությունը պաշտոնական կայքէջում հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը: Կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը նաև գրավոր հաղորդում է ներկայացնում ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ նախորդ տարվա գործունեության մասին: Նշենք, որ միջազգային չափանիշներին համապատասխան, կարևոր է նաև, որպեսզի Կոմիտեն ենթակա լինի դատախազական հսկողությանը և դատական վերահսկողությանը: Այսպես, Կոմիտեի գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների վարումը Կոմիտեի խնդիրներից մեկն է, որի գործընթացում ներգրավվում են Կոմիտեի վարչություններն ու ծառայողները: Մասնավորապես, Կոմիտեի վարչությունների և բաժինների պետերը կազմում են ստորաբաժանման վիճակագրական հաշվետվությունները, ամփոփում և վերլուծում են կատարված աշխատանքները գործունեության առանձին ուղղություններով: Ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքին առնչվող հաշվետվությունների և հարցերի քննարկմանը մասնակցում են նաև Կոմիտեի քննչական առաջին, երկրորդ և երրորդ վարչությունները, ներքին անվտանգության վարչությունը, օպերատիվ-հետախուզական վարչությունը: Վերջիններիս հիման վրա, Կոմիտեի նախագահը լսում և հաստատում է Կոմիտեի գործունեության մասին տարեկան հաշվետվությունները[234]: 2022թ. -ի նոյեմբերի 30-ի դրությամբ, Կոմիտեի գործող կայքում հրապարակված են եղել Կոմիտեի 2021թ. -ի գործունեության մասին հաղորդումը[235] և Կոմիտեի 2022թ. -ի 1-ին կիսամյակի գործունեության մասին տեղեկատվությունը[236]: Հրապարակված են եղել նաև Կոմիտեի գնումների[237] և բյուջետային հատկացումների[238] վերաբերյալ տեղեկությունները:

Կոմիտեի գործունեության կիսամյակային և տարեկան հաղորդումների ուսումնասիրությունից երևում է, որ դրանցում ամփոփված չեն մի շարք վիճակագրական և այլ բնույթի տեղեկություններ, օրինակ՝ կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, Կոմիտեի բյուջեի կատարողականի հաշվետվությունները, Կոմիտեի նախագահի հրամանները և այլն, որի արդյունքում սահմանափակում է քաղաքացիների հասանելիությունը Կոմիտեի գործունեությանը և գործող կանոնակարգերին՝ խախտելով Կոմիտեի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները: **Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեի նախագահն է սահմանում Կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվություններում ներառվող հարցերի շրջանակը, ուստի գտնում ենք, որ Կոմիտեի նախագահի նախաձեռնությամբ հարցերի ներկայիս շրջանակը պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով առնվազն վերը նշված հարցերը:**

**Կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները.** հատկանշական է, որ վարքագծի կանոնները նույնպես բխում են հանրային ծառայության, այդ թվում՝ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներից: Հանրային ծառայողների՝ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանվում են ԿԿՀ-ի կողմից: Այդ նպատակով մշակվել և հանրային քննարկման էր ներկայացվել[239] Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, որը հետագայում հաստատվել է ԿԿՀ-ի

[234] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/Statute
[235] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին հաղորդումները՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/report
[236] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային գործունեության մասին հաղորդումները՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/report-semester
[237] Ներկա պահին առկա է միայն Կոմիտեի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման հայտարարությունը: Տե՛ս https://www.anticorruption.am/hy/pages/show/procurement
[238] Տե՛ս ՀՀ հակակոտուպցիոն կոմիտեի բյուջետային հատկացումները՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/budget-allocations
[239] Տե՛ս նախագիծը՝ https://www.e-draft.am/projects/4098/justification

որոշմամբ[240]: Միևնույն ժամանակ, ԿԿՀ-ի հաստատած վարքագծի տիպային կանոնների հիման վրա համապատասխան մարմինները պետք է սահմանեն իրենց վարքագծի կանոնները՝ կանոնագրքերի տեսքով: Տվյալ դեպքում, Կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները պետք է սահմանվեն Կոմիտեի նախագահի կողմից, սակայն, ԻՊԱՍ-ի հարցմանն ի պատասխան վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Կոմիտեի կողմից Վարքագծի կանոնները դեռևս հաստատված չեն, դրանց նախագիծն արդեն մշակվել է և ներկայացվել ԿԿՀ՝ կարծիքի:

## ԳԼՈՒԽ 9. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

ՏՀՁԿ-ն բյուջեի և ֆինանսական անկախության գործոնի շրջանակներում նշել է, որ պատշաճ ֆինանսավորման ապահովումը կարևորագույն երաշխիքներից է: Այս առումով բյուջեն պետք է բավարար լինի և կախված չլինի միայն գործադիր իշխանության հայեցողությունից:

ՀՀ օրենսդրության մակարդակով նույնպես Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական ինքնուրույնությունը դիտարկվում է որպես գործունեության առանձին սկզբունք[241], որը ներառում է Կոմիտեի ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում դեպոզիտ հաշիվ ունենալու, պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին ֆինանսավորվելու, այդ նպատակով առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը կազմելու, իրեն հատկացված միջոցները տնօրինելու և Կոմիտեի ծառայողների վարձատրության հետ կապված հարցերը:

### 9. 1 Պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին ֆինանսավորում

Կոմիտեի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Պետական բյուջեի նախագծերի փաթեթները ներառում են մի շարք փաստաթղթեր, ինչպիսիք են բյուջեի հավելվածները, բյուջետային ուղերձ-բացատրագրերը, բացատրագրի հավելվածները և այլն: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2021թ. -ի բյուջետային ուղերձում[242] սահմանվել են առաջնային ռազմավարական նպատակները հակակոռուպցիոն ոլորտում, որոնք են՝ ընդունված իրավական ակտերի հիման վրա ստեղծել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող մարմիններ՝ Հակակոռուպցիոն կոմիտե և հակակոռուպցիոն դատարաններ, որոնք 2019թ. -ին ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ մեկտեղ կկազմեն հակակոռուպցիոն ոլորտը կարգավորող համակարգ, ինչպես նաև ապահովել բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների գործունեության ապահովման համար և այլն: ՀՀ կառավարության 2022թ. -ի բյուջետային ուղերձում[243] նախատեսվել է հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների շրջանակներում իրականացնել Կոմիտեի և դատարանների շենքերի կառուցման աշխատանքներ, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի կայացման շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Կոմիտեի բնականոն գործունեության ապահովում և գործիքակազմի (ներառյալ մարդկային ռեսուրսների) կատարելագործում և այլն:

---

[240] Տե՛ս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022թ. -ի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» N 01-Ն որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164523

241 Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172258

[242] Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2021t

[243] Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_

Կոմիտեի ֆինանսավորման ընթացակարգային առումով նշենք, որ Կոմիտեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով հակակոռուպցիոն կոմիտեի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով՝ վերջինիս և Կոմիտե ներկայացնելով բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

**2021թ. -ի պետական բյուջե.**

Մինչև 2022թ. -ը Կոմիտեին առնչվող համապատասխան ծրագրերի և միջոցառումների գծով կատարող էր սահմանվել ՀՀ արդարադատության նախարարությունը: Սակայն, արդեն 2022թ. -ին Հակակոռուպցիոն կոմիտեն պետական բյուջեով նույնպես դիտարկվել է որպես առանձին մարմին: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացման ծրագրին հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է 253.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 9.4%-ը: Նշված ծրագրի շրջանակներում պետական բյուջեից 1,000,000,000 ՀՀ դրամ հատկացվել է Կոմիտեի շենքային պայմանների ապահովման միջոցառման նպատակով: Հետագայում նշված ծրագրի շրջանակներում նախատեսվել են նոր միջոցառումներ՝ «Կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովում (Կոմիտեի գործունեության համար անհրաժեշտ վարչական սարքավորումների ձեռքբերում՝ հաշվի առնելով Կոմիտեի գործառույթները)»[244], որի համար հատկացվել է 409,500.000 ՀՀ դրամ, «Կոմիտեի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության ապահովում», որի համար հատկացվել է 120,000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև նախատեսվել է նոր ծրագիր՝ «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» [245], որի համար հատկացվել է 899,588.200 ՀՀ դրամ: Նշված լրացումներով և փոփոխություններով պայմանավորված ՀՀ արդարադատության նախարարության ծախսերը 2021թ. -ին՝ 2020թ. -ի համեմատ աճել են 8.4%-ով կամ 1.5 մլրդ դրամով:

2021թ. -ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից պետական բյուջեի ծախսերից շեղումը կազմել է 3,900,000,000 ՀՀ դրամ[246], ինչը պայմանավորված է եղել «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում», «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» և «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրերի կատարողականով: Առանձին՝ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացման ծրագրի շեղումը պայմանավորված է եղել «Էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովում» և «Կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառումների շրջանակներում

---

[244] Կոմիտեի գնումների ամբողջական ցանկին հնարավոր է հետևել armeps.am կայքում՝ https://armeps.am/ppcm/public/contracts

[245] Տե՛ս ՀՀ կառավարության 25 Փետրվարի 2021թ. -ի «ՀՀ 2021թ. -ի պետական բյուջեում, ՀՀ կառավարության 2020թ. -ի դեկտեմբերի 30-Ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 258-Ն որոշումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/35691/ , https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/258_5%20(1).pdf

[246] Տե՛ս ՀՀ 2021թ. -ի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ՀՀ Ազգային ժողովի ԱԺՈ-003-Ն որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164484

նախատեսված համապատասխանաբար 1.7 մլրդ դրամ և 409.5 մլն դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով:

Ընդհանուր առմամբ, 2021թ. -ին 50 մլն դրամ տրամադրվել է Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովմանը՝ կազմելով նախատեսվածի 96.7%-ը: Միջոցներն ուղղվել են Երևանի Աջափնյակի Սիլիկյան թաղամաս 12-րդ փողոց, 86 հասցեում տեղակայված տարածքում Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման նախագծման աշխատանքներին: Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել, քանի որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թվականի նոյեմբերի վերջին, անցկացվել են մրցույթներ, սակայն ժամանակի սղության պատճառով գնման գործընթացները չեն ավարտվել: Նույն հանգամանքով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով հատկացված միջոցներն օգտագործվել են 27.8%-ով՝ կազմելով 33.4 մլն դրամ: Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 22.5%-ը՝ 210.4 մլն դրամ, որն ուղղվել է Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացման միջոցառմանը: Վերջինս իրականացվում է ԵՄ-ի կողմից արդարադատության ոլորտին բյուջետային աջակցության շրջանակներում: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր հուլիս ամսից, սակայն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թվականի նոյեմբերին, հաստիքները ամբողջությամբ չեն համալրվել, և չեն ավարտվել գնման գործընթացները:

**2022թ. -ի պետական բյուջե.**

2022թ. -ի պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումն ապահովող միջոցները նախատեսվել են առանձին տողով՝ 1231 ծրագրի 11001, 11002 և 11003 միջոցառումների, ինչպես նաև օրենքի N 6 հավելվածով[247] նախատեսված միջոցների շրջանակներում[248]: Որպես առանձին հայտատու մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտեին նախնական տարբերակով 2022թ. -ին հատկացվել է 966,290,400 ՀՀ դրամ՝ «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» 1231 ծրագրի իրականացման համար, որից 940,467,500 ՀՀ դրամը՝ «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննություն» 11001 միջոցառման, 13,270,900 ՀՀ դրամը՝ «Կոմիտեի պահուստային ֆոնդ» 11002 միջոցառման, իսկ 1,255,200 ՀՀ դրամը՝ «Վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպում» 11003 միջոցառման իրականացման համար: Սակայն, հաշվի առնելով, որ ՀՀ վարչապետի աշխատակազմում 2021թ. -ի սեպտեմբերի 11-ին կայացած 2022թ. -ի պետական բյուջեի հայտով առկա խնդիրների մասին խորհրդակցության[249] ժամանակ որոշվել էր տարվա ընթացքում ըստ անհրաժեշտության կրկին քննարկել Կոմիտեի անհրաժեշտ ֆինանսավորման հարցը, ուստի 2022թ. -ի հոկտեմբերի 13-ին, կառավարության նիստի օրակարգում քննարկման է դրվել «ՀՀ 2022թ. -ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2021թ. -ի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Կոմիտեին գումար հատկացնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը[250], որով նախատեսվում էր ՀՀ 2022թ. -ի պետական բյուջեի միջոցների հաշվին Կոմիտեին հատկացնել 761,6 մլն ՀՀ

247 Օրենքի 6-րդ հավելվածով՝ 2022թ. -ի ժամանակահատվածում առաջնահերթությունների կարգով, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համար նախատեսվել էր 1,269,4 մլն դրամ

248 Տե՛ս ՀՀ 2022թ. -ի պետական բյուջեի մասին» ՀՕ-391-Ն օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=173844

249 Տե՛ս ՀՀ վարչապետի աշխատակազմում 2021թ. -ի սեպտեմբերի 11-ին կայացած 2022թ. -ի պետական բյուջեի հայտով առկա խնդիրների մասին խորհրդակցության ՈՂԱ/13-2021 արձանագրության 1-ին մասի 8-րդ կետը

250 Տե՛ս ՀՀ կառավարության 2022թ. -ի հոկտեմբերի 13-ի նիստի օրակարգը՝ https://www.e-gov.am/sessions/archive/2022/10/13/

դրամ՝ Կոմիտեի «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» 1231 ծրագրի «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննություն» 11001 միջոցառման իրականացման համար՝ 750,4 մլն դրամ, «Կոմիտեի պահուստային ֆոնդ» 11002 միջոցառման իրականացման համար՝ 11,2 մլն դրամ: Նշված նախագիծն ընդունվել է և ՀՀ կառավարության 2022թ. -ի հոկտեմբերի 13-ի N1594 -Ն որոշմամբ[251] կատարվել է համապատասխան վերաբաշխում:

Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեին 2022թ. -ին տրամադրվել է 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 86.7% կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: Միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվել են Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովմանը: Հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմել է 1203, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայությանը վերապահված՝ հարուցված քրեական գործերի թիվը՝ 504: 2022 թվականին բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թիվը կազմել է 1011:

Միևնույն ժամանակ, ՀՀ արդարադատության նախարարությունը շարունակել է իրականացնել «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում» 1228 ծրագիրը: Նշված ծրագրին հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է 821.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 54%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է «Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանների ապահովում» և «Էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովում» միջոցառումների կատարողականներով: 2021 թվականի համեմատ ծրագրի ծախսերն աճել են 3.2 անգամ հիմնականում պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման և էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ:

Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար օգտագործվել է նախատեսված միջոցների 75.7%-ը կամ 310 մլն դրամ: Ծրագրից շեղումն առաջացել է գնումների արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև հայտարարված մրցույթների չկայանալու հետևանքով:

Հարկ է նշել որ Կոմիտեի գործունեության ապահովմանն ուղղվող ծախսերը նախատեսվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված նախնական հայտին համապատասխան և ներկայացված են եղել վերոնշյալ որոշման N 6 հավելվածում՝ առանձին տողով, քանի որ 2022-2024 ՄԺԾԾ ցուցանիշների ծրագրավորման փուլում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի ուժով Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես հայտատու մարմին ստեղծված չէր[252]:

2021 թվականի համեմատ ՀՀ արդարադատության նախարարության ծախսերն աճել են 18.1%-ով կամ շուրջ 3.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում», «Քրեակատարողական ծառայություններ», ինչպես նաև «Հարկադիր կատարման ծառայություններ» և «Դատական և հանրային պաշտպանություն» ծրագրերի գծով ծախսերի աճով:

Նշենք, որ ինչպես 2021թ. -ին, այնպես էլ 2022թ. -ին Հակակոռուպցիոն կոմիտեին և ՀՀ արդարադատության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցները բազմիցս ենթարկվել են փոփոխությունների ՀՀ կառավարության որոշումներով, ինչը

251 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/39171/

252 Տե՛ս ՀՀ կառավարության 2021թ. -ի հուլիսի 12-ի «ՀՀ 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 1171-Ն որոշումը

վկայում է կարիքների սխալ գնահատման, բյուջեի թերի պլանավորման և այդ գործընթացի նկատմամբ հայտատուների ոչ բավարար պատասխանատվության մասին:

## 9. 2 Հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիրը և տարածքային ստորաբաժանումները

**2021-2022թթ. -ի պետական բյուջեի ուսումնասիրության շրջանակներում կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիրի կառուցման և տարածքային ստորաբաժանումների ձևավորման ընթացքին:**

Այսպես, 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվել էր Կոմիտեին համապատասխան շենքային պայմաններով ապահովում՝ տեխնիկապես հագեցված նոր շենքում: Կոմիտեն հիմնովին վերանորոգված նոր շենք պետք է տեղափոխվեր 3 տարվա տեսլականով: 2022-2026թթ. -ի ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ[253] ևս սահմանվել էր վերաբերելի դրույթ, որով նախատեսվել էր 2024թ. -ի 2-րդ կիսամյակում սկսել և շարունակել Հակակոռուպցիոն դատարանի և Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը: Բարելավման գործընթացի մեկնարկից 4 տարի հետո (մոտ 2028թ. -ին) նախատեսվել էր հակակոռուպցիոն դատարանի և հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիրի գործարկում:

Հակակոռուպցիոն կոմիտեի և դատարանների շենքերի կառուցման աշխատանքների ուղղությամբ միջոցներ ձեռնարկվել են սկսած 2021թ. -ից: ՀՀ կառավարությունն իր ինչպես 2021թ. -ի[254], այնպես էլ 2022թ. -ի[255] բյուջետային ուղերձներում անդրադարձ է կատարել Կոմիտեի նոր շենքային համալիրի կառուցման աշխատանքներին և այդ նպատակով պետական բյուջեից հատկացվող դրամական միջոցներին: Մասնավորապես, 2021թ. -ին պետական բյուջեից ՀՀ ԱՆ-ին «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում» ծրագրի շրջանակներում՝ Կոմիտեի շենքային պայմանների ապահովման/կառուցման աշխատանքների, այդ թվում՝ Աջափնյակ վարչական շրջանի «Սպանդարյան» կայարանի երկաթգծին հարակից 15 հեկտար մակերեսով հողատարածքում Կոմիտեի գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովման նպատակով հատկացվել է 1,000,000,000 ՀՀ դրամ: Հետագայում՝ ՀՀ կառավարության 2021թ. -ի փետրվարի 25-ի «ՀՀ 2021թ. -ի պետական բյուջեում, ՀՀ կառավարության 2020թ. -ի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 258 – Ն որոշմամբ[256] այդ գումարը փոփոխվել է, սահմանվելով 215,029.300 ՀՀ դրամ: Իսկ նույն միջոցառման համար՝ 2022թ. -ին պետական բյուջեից ՀՀ ԱՆ-ին տրամադրվել է 1,000,000,000 ՀՀ դրամ:

Ըստ ՀՀ 2021թ. -ի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ՀՀ ազգային ժողովի ԱԺՈ-003-Ն որոշման[257]՝ Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովմանը 2021թ. -ին տրամադրվել է 50 մլն դրամ: Միջոցներն ուղղվել են Երևանի Աջափնյակի Սիլիկյան թաղամաս 12-րդ փողոց, 86 հասցեում[258] տեղակայված տարածքում Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման

---

253 Տե՛ս 2022-2026թթ. -ի ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582

254 Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թ. -ի բյուջետային ուղերձ- բացատրագիրը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2021t

255 Տե՛ս ՀՀ կառավարության 2022 թ. -ի բյուջետային ուղերձ- բացատրագիրը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_

256 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/35691/,https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/258_5%20(1).pdf

257 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164484

258 Կոմիտեի գործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ, վերջինիս ժամանակակից շենքային պայմանների ապահովման նպատակով՝ ՀՀ Կառավարության 2020թ. -ի մարտի 19-ի N 348-Ա որոշմամբ՝ Երևան

նախագծման աշխատանքներին, որոնք ավարտվել են տարվա վերջում: Այս մասին խոսել է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահն իր հարցազրույցներում, նշելով, որ այն լինելու է բավականին ժամանակակից և հարմար կառույց և պատրաստ է լինելու 2024թ. -ին[259]:

ՀՀ կառավարության 2020թ. -ի օգոստոսի 6-ի N 1313-Ն որոշմամբ Քաղաքաշինության կոմիտեին հատկացվել են ֆինանսական միջոցներ ՀՀ ԱՆ կարիքների համար՝ վերոնշյալ հասցեում Կոմիտեի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով: Քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020թ. -ի հոկտեմբերի 10-ին բաց մրցույթ գնման ընթացակարգով կազմակերպվել է գնման գործընթաց, որի շրջանակներում հաղթող ճանաչված «Նորաշեն» ՆՏ ԱԿ ընկերության հետ 2020թ. -ի դեկտեմբերի 16-ին կնքվել է պետական գնման պայմանագիր՝ 48,000,000 ՀՀ դրամ արժեքով: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. -ի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում, մինչև դրա ընդունումը կատարվել էին համապատասխան փոփոխություններ, որոնք, այլ մարտահրավերների հետ մեկտեղ[260], հանգեցրել էին մակերեսի ավելացմանը, և վերանայվել էր տեխնիկական առաջադրանքը, ՀՀ կառավարության 2021թ. -ի հուլիսի 1-ի N 1088-Ն որոշմամբ[261] իրականացվել են համապատասխան փոփոխություններ, մասնավորապես՝ Կոմիտեի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայության մատուցման 2020թ. -ի դեկտեմբերի 16-ի պետական գնման պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2021թ. -ի օգոստոսի 31-ը և պայմանագրի գինն ավելացվել է 13,000,000 ՀՀ դրամով: Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվել են 2021թ. -ին և իրականացվել է վերջիններիս համալիր փորձաքննությունը: Այս փորձաքննության առնչությամբ 2022թ. -ի հունիսի 17-ին կայացած ՀՀ կառավարության նիստի ընթացքում[262] որոշում է կայացվել գնման գործընթացը կազմակերպելու մասին: Մասնավորապես, **նախագծանախահաշվային փաստաթղթերի համալիր փորձաքննության շրջանակներում «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում պարզվել է, որ Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Սիլիկյան թաղամաս 12-րդ փողոց N 86 հասցեի շուրջ 15 հեկտար հողամասը հանդիսանում է հուշարձանային գոտի (համաձայն առկա քարտեզների տարածքը հանդիսանում է դամբարանադաշտ):** Նշվածի կապակցությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել է տարածքի նախնական ուսումնասիրություն, և տարածքում դամբարանների առկայությունը պարզելու նպատակով առաջարկվել է կատարել գեոռադարային հանույթ: Արդյունքում, եթե հերքվի հողատարածքում դամբարանների առկայությունը՝ հուշարձանային գոտու ցանկից հանելու գործընթացը կիրականացվի ՀՀ կառավարության որոշմամբ263: Նշենք, որ այս միջոցառման համար ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 388-Ն որոշմամբ 10 մլն դրամ արդեն իսկ հատկացվել է վերոնշյալ ծառայությունը ձեռքբերելու նպատակով:

Հաշվի առնելով այն, որ Կոմիտեի շենքի կառուցումը, ըստ կանխատեսումների, իրականացվելու էր 3-4 տարվա ընթացքում՝ որպես միջանկյալ լուծում նախատեսվել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական գործառույթներ իրականացնող անձինք՝

---

քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող՝ Սիլիկյան թաղամաս 12-րդ փողոց N 86 հասցեում 15 հա մակերեսով հողատարածքը ամրացվել է Արդարադատության նախարարությանը՝ https://www.moj.am/storage/uploads/22AC_annual_REPORT_FULL_2021_LAST.pdf

259 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://anticorruption.am/hy/videws/view/123

260 Որպես օրինակ՝ ընդլայնվել էր Կոմիտեի նախագահի տեղակալների և, ըստ այդմ, օգնականների թիվը, նոր շենքերի կառուցման համար սահմանվել էր պարտադիր ապաստարան նախատեսելու պահանջ:

261 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154137

262 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-gov.am/sessions/archive/2022/06/17/

263 Հուշարձանը կհանվի «ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 7 հոկտեմբերի 2004 թվականի N 1616-Ն որոշմամբ հաստատված ցանկից

համապատասխան տեխնիկական անձնակազմով, կտեղակայվեն նախկին ՀՔԾ շենքում: Այդ նպատակով, ՀՀ կառավարության կողմից 2021թ. -ի հոկտեմբերի 21-ի N 1744-Ա որոշմամբ Կոմիտեին է հատկացվել ՀՔԾ շենքը, ինչպես նաև շարժական գույքը[264]:

Զուգահեռաբար, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ժամանակավոր տեղակայելու նպատակով ՀՀ ԱՆ-ին ամրակցված՝ ք. Երևան, Մոսկովյան 1 հասցեում գտնվող շինությունը վերանորոգվել և կահավորվել է և համապատասխան գույքով ՀՀ կառավարության 2021թ. -ի հոկտեմբերի 21-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 1744-Ա որոշմամբ ամրակցվել Հակակոռուպցիոն կոմիտեին:

Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին, ապա 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվել էր 2022թ. -ին կազմավորել Կոմիտեի առնվազն 2 տարածքային բաժին: Տարածքային ստորաբաժանումները պետք է ձևավորվեին աստիճանաբար: Հետաքրքրական է, որ պետական բյուջեից մինչև 2022թ. նոյեմբերի 30-ը միջոցներ չեն նախատեսվել այս նպատակով: Դեռ ավելին, տարածքային ստորաբաժանումները չեն ներառվել նաև Կոմիտեի 2023-2025թթ-ի ՄԺԾԾ նախագծի (ներառյալ՝ ՀՀ 2023թ. -ի պետական բյուջեի) բյուջետային հայտերի շրջանակներում:

**Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ձևավորման խնդիրը կապվում է Կոմիտեի սահմանափակ թվով հաստիքների հետ:** Մասնավորապես, ըստ 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության 2022թ. -ի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրագործման ընթացքի վերաբերյալ հաշվետվության[265]՝ Կոմիտեի տարածքային ստորաբաժանումները չեն կազմավորվել, քանի որ Կոմիտեին տրամադրվել են սահմանափակ թվով հաստիքներ, մասնավորապես՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող՝ 40 և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնողների՝ 60 հաստիքներ: Հակակոռուպցիոն կոմիտեին ընդհանուր առմամբ տրամադրվել է 170 հաստիք, որի մեջ ընդգրկվում է ինչպես վերոհիշյալ, այնպես էլ քաղաքացիական ծառայության, հայեցողական պաշտոնների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքները:

Փաստացի Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ձևավորմանն ուղղված որևէ գործողություն չի իրականացվել, և, դեռ ավելին, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահն իր հարցազրույցներում[266] անդրադառնալով այդ խնդրին, նշել է, որ **ներկայումս քննարկվում է առհասարակ տարածքային/մարզային ստորաբաժանումների ձևավորման և գործունեության նպատակահարմարության հարցը:**

Այսպես, պետական բյուջեով Կոմիտեն որպես առանձին մարմին սկսել է դիտարկվել 2022թ. -ից, իսկ մինչ այդ համապատասխան ծրագրերի և միջոցառումների գծով կատարող էր սահմանվել ՀՀ արդարադատության նախարարությունը: Ինչպես Կոմիտեին և ՀՀ արդարադատության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցները ՀՀ կառավարության որոշումներով բազմիցս ենթարկվել են փոփոխությունների, ինչը վկայում է բյուջետային ֆինանսավորման հայտերի ներկայացումից առաջ Կոմիտեի կարիքների պաշտաճ գնահատման և բյուջեի պլանավորման խնդիրների մասին:

### 9. 3 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարձատրությունը

ՀՀ կառավարությունն իր 2014-2025թթ. -ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշել էր, որ հանրային կառավարման և դատաիրավական համակարգի

264 Տե՛ս նաև 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության 2021թ. -ին կատարման ենթակա միջոցառումների իրագործման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը՝ https://www.moj.am/storage/uploads/15REPORT_ANNUAL_2021.pdf

265 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5779573371991__2019-2022_2022_.pdf

266 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://www.anticorruption.am/hy/news/view/111

աշխատողների աշխատավարձերի բարձրացումը համարում է կարևորագույն նախապայման՝ այս ոլորտներում իրականացվող բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման արդյունավետության բարձրացման առումով: Այս համատեքստում պետք է նշել, որ Կոմիտեի ծառայողների աշխատավարձի չափն էականորեն տարբերվում է մյուս քննչական մարմինների ծառայողների աշխատավարձի չափից: Մասնավորապես, պետական ծառայողի, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի՝ 66,140 դրամի[267] և համապատասխան պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով: Նշված բանաձևով, օրինակ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի աշխատավարձը կազմում է 959,030 ՀՀ դրամ (66,140 ՀՀ դրամ բազային աշխատավարձ * 14. 50 գործակից = 959,030 ՀՀ դրամ աշխատավարձ), մինչդեռ Քննչական կոմիտեի նախագահի աշխատավարձը կազմում է 793,680 ՀՀ դրամ (66,140 ՀՀ դրամ բազային աշխատավարձ * 12. 00 գործակից = 793,680 ՀՀ դրամ աշխատավարձ): Նույն բանաձևով, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի աշխատավարձը կազմում է 462,980 ՀՀ դրամ, իսկ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի կամ մարզային քննչական վարչության քննիչի աշխատավարձը՝ 330,700 ՀՀ դրամ և այսպես շարունակ:

Կոմիտեի ծառայողների վարձատրության շրջանակներում հատկանշական է նաև այն, որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի վարձատրությանն առնչվող դրույթներին տրվել էր հետադարձ ուժ[268]: Այսինքն, հաշվի առնելով, որ Կոմիտեի նախագահը նշանակվել էր ավելի վաղ, քան «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ մտնելը, Կոմիտեի նախագահի վարձատրությանը վերաբերող դրույթները նախատեսվել էր տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը առաջին անգամ Կոմիտեի նախագահի նշանակման օրվանից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ[269], սակայն նախագծի ընդունված տարբերակում այս դրույթը բացակայել է:

**Հավելումներ և հավելավճարներ.** Կոմիտեի ծառայողները, բացի հիմնական աշխատավարձից ունեն նաև լրացուցիչ աշխատավարձի, մասնավորապես հավելումների և հավելավճարների իրավունք:

**Հավելումը՝** ի թիվս այլնի, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու, առանձնակի ռիսկայնության, ինչպես նաև հատուկ մասնագիտացման առանձնահատկություններով պայմանավորված՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացումը կամ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացումն է: Լրացուցիչ աշխատավարձը, այդ թվում հավելումը, չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը[270]: Սակայն այս սահմանափակումը չի տարածվում առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով՝ **որպես առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձինք են նախատեսվել՝**

267 Տե՛ս 2021թ. -ի և 2022թ. -ի «Պետական բյուջեի մասին» օրենքները՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=160185, https://www.arlis.am/documentview.aspx?docid=171260

268 http://parliament.am/draft_history.php?id=13542

269 Տե՛ս նախագիծը՝ https://www.e-draft.am/projects/3748/justification (նախագծի ընդունված տարբերակում այս դրույթը բացակայում է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=171568)

270 Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց նկատմամբ նման կարգավորում նախատեսված չէր: Օրենքի համապատասխան լրացումը կատարվել և ընդունվել է ԱԺ-ի կողմից միայն 2022թ. -ի նոյեմբերի 16-ին:

**Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք**[271]**,** որոնց տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի (հիմնական աշխատավարձի) 100 տոկոսի չափով: Շրջանառվող օրենսդրական նախագծով[272], որն 2022թ. -ի դեկտեմբերի 8-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ, նշված 100 տոկոս հավելավճարը 2023թ. -ի հունվարի 1-ից կդառնա 92 տոկոս: Հակակոռուպցիոն Կոմիտեի ծառայողներն ունեն նաև այլ հիմքերով հավելումներ ստանալու իրավունք, օրինակ՝ արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար և այլն:

**Կոմիտեի ծառայողների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է այլ քննչական մարմինների ծառայողներին և նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից:** Օրինակ՝ **Քննչական կոմիտեում** հավելումներ են տրվում միայն զինվորական քննչական գլխավոր վարչությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ առավելագույնը բազային աշխատավարձի չափով՝ 66,140 ՀՀ դրամ[273]: **Հակակոռուպցիոն դատարանի դատավորին**, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով (661,400 ՀՀ դրամի 70 տոկոսի չափով՝ 462,980 ՀՀ դրամ): **Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին** և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին (այս բառերը հետագայում կփոխարինվեն **«Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան»** բառերով[274]) տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով (727,540 ՀՀ դրամի 60 տոկոսի չափով՝ 436,524 ՀՀ դրամ): Իսկ **Վճռաբեկ դատարանի դատավորներին** (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի նախագահին և վճռաբեկ դատարանի պալատի նախագահին) տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով (նախագահ՝ 992,100 ՀՀ դրամի 50 տոկոսի չափով՝ 496,050 ՀՀ դրամ, պալատի նախագահ՝ 793,680 ՀՀ դրամի 50 տոկոսի չափով՝ 396,840 ՀՀ դրամ, դատավոր՝ 760,610 ՀՀ դրամի 50 տոկոսի չափով՝ 380,305 ՀՀ դրամ) և այլն:

Նշենք, որ դատավորի և Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանցից զատ, առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանվում է նաև ՀՀ կառավարության 2022թ. -ի ապրիլի 7-ի 446 – Ն որոշմամբ[275], որը ներառում է դատախազության ոլորտը. այդ պաշտոններն են՝

1. ՀՀ գլխավոր դատախազը (աշխատավարձ՝ 992,100 ՀՀ դրամ, հավելում՝ աշխատավարձի 95%-ի չափով)
2. ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկով նախատեսված գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը և մեղադրանքի պաշտպանությունը, ինչպես նաև այդ գործերով պետության շահերի պաշտպանության ոլորտը համակարգող տեղակալները (աշխատավարձ՝ 727,540 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 95%-ի չափով)

---

[271] 2023թ. -ի հունվարի 30-ին ՀՀ ԱՆ-ի կողմից առաջարկվել է Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց համար նույնպես սահմանել աշխատավարձի հավելում 92 տոկոսի չափով՝ սկսած 2023թ. -ի ապրիլի 1-ից՝ https://factor.am/609600.html, https://politik.am/am/qnnchakan-komitei-nakhagah-argishti-qyaramyani-vardzatrutyuny-kkazmi-amsakan-1-mln-916-hazar-dram-hraparak

[272] Տե՛ս նախագծի ընդունման պատմությունը՝ http://parliament.am/draft_history.php?id=13831

[273] Տե՛ս ՀՀ կառավարության 4 սեպտեմբերի 2014 թ. -ի N 950-Ն որոշումը Ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց տրվող հավելումների չափերը, վճարման դեպքերը և կարգը սահմանելու մասին՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=152856 , տե՛ս նաև այլ մարմիններինը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/24498/

[274] Տե՛ս նախագծի ընդունման պատմությունը՝ http://parliament.am/draft_history.php?id=13945

[275] Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/38025/

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը (ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող) (աշխատավարձ՝ 826,750 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 85%-ի չափով)

4. ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազը (աշխատավարձ՝ 446,445 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 100%-ի չափով):

**Հիշյալ պաշտոնների համար նույնպես նախատեսվել է հավելում[276], հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով հսկողություն և վերահսկողություն իրականացնելը կրում է առանձնակի ռիսկային բնույթ:** Մասնավորապես, կոռուպցիոն գործերի հետ առնչվող դատախազները, բացի ընդհանուր մասնագիտական գործունեության առանձնահատկություններից, աշխատում են կոռուպցիոն դեպքերի հետ և կարող են հայտնվել արտաքին զգալի ճնշման տակ: Որպես կանոն կոռուպցիոն հանցագործություններով հանցավոր արարք կատարելու մեջ մեղադրվող անձինք ունենում են լծակների հարուստ զինանոց, առավել ևս, եթե զբաղեցնում են կամ զբաղեցրել են ղեկավար պաշտոն իրավապահ համակարգում կամ որևէ այլ կերպ առնչություն են ունեցել իրավապահ կամ արդարադատության մարմինների հետ: Նման պայմաններում առավել մեծ են ռիսկերը, որ կոռուպցիոն գործերով հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող և դատական քննության ընթացքում որպես մեղադրող հանդես եկող պաշտոնատար անձի՝ դատախազի նկատմամբ ճնշումների փորձեր կնախաձեռնվեն: Այս պայմաններում դատախազի գործունեությունը ավելի սթրեսային է դառնում՝ պահանջելով վերջինից՝ կողմի և հանրության հնարավոր ճնշումներին դիմակայելու, պետության և հանրության շահերը ենթադրյալ կոռուպցիոն հանցագործության քննության ընթացքում լավագույնս ներկայացնելու ունակություն: **Այս համատեքստում ուշադրության է արժանի այն, որ նշված հիմնավորումներով հավելում է սահմանվել նաև ՀՀ գլխավոր դատախազի այն տեղակալների համար որոնց համակարգման ոլորտում չէ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքների համակարգումը: Նրանց համար հավելումը սահմանվել է միայն այն պատճառով, որպեսզի տեղի չունենա մեծ շեղում ընդհանուր կանոններից, քանի որ դրա չսահմանման դեպքում կստացվեր մի իրավիճակ, երբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի վարձատրության չափը կգերազանցեր ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վարձատրության չափը, ինչը կխաթարեր դատախազության աստիճանակարգված ենթակայության տրամաբանությունը[277]:**

**Հավելավճարը**՝ ի թիվս այլնի, նաև դասային, դիվանագիտական աստիճանների, տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու, կոչումների, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի, օտար լեզուների իմացության համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացումն է: Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց տրվում է հավելավճար դասային աստիճանի համար: Ամենացածր, սկզբնական դասային աստիճանը երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է (օրինակ՝ քննիչ, ավագ քննիչ), որը շնորհվում է հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ այլ

[276] Տե՛ս «Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների առանձնահատկություններով պայմանավորված տրվող հավելումների վճարման չափերը, կարգը, ինչպես նաև առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի հիմնավորումը՝ https://www.e-draft.am/projects/3685/justification

277 Նույն տեղում:

մարմիններում հանրային ծառայություն անցած և զինվորական կամ հատուկ կոչում ունեցող անձանց հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակելիս: Իսկ ամենաբարձր դասային աստիճանը արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի և արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններն են (օրինակ՝ Կոմիտեի նախագահ, նախագահի տեղակալ): Հակակոռուպցիոն կոմիտեում ամենացածր դասային աստիճանի համար **հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարի չափը աճում է 1 տոկոսով:** Օրինակ, եթե Կոմիտեի երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողի՝ քննիչի աշխատավարձը 462,980 ՀՀ դրամ է, ապա նրան տրվող հավելավճարը կկազմի 13,889 ՀՀ դրամ (աշխատավարձի 3 %-ի չափով), իսկ Կոմիտեի արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողի՝ Կոմիտեի նախագահի աշխատավարձը 959,030 ՀՀ դրամ է, ապա նրան տրվող հավելավճարը կկազմի 86,312 ՀՀ դրամ (աշխատավարձի 9 %-ի չափով):

Դասային աստիճանները՝ հավելավճարների համապատասխան տոկոսներով.

1) արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական (10 %):
2) արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական (9 %):
3) արդարադատության առաջին դասի խորհրդական (8 %):
4) արդարադատության երկրորդ դասի խորհրդական (7 %):
5) արդարադատության երրորդ դասի խորհրդական (6 %):
6) առաջին դասի խորհրդական (5 %):
7) երկրորդ դասի խորհրդական (4 %):
8) երրորդ դասի խորհրդական (3 %):

Հակակոռուպցիոն կոմիտեում **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճար տրվում է նաև** հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և (կամ) հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու), դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում **աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ երկու տոկոսի չափով[278]:**

Հատկանշական է այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն կոմիտեում **օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցների համար հավելավճար վճարելու գործիքակազմում ստաժի հաշվարկման կարգ նախատեսված չէր:** Սա օրենսդրական բաց էր և խտրականության դրսևորում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող աշխատակիցների նկատմամբ՝ սոցիալական երաշխիքների տեսանկյունից, այն պայմաններում, երբ օրենսդրությամբ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող մյուս բոլոր անձանց տրամադրվում էր հավելավճար աշխատանքային և (կամ) ծառայության ստաժի համար: Նշենք, որ այս բացը լրացնելու նպատակով շրջանառության էր դրվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը[279], որով առաջարկվել է Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողին (օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձին) վճարել հավելավճար՝ Հակակոռուպցիոն կոմիտեում, Ազգային անվտանգության ծառայությունում, Ոստիկանությունում, Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունում կամ Պետական եկամուտների կոմիտեում ծառայության յուրաքանչյուր տարվա համար՝ երկու տոկոսի չափով՝ հաշվի առնելով առաջիկայում սպասվելիք օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող

278 Տե՛ս Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=173241
279 Տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.e-draft.am/projects/3748/justification

աշխատակիցների աննախադեպ ծանրաբեռնվածությունը և վերջիններիս առավել արդյունավետ աշխատանքի կատարմանը խթանող մոտիվացնող գործոններ նախատեսելու անհրաժեշտությունը: Մինչդեռ, նախագիծը հետագայում ենթարկվել է փոփոխությունների[280], որի արդյունքում **հավելավճարի ստացման համար օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց ստաժ է համարվել միայն Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզության գործունեություն իրականացնող ստորաբաժանումներում ծառայության ժամանակահատվածը, և չի ներառում նախորդ տարիներին այլ մարմիններում ծառայության ստաժը:** Հավելավճարը նախատեսվել է 2 տոկոսի չափով: Նախագիծն Ազգային ժողովի կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ 2022թ. -ի նոյեմբերի 16-ին:

Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համար՝ վերջիններիս անկախության, գործերի քննության արդյունավետության և սոցիալական երաշխիքների ապահովման նպատակով սահմանված է հիմնական և լրացուցիչ աշխատավարձի բարձր շեմ՝ մյուս քննչական մարմինների ծառայողների վարձատրության համեմատ: Բացի այդ, Կոմիտեի նախագահի վարձատրության նպատակով օրենքին տրվել է հետադարձ ուժ՝ նախագահին վարձատրելով իր նշանակման օրվանից: Միաժամանակ, հավելումներ են սահմանվել ՀՀ գլխավոր դատախազի այն տեղակալների համար, որոնց համակարգման ոլորտում չէ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքների համակարգումը, միայն այն պատճառաբանությամբ, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի վարձատրության չափը չի կարող գերազանցել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վարձատրության չափին: Գտնում ենք, որ քննչական բոլոր մարմինների նկատմամբ պետք է ցուցաբերվի նույնանման մոտեցում ծառայողների վարձատրության առումով, հաշվի առնելով վերջիններիս աշխատանքի առանձնահատկություններն ու ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հավասար սոցիալական երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը:

### 9. 4 Հակակոռուպցիոն կոմիտեի դեպոզիտ հաշիվը

Հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել էր դեռևս 2021թ. -ի հոկտեմբերի 23-ին, սակայն չուներ դեպոզիտային հաշիվ: Մինչդեռ, քրեական գործերով՝ հանցագործության հետևանքով պետությանը և հասարակությանը պատճառված վնասների վերականգման գործընթացի, այդ թվում նաև՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարների կարճ ժամկետներում վերադարձի, ինչպես նաև գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ քննչական գործողության պատշաճ կատարման ապահովման նպատակով[281] անհրաժեշտ էր լուծել Կոմիտեի դեպոզիտային հաշվի բացման հարցը: Այդ նպատակով, Կոմիտեի ստեղծումից միայն մեկ տարի անց՝ 2022թ. -ի հոկտեմբերի 26-ին լրացում է կատարվել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում և ֆինանսական ինքնուրույնության շրջանակներում նախատեսվել նաև, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում կարող է ունենալ դեպոզիտ հաշիվ: Ընդ որում, դեպոզիտ հաշվի ֆինանսական միջոցների տնօրինման կարգը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Չնայած դեպոզիտ հաշվի բացման կարճ ժամանակահատվածին, 2022թ. -ին արդեն իսկ Կոմիտեում քննված քրեական վարույթներով, այդ թվում՝ ավարտված, կանխիկ գումարով վերականգնվել է պետությանը հանցագործությամբ պատճառված 663,000,000 ՀՀ դրամի վնաս[282]: Ըստ Կոմիտեի նախագահի՝ միայն Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից նախաձեռնված քրեական

280 Տե՛ս նախագծի ընդունման պատմությունը՝ http://parliament.am/draft_history.php?id=13541
281 Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումները՝ https://www.e-draft.am/projects/4180/about
282 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ելույթը՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/135

վարույթներով պետությանը պատճառված վնասը կազմել է 9,000,000,000 ՀՀ դրամից ավելի և այդ վնասի վերականգնման նպատակով արգելանք դրվել է մեղադրյալների գույքի վրա: Այդ վնասները հետագայում՝ դատական ակտերի առկայության պայմաններում ամբողջությամբ վերականգնվելու են և կրկին փոխանցվելու Կոմիտեի դեպոզիտ հաշվին[283]:

Հատկանշական է, որ Կոմիտեի դեպոզիտ հաշվի բացումից հետո՝ 2022թ. -ի հոկտեմբերի 3-ին, շրջանառության է դրվել ««Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2021թ. -ի մարտի 24-ի թիվ ՀՕ-163-Ն օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը[284], որով առաջարկվել է ՀՔԾ-ի համար բացված դեպոզիտային հաշվում առկա միջոցները փոխանցել համապատասխան մարմինների՝ այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի դեպոզիտային հաշիվներին[285]: Մինչ այդ, նշված օրենքով ֆինանսական միջոցների փոխանցման վերաբերյալ որևէ դրույթ առկա չի եղել և կարգավորվել է միայն ՀՔԾ-ում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով հարուցված քրեական գործերի (նյութերի), ինչպես նաև կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող գործերի ըստ ենթակայության փոխանցման հարցերը՝ Հակակոռուպցիոն կոմիտեին, ինչպես նաև մյուս գործերի փոխանցման հարցերը՝ այլ քննչական մարմիններին: Այս օրենսդրական փոփոխությունից հետո, Կոմիտեի կողմից 27.09.2022թ. -ի գրությամբ տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՔԾ-ից Հակակոռուպցիոն կոմիտե փոխանցվելիք քրեական գործերով ՀՔԾ-ի դեպոզիտ հաշվին առկա է եղել 167.004.672,5 ՀՀ դրամ[286]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպես, ամփոփելով հակակոռուպցիոն ոլորտի, ներառյալ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և գործունեության արդյունավետության վերաբերյալ հետազոտությունը, կարող ենք նշել, որ միջազգային ասպարեզում կոռուպցիայի դեմ պայքարը ուղեկցվել է տարատեսակ բարեփոխումների անցկացմամբ: Որոշ պետություններում նախաձեռնվել է առանձին հակակոռուպցիոն համակարգի ստեղծում, սակայն հակակոռուպցիոն համակարգի՝ բոլոր պետությունների համար ընդունելի մեկ մոդել առկա չէ: ՀՀ-ում Կոռուպցիայի դեմ պայքարը՝ քաղաքականությունների և ռազմավարությունների մակարդակով տարվել է սկսած 2001թ. -ից: ՀՀ-ն ընդհանուր առմամբ ունեցել է հակակոռուպցիոն 4 ռազմավարություն՝ համապատասխան միջոցառումների ծրագրերով, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով նախատեսել են հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականացում, կատարելագործում, ինչպես նաև նոր մարմինների ստեղծում՝ խորհուրդ, հանձնաժողով, կոմիտե, դատարան և այլն: Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ստեղծումը նախատեսված է եղել 2019թ. -ի հոկտեմբերի 3-ին ընդունված 2019-2022թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարությամբ: Կոմիտեի վերաբերյալ դրույթներ են նախատեսվել նաև ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ-ի, ինչպես նաև 2022-

283 Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցազրույցը՝ https://www.anticorruption.am/hy/videws/view/137

284 Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին նախագծի հիմնավորումը՝ https://www.e-draft.am/projects/4792/justification

285 Բացառություն է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, որի՝ համապատասխան դեպոզիտ հաշիվ չունենալու հանգամանքով պայմանավորված՝ ըստ ենթակայության վերջինիս քննչական դեպարտամենտ փոխանցված քրեական գործերի կապակցությամբ նշված դեպոզիտային հաշվում առկա միջոցները կփոխանցվեն ՀՀ դատախազության՝ քրեական գործերով պատճառված վնասի վերականգնման համար բացված դեպոզիտ հաշվին:

286 Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին նախագծի հիմնավորումը՝ https://www.e-draft.am/projects/4792/justification

2026թթ. -ի ռազմավարություններով՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումների, Կոմիտեի շենքային պայմանների բարելավման գործընթացի մասով:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ</u>.** 2020թ. -ի դեկտեմբերի 4-ին ՀՀ կառավարության կողմից ՀՀ ազգային ժողով է ներկայացվել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որը երկրորդ ընթերցումից ընդամենը 5 օր առաջ ենթարկվել է փոփոխությունների. ԱԺ է ներկայացվել նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերի նոր փաթեթով նախատեսվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից դադարեցնել Հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ ՀՔԾ) գործունեությունը: Նախագիծերի փաթեթն ընդունվել է ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ 2021թ. -ի մարտի 24-ին՝ առանց հանրային քննարկման կազմակերպման և գրավոր հիմնավորման ներկայացման: Արդյունքում, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021թ. -ի հոկտեմբերի 23-ին և նույն օրը մեկնարկել է Կոմիտեի գործունեությունը, իսկ ՀՔԾ-ն դադարել է գործել: Նշենք, որ նախագծերի փաթեթի ընդունման պահին գործող հակակոռուպցիոն ռազմավարությամբ ՀՔԾ-ին տրված էր ինչպես խոշտանգումների, այնպես էլ կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնելու հնարավորություն՝ Կոմիտեի ստեղծմանը հաջորդող 3 տարվա ընթացքում: Գտնում ենք, որ Կոմիտեի ստեղծման նախաձեռնությունը ռազմավարության մշակման փուլում պատշաճ գնահատման չի արժանացել, չեն քննարկվել և գնահատվել այլընտրանքային տարբերակները՝ հիմնավորելու ընտրված տարբերակը:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՆ ՈՐՊԵՍ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ</u>.** Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, վավերացրել է ԵԽ կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի կոնվենցիան, որոնցից բխող պարտավորություններով պետությունը ինքն է որոշում, թե ինչպիսի համակարգ ունենա՝ հաշվի առնելով դատաիրավական համակարգը, օրենսդրությունը, առկա իրավիճակը և ռեսուրսները: ՀՀ-ում նախապատվությունը տրվել է մասնագիտացված առանձին քննչական մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը, երաշխավորելու համար կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը մեկ մարմնի կողմից: ՏՀՁԿ-ի մեկնաբանության համաձայն՝ առանձնացված մարմին ստեղծելու դեպքում ավելի դյուրին է վերջինիս ապահովել գործունեության անկախության երաշխիքներով՝ արդեն գործող մարմնի կառուցվածքում ստորաբաժանում ստեղծելու համեմատ: ՏՀՁԿ-ն առանձնացրել է մի շարք գործոններ, որոնցով որոշվում է հակակոռուպցիոն մարմնի անկախությունը, դրանք են՝ ինստիտուցիոնալ դիրքավորումը, օրենսդրական հիմքերը, ղեկավարի և անձնակազմի ընտրությունը և նշանակումը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը, բյուջեն և ֆինանսական անկախությունը: ՀՀ-ում ստեղծված Հակակոռուպցիոն կոմիտեն մյուս քննչական մարմիններից տարբերվում է նաև իր կառուցվածքով՝ ներառելով նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող վարչություն: Դրա կառուցվածքի մեջ են մտնում՝ Կոմիտեի նախագահը, նախագահի տեղակալները, հիմնական մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումները, աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները, հայեցողական պաշտոնները, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք: Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ քննչական առաջին, երկրորդ և երրորդ վարչությունները, ներքին անվտանգության վարչությունը, օպերատիվ-հետախուզական վարչությունն իր՝ առաջին, երկրորդ և երրորդ բաժիններով: Օպերատիվ-հետախուզական գործառույթը Կոմիտեին տրվել է այն նպատակով, որպեսզի Կոմիտեն ինքնուրույն կազմակերպի և իրականացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր

իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների և՛ հետաքննությունը, և՛ օպերատիվ-հետախուզական գործունեությունը, և՛ նախաքննությունը: Կոմիտեի աշխատողների առավելագույն թիվն ի սկզբանե սահմանվել էր 170 հաստիքային միավոր, սակայն 2022թ. -ի դեկտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի N 1450- Ա որոշմամբ Կոմիտեի հաստիքների թիվը ավելացվել է ևս 100 հաստիքով, ընդհանուր կազմելով՝ 270 միավոր, որոնք համալրվելու էին փուլային կարգով՝ 2023թ. -ի ընթացքում: Մինչ հաստիքների ավելացումը, առկա 170 հաստիքից 100-ը նախատեսված էին Կոմիտեի ծառայողների, իսկ 70-ը՝ Կոմիտեի քաղաքացիական, հայեցողական ծառայության պաշտոնների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց համար: Կոմիտեի ծառայողների 100 հաստիքներն իրենց հերթին բաշխված էին հետևյալ կերպ. 4 հաստիք՝ Կոմիտեի ղեկավար կազմի համար (1 Կոմիտեի նախագահ և նրա 3 տեղակալներ), 36 հաստիք՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար, որից միայն 29-ն են հանդիսանում «քննիչներ» (4 վարչության պետ, 3 վարչության պետի տեղակալ, 17 հատկապես կարևոր գործերով (այսուհետ՝ ՀԿԳ) ավագ քննիչ, 6 ՀԿԳ քննիչ, 3 ավագ քննիչ և 3 քննիչ), 60 հաստիք՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համար, որոնցից միայն 50-ն են հանդիսանում «օպերլիազորներ» (1 վարչության պետ, 1 վարչության պետի տեղակալ, 4 բաժնի պետ, 4 բաժնի պետի տեղակալ, 29 ավագ օպերլիազոր և 21 օպերլիազոր): Ստացվում է, որ քննչական մարմին հանդիսացող Հակակոռուպցիոն կոմիտեի 170 հաստիքից միայն 29-ն են նախատեսված քննիչների համար, ինչը Կոմիտեի ենթակայությանը վերապահված և նրա կողմից փաստացի քննվող վարույթների ծավալի ստորև քննարկվող պայմաններում անհամաչափ թիվ է: Գտնում ենք, որ հաստիքների ավելացման պայմաններում պետք է 1 քննիչի հաստիքին համապատասխան նախատեսվեր առնվազն 2 օպերլիազորի հաստիք՝ գործերի օպերատիվ և արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ.**

Ըստ միջազգային չափանիշների՝ Կառավարության կողմից իրավապահ մարմնի ղեկավարի նշանակումը ինքնին չի վկայում դրա անկախության վրա ազդեցության մասին, եթե առկա են անկախության այլ երաշխիքներ: Կարևոր է, որ ընտրման ձևը լինի այնպիսին, որ արժանանա հանրության, ինչպես նաև դատական համակարգի, իրավապահ մարմինների համակարգի կողմից վստահության: ՀՀ-ում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության նպատակով ձևավորվել է մրցութային խորհուրդ՝ Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած մեկական թեկնածուներից և ՔՀԿ երկու ներկայացուցչից (ընդհանուր՝ 7 անդամ): Բացի նշված անդամներից, Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև երեք միջազգային փորձագետներ: Տվյալ դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհուրդը ձևավորվել է օրենքով նախատեսված թույլատրելի նվազագույն կազմով՝ 4 անդամով: **Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Խորհրդում որևէ թեկնածու չի նշանակվել՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով պահանջվող պարտադիր պայմաններին համապատասխանող աշխատակից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում չլինելու պատճառով: Բացի այդ, ԱԺ-ի կողմից Խորհրդի անդամ էր նշանակվել ԱԺ յոթերորդ գումարման իշխող «Իմ քայլ» խմբակցության պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը, մինչդեռ, վերջինս հանդիսացել է կուսակցական անձ:** Հետագայում այս որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: **Խորհրդի կազմի հաստատումից հետո անդամակցությունը դադարեցրել է նաև «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչը՝ Կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության, մասնագիտական և անձնային հատկանիշների ստուգման և այլ հարցերի վերաբերյալ իր**

**առաջարկությունները՝ Խորհրդի կողմից չընդունվելու պատճառաբանությամբ**: Հատկանշական է, որ ընդդիմադիր ուժերի ներգրավվածությունը ղեկավարի ընտրությանը նույնպես ուժեղացնում է գործընթացի օբյեկտիվությունը և անկողմնակալությունը՝ նվազեցնելով ընտրվող անձի՝ իշխող մեծամասնության օգտին կողմնակալություն դրսևորելու հավանականությունը: Մինչդեռ, ըստ հրապարակային տեղեկությունների՝ մրցութային խորհրդի ձևավորման գործընթացից ՀՀ ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները տեղյակ չեն եղել:

Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերով: Կոմիտեի նախագահի թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորն ուղղակիորեն պայմանավորված է Խորհրդի անդամների թվով: Խորհրդի անդամներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը 100 է: Խորհրդի 1 անդամի կողմից տրված 100 միավորն ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների բաշխվում է հետևյալ համամասնությամբ՝ անձնական որակներ՝ 30 միավոր, բարեվարքություն՝ 40 միավոր, պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձ և հմտություններ՝ 30 միավոր:

**2021թ. -ի սեպտեմբերի 10-ին անցկացված Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցույթի հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերը ենթարկվել են մշտադիտարկման**, որի արդյունքում վեր են հանվել թեկնածուների բարեվարքության և մասնագիտական գիտելիքների հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, թեկնածուներից մեկի աղջիկը 4,3 միլիոն ՀՀ դրամի նվիրատվություն է ստացել, որը, թեկնածուի պնդմամբ, տրվել է կնոջ հարազատ եղբոր կողմից՝ որպես հարսանեկան նվեր: Թեկնածուի կնոջ բանկային հաշվին կանխիկ մուտք է կատարվել նաև 2,8 միլիոն ՀՀ դրամի և 1600 ԱՄՆ դոլար չափով գումար, այնուհետև նույն չափով կանխիկ ելք է կատարվել, սակայն այդ տվյալները չեն ներկայացվել տարեկան հայտարարագրում: Ըստ թեկնածուի՝ նշված գումարը փոխառություն չի եղել և ինքը չի իմացել, թե ինչպես այն ներկայացնի հայտարարագրում: Բացի այդ, բարեվարքության հարցաթերթիկում չեն նշվել թեկնածուի կնոջ և դստեր ստացած եկամուտները՝ վերջին 3 տարում, ինչը, ըստ թեկնածուի՝ վրիպակ է: Թեկնածուներն ունեցել են նաև անշարժ գույքի հետ կապված անհամապատասխանություններ: Մասնավորապես, թեկնածուներից մեկը նշել է, որ տեղյակ չի եղել, որ կինը հայրական տան համասեփականատեր է հանդիսանում: Բացի այդ, կինը հանդիսացել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն, ինչպիսի տեղեկատվությունը, ըստ թեկնածուի՝ թյուրիմացաբար չի նշվել կնոջ հայտարարագրում, քանի որ ընտանեկան բիզնես է եղել, բայց չի աշխատել: Մասնագիտական գիտելիքների ստուգման շրջանակներում, թեկնածուներից մեկը նշել է, որ օրենսգրքերի իմացությունը միգուցե կարևոր է, բայց քանի որ պետական հաստիքների համար քիչ դիմողներ են լինում, փորձել է քայլ անել: Նշել է, որ նայել է Կոմիտեի նախագահի պարտականությունները, սակայն հստակ այնպիսի կետեր չեն եղել, որ պահանջեն ներպետական և միջազգային մեխանիզմների իմացություն, ավելի շատ պարտականությունները միտված են կառույցը համակարգելուն: Մեկ այլ թեկնածու նշել է, որ հակակոռուպցիոն քաղաքականություն ՀՀ-ում տարվում է վերջին 3 տարում, իսկ մինչև 2017թ. -ը հիշում է ապօրինի հարստացման հատկանիշներով հարուցված մոտ 4-ից 5 քրեական գործ: Մինչդեռ, հակակոռուպցիոն քաղաքականություն ՀՀ-ում տարվում է 2001թ. -ից, իսկ ապօրինի հարստանալը ՀՀ-ում քրեականացվել է 2016թ. -ի դեկտեմբերի 16-ին: Հարցազրույցի փուլի վերջնական հատվածում՝ համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի/տոմսի վերաբերյալ թեկնածուների կողմից իրականացվող վերլուծություններն ու դիրքորոշումները նույնպես ներկայացվել են ընդհանրական եղանակով, առանց քննարկվող հանցակազմերի բոլոր տարրերի ներկայացման կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկարագրի և դրանց արդյունքների օգտագործման շրջանակին:

Մրցույթի մասնակից 3 թեկնածուներն էլ հաղթահարել են հարցազրույցի փուլի անցողիկ շեմը, որից հետո սահմանված ընթացակարգին համապատասխան մրցույթում հաղթողների ցուցակը մրցութային խորհուրդը 2 օրվա ընթացքում ներկայացրել էր ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարությունը Կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակել է Սասուն Խաչատրյանին՝ վեց տարի ժամկետով: Նշենք, որ թեև գործող իրավակարգավորումներով, կարծես, բացառվում է Կոմիտեի նախագահի՝ մեկ անձի՝ վարչապետի կողմից նշանակումը, սակայն, միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ Կառավարության անդամների (վարչապետի, երկու փոխվարչապետի և նախարարների) ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը որոշիչ է:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ.</u>**

Իրավապահ մարմիններին առնչվող՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից համակարգված չափանիշների համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն, որ իրավապահ բոլոր մարմիններում ծառայության նշանակման համար առկա լինեն գնահատման և ընտրության պատշաճ ընթացակարգեր: Ընտրման գործընթացում պետք է առկա լինեն կանխակալությունը բացառող երաշխիքներ: ՀՀ-ում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: Կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային հանձնաժողով՝ կազմված Կոմիտեի նախագահի նշանակած Կոմիտեի երեք ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից, քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցչից (ընդհանուր՝ 5 անդամ): Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԿԿ նախագահից բացի, մնացած բոլոր աշխատակիցները ժամանակավոր պաշտոնակատար էին առաջին մրցույթի անցկացման պահին, սահմանվեց, որ Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմն այլ է, դրա մեջ մտնում են հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի երկու և Գլխավոր դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության մեկական ներկայացուցիչ (ընդհանուր՝ 5 անդամ): Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովը ձևավորվել է 2021թ. -ի դեկտեմբերի 2-ին: Հանձնաժողովի նախագահը փոփոխվել է 3 անգամ: Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև երեք միջազգային փորձագետներ: Հատկանշական է, որ ինչպես Կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհրդում, այնպես էլ Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցութային հանձնաժողովում ընդգրկվելու հայտ է ներկայացրել միայն Զարգացման իրավունք միջազգային կազմակերպությունը (IDLO, փորձագետ Վիտալի Կասկո):

Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, թեստավորման, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերով: Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն հանրագումարային միավոր սահմանվել է 100 միավոր, որից 50 միավորը՝ թեստավորման փուլում ստացվող առավելագույն միավորն է (անցողիկ միավորը առավելագույն 50 միավորի 70%-ն է), 50 միավորը՝ հարցազրույցի փուլում մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից թեկնածուին տրվող գնահատման առավելագույն միավորը (անցողիկ միավորը առավելագույն 50 միավորի 70%-ն է, որից առնվազն 22 միավորը պետք է լինի բարեվարքության համար): Նշենք, որ հարցազրույցի փուլի համար առավելագույն 50 միավորն իր հերթին բաշխվում է ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների՝ անձնական որակներ՝ 15 միավոր, բարեվարքություն՝ 29 միավոր, պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումներ՝ 6 միավոր:

**ԻՊԱՍ-ի կողմից դիտարկման է ենթարկվել Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2022թ. -ի օգոստոսի 18-ին անցկացված մրցույթի թեստավորման փուլը**, որը կազմակերպվել էր միաժամանակ Կոմիտեի բոլոր հայտարարված թափուր ինքնավար պաշտոնների համար, այդ թվում՝ Կոմիտեի նախագահի տեղակալների: Հայտարարված 39 թափուր հաստիքների համար դիմել է ընդհանուր թվով 47 հավակնորդ, որից 2-ը (4%)՝ իգական սեռի ներկայացուցիչ: Գրավոր թեստավորման փուլը հաղթահարել է 43 թեկնածու (որից 2-ը (5%)՝ իգական սեռի ներկայացուցիչ): Թեկնածուներից 4-ը (9%) ստացել են անցողիկ՝ 35 միավորից պակաս միավոր: Մրցույթը հաղթահարած թեկնածուների միջինացված միավորը՝ 46-ն էր, նվազագույնը՝ 36-ը, առավելագույնը՝ 50-ը (3 թեկնածու): Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, մրցույթը սկսվել է զգալի ուշացումով, ինչի արդյունքում Հանձնաժողովը ստիպված է եղել աշխատել 8 ժամից ավելի՝ առանց ընդմիջումների: Բացի այդ, թեստերի ամփոփաթերթերը տպվել են երկու փուլով, որոնց մի մասում առկա է եղել տպագրական վրիպակ, մի քանի դեպքում, միևնույն համարի ամփոփաթերթիկներ ստացել են 2 հավակնորդներ և այլն: Ընդհանուր առմամբ, թեստային առաջադրանքներն իրենց բնույթով թույլ չեն տվել ստուգել թեկնածուների վերլուծական հմտությունները, իսկ հարցազրույցի փուլում մասնագիտական գիտելիքի ստուգում չպետք է իրականացվի: Միջազգային չափանիշներով կարևորվում է նաև հոգեբանական թեստերի անցկացումը, մինչդեռ գործնականում մրցութային հանձնաժողովում չի ներգրավվել հոգեբան, իսկ գրավոր թեստավորման փուլի հարցաշարերը չեն ներառել հոգեբանական, ինչպես նաև արժեքային հարցեր, որոնք ընդհանուր առմամբ վեր են հանում թեկնածուի բռնության հակումը, անազնվությունը, վերաբերմունքը էթիկայի հիմնարար նորմերի նկատմամբ և այլն:

**ԻՊԱՍ-ի կողմից մշտադիտարկման են ենթարկվել նաև Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2022թ.-ի հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 3-ին անցկացված հարցազրույցների փուլերը:** Թեկնածուներից մի մասը հարցազրույցի օրվա դրությամբ հանդիսացել են Պետական եկամուտների կոմիտեի ծառայող, Քննչական կոմիտեի քննիչ, փաստաբան, Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակից, զբաղվածություն չունեցող անձ և այլն: Դիմող չի եղել Ազգային անվտանգության ծառայությունից: Հարցազրույցի երկու օրն էլ Հանձնաժողովն աշխատել է մինչև ժամը 23:00-ն: Հանձնաժողովի երկարաժամյա աշխատանքը պայմանավորված է եղել մրցույթն անցկացնելու համար նախատեսված ժամկետները պահպանելու անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, հոկտեմբերի 1-ին հրավիրվածներից ոչ բոլորն են հասցրել մասնակցել հարցազրույցին, քանի որ օրվա ընթացքում հանձնաժողովը հասցրել է լսել հրավիրված 28 թեկնածուից միայն 22-ին: Սեղմ ժամկետում հարցազրույցներ կազմակերպելու և անցկացնելու պատճառով առաջացել է նաև մեկ այլ խնդիր. 43 թեկնածուի վերաբերյալ բարեվարքության գնահատման եզրակացությունների թարգմանությունը միջազգային փորձագետին տրամադրվել է հարցազրույցի անցկացման նախօրեին, ուստի վերջինս չի հասցրել պատշաճ պատրաստվել առաջին օրը հարցազրույցի հրավիրված բոլոր 28 (փաստացի 22) թեկնածուներին հարցեր ուղղելու համար: Բացի այդ, մի քանի անգամ արձանագրվել է թարգմանության ապահովման խնդիր՝ տեխնիկական պատճառներով, և թեկնածուն միջազգային փորձագետի հարցը լսել է ռուսերեն: Հարցազրույցի անցկացման օրերին Հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են լսել բոլոր թեկնածուներին, քանի որ բացակայել են սենյակից, որոշ դեպքերում՝ մի քանի ժամով: Արձանագրվել են դեպքեր, երբ թեկնածուին լսել են ընդամենը երկու անդամ /հինգից/ և միջազգային փորձագետը, ինչպիսի պայմաններում վիճահարույց է նաև Հանձնաժողովի իրավազորության հարցը:

Նշենք, որ թեկնածուները մինչև հարցազրույցի մասնակցելը փաստացի չէին տեղեկացվել ԿԿՀ եզրակացության բովանդակության մասին, անգամ առ այն, թե ինչ տեսակի եզրակացություն է տվել ԿԿՀ-ն՝ տեղյակ չլինելով, որ կարող են դիմել և ստանալ այն: Գտնում ենք, որ նման պրակտիկան պետք է վերանայվի, և անձը պետք է ստանա իր վերաբերյալ

եզրակացությունը, անկախ սեփական նախաձեռնությամբ դրանք պահանջելու հանգամանքից, քանի որ, որպես կանոն, ԿԿՀ-ն թեկնածուի պահանջով տրամադրում է վերջինիս վերաբերյալ կազմված եզրակացությունն ամբողջությամբ, սակայն գործնականում թեկնածուներն այդ իրավունքի մասին պատշաճ իրազեկված չեն և չեն օգտվում դրանից մինչև հարցազրույցի փուլը: Բացի այդ, գտնում ենք, որ ԿԿՀ եզրակացության դերի բարձրացման և մրցույթ անցկացնող պետական մարմնի նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանման մեկ այլ մեխանիզմ է՝ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ ԿԿՀ-ի կողմից տրված եզրակացությունների առնվազն եզրափակիչ մասի և վերհանված խնդիրների հրապարակումը ԿԿՀ կայքում և բաց հանրային հարթակներում:
Հարցազրույցի փուլերի ընթացքում արձանագրվել են նաև հայտարարագրի լրացման հետ կապված խնդիրներ: 43 թեկնածուներից միայն 2-ը (5%) թույլ չեն տվել խախտումներ հայտարարագրերի լրացման հետ կապված: Հիմնական խախտումներն արձանագրվել են եկամուտներ բաժնի լրացման հետ: Խնդիրներ են արձանագրվել կապված դրամական միջոցների և գույքի ձեռքբերման համար միջոցների ծագման աղբյուրի հետ: Հատկանշական է, որ և՛ ԿԿՀ-ն, և՛ միջազգային փորձագետը մտահոգություն են հայտնել խոշոր ֆինանսական միջոցները կանխիկ ձևով պահելու վերաբերյալ, քանի որ դրանք կարող են դուրս մնալ վերահսկողությունից ծառայողի ապագայում ապօրինի ծագում ունեցող միջոցների օրինականացման համար: Մյուս խումբ արձանագրված խնդիրներն առնչվել են անշարժ գույքի հետ կապված հարցերին: Որպես լավ փորձ միջազգային փորձագետը հատուկ անդրադարձել է այն թեկնածուներին, ովքեր մինչև հայտարարագիր լրացնելը դիմել են Կադաստրի Կոմիտե՝ ճշտելու իրենց անունով պետական գրանցում ստացած գույքի մասին տվյալները: Թեկնածուների մի մասի վերաբերյալ հայտնվել են մտահոգություններ քննություն վարելու անկախության և անաչառության համատեքստում: Որոշ թեկնածուների վերաբերյալ առկա են եղել բացասական ենթատեքստով հրապարակումներ կամ այլ անձանց կողմից տրված կարծիքներ: Մշտադիտարկմամբ վեր են հանվել նաև թեկնածուների պատասխանատվության ենթարկված լինելու մասին տեղեկություններ. թեկնածուներից 27-ը (63%) ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, 16-ը (37%) ենթարկվել են վարչական պատասխանատվության, 25-ը (58%) նաև քրեական գործերի համատեքստում ունեցել են մեղադրյալի, կասկածյալի կամ վկայի կարգավիճակ: Մրցույթը հաղթահարած 32 թեկնածուներից 11-ի (34%) դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցվել է քրեական գործ: Նրանցից 9-ի դեպքում հանցադեպի կամ հանցակազմի բացակայությամբ գործը կարճվել է նախաքննության փուլում, իսկ 2-ի՝ դատարանում՝ վարույթ չընդունելու մասին որոշում կայացնելիս (դեռ բողոքարկման փուլում էր հարցազրույցի պահին): Քաղաքական դիրքորոշում ունենալու վերաբերյալ հարցը տրվել է 43 թեկնածուից միայն 15-ին (35%)՝ հաշվի առնելով թեկնածուի ծագման մարզը, նախկինում մարտական գործողությունների մասնակցելու կամ ընտանիքի անդամների կողմից քաղաքականությամբ զբաղվելու հանգամանքը:
Այսպես, Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթի արդյունքներով 43 թեկնածուից 32-ը (74%) հաղթահարել են հարցազրույցի փուլը և ստացել դրական միավորներ (ընդհանուր միավոր՝ 35 և ավելի բարձր, բարեվարքության միավոր՝ 22 և ավելի բարձր), որոնցից 29-ը (91%) մինչ մրցույթը հանդիսացել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոններ զբաղեցնողի պաշտոնակարար, 1-ը՝ փաստաբան, 1-ը՝ ՊԵԿ-ի աշխատակից, 1-ը՝ գործազուրկ (նախկին քննիչ): Մրցույթը հաղթահարած թեկնածուներից միայն մեկն է եղել իգական սեռի ներկայացուցիչ: Հատկանշական է, որ դրական միավոր ստացած 32 թեկնածուներից 14-ի (44%) վերաբերյալ միջազգային փորձագետը տվել է բացասական կարծիք (խորհրդատվական բնույթի): 32 դրական միավոր ստացած թեկնածուներից մեկը ունեցել են ԿԿՀ բացասական եզրակացություն, որի հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և կարգապահական պատասխանատվության և

աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը: Նշված թեկնածուի վերաբերյալ միջազգային փորձագետը ևս տվել է բացասական կարծիք: Նշված թեկնածուն նշանակվել է ավագ քննիչի պաշտոնին:
Նշենք, որ օրենսդրական մակարդակով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հնարավորություն չի տրվել դիտարկելու Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթի փուլերը:

**<u>ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ</u>**. Գործող իրավակարգավորումների համաձայն, մինչև երեք դիտորդի մասնակցության հնարավորություն է նախատեսված միայն Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցութային հանձնաժողովի աշխատանքներին: Դիտորդի թեկնածություններ կարող են առաջադրել այն հասարակական_կազմակերպությունները, որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառություն: Ընդ որում, հասարակական կազմակերպության կողմից առաջադրված դիտորդը նույնպես պետք է ունենա հակակոռուպցիոն ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, ի տարբերություն Հանձնաժողովի այն անդամի, որը ներկայացնում է ՔԿՀ. վերջինիցս պահանջվում է առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձառություն: Գտնում ենք, որ Կոմիտեի ինքնավար թափուր պաշտոնների թեկնածուների թեստավորման և հարցազրույցի փուլերին մասնակցելու համար ՔՀԿ-ներին ներկայացված հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառության պահանջը և կազմակերպությունից զատ, նաև տվյալ կազմակերպության առաջադրած կոնկրետ թեկնածուին ներկայացված հակակոռուպցիոն ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունենալու պահանջն արհեստականորեն խոչընդոտ են ստեղծում ոլորտային ՔՀԿ-ների համար: Անգամ դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման համար անցկացվող որակավորման գրավոր քննության կազմակերպման կարգով հայտատու հասարակական կազմակերպության ներկայացուցիչ դիտորդին ներկայացված չեն նման պահանջներ: Ստացվում է, հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքում ձևավորված, միևնույն՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող երկու մարմիններում (դատարան և Կոմիտե), դեռ ավելին, նույնիսկ միայն Հակակոռուպցիոն կոմիտեի տարբեր ծառայողների թեկնածուների ընտրության գործընթացում նախատեսված է դիտորդների ներգրավման տարբերակված մոտեցում՝ առանց օբյեկտիվ հիմնավորումների:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ/ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ.</u>** Մինչ Կոմիտեի նախագահի կողմից համապատասխան պաշտոնում նշանակում կատարելը, ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում: Անձն ազատվում է ուսումնառությունից, եթե ունի դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեությունը դադարեցնելուց հետո չի անցել հինգ տարի: Այս կարգավորումը մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ վերջին տարիներին անընդհատ փափոխվող և լրացվող օրենսդրության պայմաններում՝ հատկապես հակակոռուպցիոն ոլորտում, այն չի կարող թեկնածուի գիտելիքների երաշխիք հանդիսանալ: **Հատկանշական է, որ մրցույթը հաղթահարած բոլոր՝ թվով 32 թեկնածուները չեն անցել մասնագիտական պատրաստում, քանի որ համապատասխանել են օրենքով սահմանված ուսումնառությունից ազատման պահանջներին:** Նշենք, որ 2022թ. -ի նոյեմբերի 30-ի դրությամբ՝ Կոմիտեի ստեղծումից մոտ մեկ տարի անց, ՀՀ արդարադատության ակադեմիայի

պաշտոնական հին և նոր կայքերում հրապարակված Խորհրդի որոշումների շարքում, առկա չէ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական պատրաստման, տարեկան վերապատրաստման կամ հատուկ ուսուցման ծրագրերի վերաբերյալ Խորհրդի որևէ որոշում: Առհասարակ, կոռուպցիային առնչվող դասընթացներ Ակադեմիայում նախատեսված են միայն հեռաուսուցման տարբերակով՝ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» թեմայով: Ընդհանուր առմամբ, չնայած վերապատրաստման դրույթներ նախատեսող ռազմավարություններին և օրենքներին, փաստացի Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման դասընթացների քիչ դեպքեր են հայտնի: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների համար 2022թ. -ի ապրիլի 1-ին, հուլիսի 25-ին և 26-ին անցկացված մրցույթների հարցազրույցների 2-րդ փուլի արդյունքում հաղթող ճանաչվածներից 27-ը ազատվել են վերապատրաստումից, իսկ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նշանակման գործընթացն իրականացվել է 2022թ. -ի հոկտեմբեր ամսին, ուստի վերապատրաստման կարգը հաստատվելու է նշանակումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, Կոմիտեի բոլոր ծառայողները փաստացի ազատված են Արդարադատության ակադեմիայում նախատեսված ուսումնառությունից: Նշենք, որ Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների/ ծառայողների վերապատրաստումն իրականացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում:

Հատկանշական է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների համար նախատեսված չէ մասնագիտական ուսուցում, փորձաշրջան և վերապատրաստում անցնելու օրենսդրական պահանջ՝ նշանակումից առաջ և հետո: Վերջիններս ենթակա չեն նաև ատեստավորման: Գտնում ենք, որ այս իրավակարգավորումները ռիսկեր են պարունակում Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների շարունակական մասնագիտական զարգացման տեսանկյունից՝ հատկապես օրեցօր փոփոխվող, լրացվող և կատարելագործվող հակակոռուպցիոն ոլորտի պայմաններում:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</u>** Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, այսինքն՝ Կոմիտեի նախագահը: Չնայած Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ներգրավված են Կոմիտեի տարբեր վարչություններ, միևնույնն է, Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը կենտրոնացված է մեկ անձի՝ Կոմիտեի նախագահի ձեռքում: Բազմիցս՝ օրենսդրական նախագծերի շրջանակներում, քննարկվել է Կոմիտեում կարգապահական հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտության հարցը, որը, սակայն, մինչ օրս կյանքի չի կոչվել: Գտնում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել կարգապահական հանձնաժողով՝ քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավմամբ, դիտորդների, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցությամբ, անհրաժեշտ է գործող օրենքը լրացնել նախնական ուսումնասիրություն/ծառայողական քննություն կատարելու առիթներով (օրինակ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները) և հիմքերով (օրինակ՝ մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումները), նախատեսել ծառայողական քննության փուլերը և այլն:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՁԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ</u>**. Կոմիտեի ծառայողներն օժտված են մի շարք նյութական, սոցիալական և այլ երաշխիքներով, որոնց թվում է նաև զենք կրելու իրավունքը: Կոմիտեի ծառայողի ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ

միջոցները պահելու և կրելու կարգը պետք է սահմանվեր Կոմիտեի նախագահի հրամանով, սակայն նման հրաման մինչ օրս չի մշակվել: Զուգահեռաբար, Կոմիտեի կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվել է Օրենքը լրացնել նոր՝ 7.1 գլխով՝ «Կոմիտեի ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը (գործադրում և օգտագործում): Կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության միջոցները» վերնագրով: Նախագծի վերաբերյալ գրավոր հիմնավորում չի ներկայացվել: Նախագիծն ունի հակասություններ իրավապահ մարմինների կողմից ուժի կիրառման միջազգային չափանիշների հետ: Նշենք նաև, որ զենքի կիրառման հետ կապված միևնույն օրը ուժի մեջ մտած երկու օրենքների միջև առկա է եղել անհամապատասխանություն, որը կարգավորվել է ավելի ուշ՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով. մասնավորապես, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով զենք կրելու իրավունքը Կոմիտեի ծառայողին տրվում էր որպես իր անվտանգության և անձնական պաշտպանության միջոց, ընդ որում՝ տրվում է ծառայողական հաշվեցուցակային զենք, իսկ «Զենքի մասին» ՀՀ օրենքով Կոմիտեի ծառայողին տրվում էր ոչ թե ծառայողական, այլ մարտական զենք, որը նախատեսված է ոչ թե ծառայողի անձնական պաշտպանության, այլ օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար:

**<u>ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</u>** «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և նախաքննության իրականացումը վերապահվել էր Կոմիտեին, այսինքն նախաքննությունը 2003թ. -ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարելու էին Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները: Սակայն, 2022թ. -ի մայիսի 25-ին քննչական ենթակայության դրույթները փոփոխվել են, սահմանելով, որ նախաքննությունը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են Կոմիտեի քննիչները, եթե հանցագործությունները կատարվել են ՀՀ նախորդ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պաշտոնատար անձանց կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված, իսկ նախաքննությունը պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական լիազորություններն անցնելու և իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են Կոմիտեի քննիչները, բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և զուգորդվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով: Բացի այդ, գործող քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթներին համապատասխան, 2023թ. -ի հունվարի 1-ից ՀՀ ողջ տարածքում կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը ամբողջությամբ վերապահվելու էր Հակակոռուպցիոն կոմիտեին, սակայն 2022թ. -ի դեկտեմբերի 16-ին ընդունված նախագծով սահմանափակվել է Կոմիտեի քննությանը ենթակա քրեական գործերի շրջանակը՝ 2023թ. հունվարի 1-ից Կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված՝ նոր քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթների մի մասի քննությունը պատվիրակելով այլ քննչական մարմիններին: Այսպես, Կոմիտեի ձևավորման օրվանից ի վեր օրակարգային քննարկումների թեմա է Կոմիտեի ծանրաբեռնվածության խնդիրը: Նշվածի հիման վրա բազմիցս կատարվել են օրենսդրական փոփոխություններ ու լրացումներ՝ նեղացնելով Կոմիտեի քննությանը ենթակա հանցագործությունների շրջանակը՝ բացառելով մասնավոր կոռուպցիոն հանցագործությունների, ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով, բռնության գործադրման կամ գործադրելու սպառնալիքով զուգորդված, զենք կամ հատուկ միջոց

օգտագործելով կատարված հանցագործությունների քննությունը: Սակայն, նույնիսկ հընթացս կատարված այդ փոփոխությունների պայմաններում, Կոմիտեն շարունակում է բարձրաձայնել իր աննախադեպ ծանրաբեռնվածության, ռեսուրսների անբավարարության մասին և ներկայացնում նոր օրենսդրական նախագծեր՝ կապված քննչական ենթակայության կանոնների վերանայման հետ: Այս ամենը վկայում է ի սկզբանե սխալ ռազմավարական պլանավորման կամ առհասարակ պլանավորման բացակայության մասին, քանզի Կոմիտեի ձևավորման հիմքում ընկած ռազմավարական գաղափարներն ու նպատակները մնացել են անկատար:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ.</u>** Չնայած «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն չի սահմանվում թափանցիկությունը՝ որպես Կոմիտեի գործունեության սկզբունք, սակայն Կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքի պահպանմամբ, որը ներառում է հանրությանն իր գործունեության մասին տեղեկացնելը, Կառավարություն և Ազգային ժողով նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում ներկայացնելը և այն իր պաշտոնական կայքէջում հրապարակելը, նույն կայքէջում գործունեության մասին կիսամյակային ամփոփ տեղեկատվություն ներկայացնելը և այլն: Փաստացի, Կոմիտեի գործունեությանն ու մանդատին առնչվող տեսահոլովակները սակավաթիվ են, որոնք պատրաստվել են դեռևս Կոմիտեի ձևավորման սկզբնական փուլում և ամբողջովին չեն ներկայացնում Կոմիտեի գործիքակազմը և հնարավորությունները: Կոմիտեին առնչվող մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծեր նույնպես պատշաճ ընթացակարգով չեն հրապարակվում և ներկայացվում հանրային քննարկման: Կոմիտեի գործունեության կիսամյակային և տարեկան հաղորդումների ուսումնասիրությունից երևում է, որ դրանցում չեն ամփոփվում օրինակ՝ կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, Կոմիտեի բյուջեի կատարողականի հաշվետվությունները, Կոմիտեի նախագահի հրամանները և այլն, որի արդյունքում սահմանափակում է քաղաքացիների հասանելիությունը Կոմիտեի գործունեությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեի նախագահն է սահմանում Կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվություններում ներառվող հարցերի շրջանակը, ուստի գտնում ենք, որ Կոմիտեի նախագահի նախաձեռնությամբ հարցերի ներկայիս շրջանակը պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով առնվազն նշված հարցերը:

**<u>ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ.</u>** Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական ինքնուրույնությունը դիտարկվում է որպես գործունեության առանձին սկզբունք: Կոմիտեի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Կոմիտեն յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Մինչև 2022թ. -ը Կոմիտեին առնչվող համապատասխան ծրագրերի և միջոցառումների գծով կատարող էր սահմանվել ՀՀ արդարադատության նախարարությունը: Սակայն, արդեն 2022թ. -ին Հակակոռուպցիոն կոմիտեն պետական բյուջեով դիտարկվել է որպես առանձին մարմին: Ինչպես 2021թ. -ին, այնպես էլ 2022թ. -ին Հակակոռուպցիոն կոմիտեին և ՀՀ արդարադատության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցները բազմիցս ենթարկվել են փոփոխությունների ՀՀ կառավարության որոշումներով, ինչը վկայում է կարիքների սխալ գնահատման, բյուջեի թերի պլանավորման և այդ գործընթացի նկատմամբ հայտատուների ոչ բավարար պատասխանատվության մասին: Նշենք, որ Կոմիտեի շենքային պայմանների ապահովմանն ուղղված աշխատանքները մեկնարկել են դեռևս 2021թ. -ից, իսկ Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ձևավորման հարցը խնդրահարույց է՝ պայմանավորված Կոմիտեի

սահմանափակ թվով հաստիքներով: Դեռ ավելին, պետական բյուջեից միջոցներ չեն նախատեսվել այս նպատակով:
Հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել էր դեռևս 2021թ. -ի հոկտեմբերի 23-ին, սակայն չուներ դեպոզիտային հաշիվ, այն ստեղծվել է կոմիտեի ստեղծումից մեկ տարի անց՝ 2022թ. -ի հոկտեմբերի 26-ին:
Բացի այդ, նշենք, որ Կոմիտեի ծառայողների աշխատավարձի չափն էականորեն տարբերվում է մյուս քննչական մարմինների ծառայողների աշխատավարձի չափից: Կոմիտեի ծառայողները, բացի հիմնական աշխատավարձից ունեն նաև լրացուցիչ աշխատավարձի, մասնավորապես հավելումների (*պաշտոնային դրույքաչափի (հիմնական աշխատավարձի) 100 տոկոսի չափով*) և հավելավճարների (*դասային, դիվանագիտական աստիճանների, տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու, կոչումների, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի, օտար լեզուների իմացության համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում*) իրավունք:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով՝ սահմանել չափորոշիչներ և պայմաններ, որոնց հիման վրա, ՀՀ կառավարությունը ընտրում է Կոմիտեի նախագահի 3 թեկնածուներից մեկին և նշանակում պաշտոնի:
- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով՝ սահմանել չափորոշիչներ և պայմաններ, որոնց հիման վրա, Կոմիտեի նախագահը ընտրում է Կոմիտեի նախագահի տեղակալի՝ մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուներից մեկին և առաջարկում վարչապետին նրա թեկնածությունը՝ պաշտոնում նշանակում կատարելու նպատակով:
- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով՝ Կոմիտեում ստեղծել կարգապահական հանձնաժողով՝ դրանում նախատեսելով քաղաքացիական հասարակության կառույցի ներկայացուցիչների անդամակցություն, հանձնաժողովի աշխատանքներին դիտորդի, ինչպես նաև դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցություն, ամրագրել ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ, որպես նախնական ուսումնասիրություն կատարելու առիթ նախատեսել ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները, ինչպես նաև որպես Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք նախատեսել մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումները:
- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով՝ ուղղակիորեն ամրագրել Կոմիտեի գործունեության թափանցիկության սկզբունքը:
- Նախատեսել օրենսդրական մեխանիզմներ՝ կարգապահական վարույթների բողոքարկման համար՝ այդ թվում դատական կարգով:
- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով՝ Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների համար նույնպես նախատեսել վերապատրաստում անցնելու օրենսդրական պահանջ, հաշվի առնելով հակակոռուպցիոն ոլորտի առանձնահատկությունները և անընդհատ փոփոխվող օրենսդրական կարգավորումները:
- Կոմիտեի բոլոր ծառայողների՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համար սահմանել վերապատրաստումներից ազատման միանման հիմքեր:

- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով՝ Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցների համար հավելավճար սահմանել ոչ միայն Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզության գործունեություն իրականացնող ստորաբաժանումներում ծառայության ժամանակահատվածը, այլև ՀՀ ցանկացած քննչական կամ դատախազական մարմնում ծառայության ստաժը (ինչպես Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց դեպքում է):
- https://anti-corruption.gov.am/am/ պլատֆորմում և www.gov.am կայքում հրապարակել ինչպես 2019-2022թթ. -ի ընթացքում գումարված, այնպես էլ հընթացս գումարվող Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստերի, ներառյալ դռնփակ նիստերի մասին տեղեկատվությունը:
- Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2023թ. -ի հաղորդակցման գործողությունների ծրագիրը:
- 2023-2026թթ. -ի հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նախագծով սահմանել Կոմիտեի նոր շենքային համալիրի կառուցման, տարածքային ստորաբաժանումների ձևավորման կատարման ժամկետները:
- Կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվություններով անդրադառնալ Կոմիտեի ծառայողների նկատմամբ իրականացված ծառայողական քննությունների վիճակագրությանն ու բովանդակային նկարագրին, ինչպես նաև քրեական գործերով՝ հանցագործության հետևանքով պետությանը և հասարակությանը պատճառված և վերականգնված վնասներին:
- Կոմիտեի գործունեության հաշվետվողականության սկզբունքի, ինչպես նաև Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագրի ներքո իրականացնել Կոմիտեի ընթացիկ գործունեության, Կոմիտեի մանդատի և լիազորությունների շրջանակի մասին քաղաքացիների պատշաճ իրազեկում՝ հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում, ՁԼՄ-ներում տեսահոլովակների, տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով:
- Կոմիտեին առնչվող և/կամ Կոմիտեի կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը ներկայացնել հանրային քննարկման ինչպես իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ https://www.e-draft.am, այնպես էլ Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում՝ https://anticorruption.am/hy/:
- Վերանայել Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթին դիտորդի ներգրավման պայմանները՝ հակակոռուպցիոն ոլորտում գործունեության 3 տարվա փորձառության պահանջ նախատեսելով առավելագույնը դիտորդի թեկնածուին առաջադրած կազմակերպության համար, ոչ թե անձամբ դիտորդի թեկնածուի:
- ՔՀԿ-ներին հնարավորություն ընձեռել դիտարկելու Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթի փուլերը, բացառությամբ անձը ծածկագրված և գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ լիազորություններ իրականացնող ծառայողների թեկնածուների ընտրության մրցույթի:
- Իրականացնել Կոմիտեի այն պաշտոնների ծառայողների բարեվարքության ստուգում, որոնց անձը ծածկագրված է, միաժամանակ ապահովելով այդ եզրակացությունների գաղտնիությունը:
- Կոմիտեի ծառայողների պաշտոնների համալրման մրցույթների շրջանակներում, թեկնածուներին նախապես տրամադրել իրենց վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված բարեվարքության վերաբերյալ

եզրակացությունները՝ անկախ թեկնածուի կողմից սեփական նախաձեռնությամբ նման պահանջ ներկայացված լինելու հանգամանքից:

- Մշակել և ընդունել Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական պատրաստման, ինչպես նաև տարեկան վերապատրաստման կամ հատուկ ուսուցման ծրագրերի վերաբերյալ Խորհրդի որոշում, կազմել ուսումնական պլան, ուղեցույցեր, դրանք հրապարակելով ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում՝ https://aoj.am/full-time-education:
- ՄԺԾԾ հայտերը կազմել բազմակողմանի ուսումնասիրության և կարիքների գնահատման հիման վրա, նվազագույնի հասցնելով տարվա ընթացքում պետական բյուջեից հատկացված միջոցների փոփոխությունները՝ ՀՀ կառավարության որոշումներով: